



Ձիաց մեր հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուլթյուններ

Ի՛նչ ՏԱՐԻ

Դ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread
գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածուլթյունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղդասյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76, (010) 54-35-78

Էլեկտրոնային փոստ՝ amaa.armenia@amaa.am

Աճելու համար ժամանակ է հարկավոր

Փոքրիկ Շարլոտի՝ մանկամտուր հաճախելու առաջին օրը նրանից խնդրեցին իրեն նկարել: Նրա արվեստի գործը ներկայացնում էր մեծ շրջանակաձև մի մարմին՝ քառանկյուն գլխով և երկու փոքր կտր աչքերով: Երբ մանկամտուրի տարիները ավարտին հասան, դարձյալ նրան խնդրեցին նկարել իրեն: Այն ներկայացնում էր ժպտուն դեմքով ու գեղեցիկ կարմիր հյուսված մազերով փոքր մի աղջիկ՝ գունավոր զգեստներ հագած: Դպրոցը գործածել էր մի պարզ և դյուրին միջոց՝ ցույց տալու այն տարբերությունը, որ ժամանակը կարող է անել մեծանալու ընթացքում:

Մինչ ընդունում ենք, թե ժամանակ է պետք, որ մանուկները մեծանան, շատ անգամ անհամբեր ենք լինում մեր կամ մեր հավատակից բարեկամների համար, որոնք դանդաղ հոգևոր աճ են ներկայացնում իրենց կյանքում: Մենք ուրախանում ենք, երբ տեսնում ենք «Հոգու պտուղները» (Գաղ. 5.22-23), սակայն տրտմում ենք, երբ տեսնում ենք մեղքի տանող ընտրություն: Եբրայեցիների նամակի հեղինակը այս մասին է խոսում, երբ գրում է եկեղեցուն. «Որովհետև ժամանակին նայելով պետք է ուսուցանող լինեիք. բայց կրկին կարոտ եք սովորելու, թե ի՛նչ են Աստծո խոսքերի առաջին նշանազերերը, և կաթի կարոտողներ եղաք և ոչ թե հաստատուն կերակուրի» (Եբ. 5.12):

Մինչ շարունակում ենք Հիսուսի հետ մտերմություն մշակել, աղոթե՛նք իրար համար և համբերատարություն մոտենա՛նք նրանց, ովքեր սիրում են Աստծուն, սակայն մաքառում են հոգևոր աճում արձանագրելու համար: «Սիրո մեջ ճշմարիտ լինելով՝ ամեն բանով աճենք Քրիստոսի մեջ, որ գլուխն է» (Եփ. 4.15):

Աղոթք - Տեր, Քեզ ենք սիրում: Մինչ Քեզ հետ ենք քայլում, օգնիր մեզ, որ քաջալերություն ստանանք ու նաև քաջալերենք ուրիշներին: Ամեն:

Սիրով արտասանված ճշմարտության խոսքերը մեզ կարող են առաջնորդել Քրիստոսով աճելու:

Կարդա՛ Եփես. 4.11-16

Բայց սիրո մեջ ճշմարիտ լինելով՝ ամեն բանով աճենք Քրիստոսի մեջ, որ գլուխն է: Եփ. 4.15

Կատարյալ աղոթքի ընկեր

Մեզմ ձայները քնքուշ են թվում, կարծես լսում ենք մեզ սիրող մի մարդու աղոթքը մեզ համար: Երբ լսում ենք բարեկամի ջերմեռանդ աղոթքը, Աստծո Հոգով լցված ու ներշնչված՝ կարծես երկինք ու երկիր իրար են ողջագուրում:

Որքա՛ն լավ է իմանալ, որ մեր աղոթքները երկինք են հասնում՝ Աստծո մեր հանդեպ ունեցած բարուլթյան համար: Երբեմն երբ աղոթում ենք, մաքառում ենք շիտակ բառեր արտասանելու համար և անկարող ենք զգում մեզ: Սակայն Հիսուսը մեզ սովորեցրեց «ամեն ժամանակ աղոթք անել ու չվհատվել» (Ղուկ. 18.1): Աստծո Խոսքը ցույց է տալիս պատճառներից մեկը, որ մենք

կարող ենք անդադար աղոթք անել, և Հիսուսը Ինքը «Աստծու աջ կողմին է, որ մեզ համար բարեխոս էլ է» (Հռոմ. 8.34):

Մենք երբեք միայնակ չենք աղոթում, որովհետև Հիսուսը մեզ համար է աղոթում: Նա մեզ լսում է, երբ աղոթում ենք ու բարեխոսում Հորը մեզ համար: Մենք մտահոգվելու կարիք չունենք մեր բառերի՝ պերճախոս լինելու համար, որովհետև ոչ մեկը չի հասկանում մեզ Հիսուսի նման: Նա ամեն կերպ մեզ օգնում է ու մեր կարիքները ներկայացնում Հայր Աստծուն: Նա նաև գիտի, թե երբ մեր ակնկալած աղոթքների պատասխանները մեզ օգտակար չեն, ու նկատի է առնում մեր խնդրանքներն ու մտահոգությունները կատարյալ իմաստով լայամբ ու սիրով:

Հիսուսը աղոթքի կատարյալ ընկերն է, այն բարեկամը, որ մեզ համար բարեխոսում է անչափելի ազնվությամբ: Իր աղոթքները մեզ համար բառերից պակի գեղեցիկ են ու մեզ պիտի քաջալերեն՝ շնորհակալ սրտով միշտ աղոթելու:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ սիրով ես բարեխոսում ինձ համար: Օգնիր, որ կարողանամ Քեզ ծառայել այսօր իմ սիրով ու աղոթքներով: Ամեն:

Չիսուսի հետ աղոթելուց ավելի մեծ առանձնաշնորհում չկա՛:

Կարդա՛

Չռոմ. 8.31-34

Քրիստոսը... Աստծու աջ կողմին է, որ մեզ համար բարեխոս էլ է: Չռոմ. 8.34

Ճգնաժամի ծնունդ

Մարկը հիշում է իր մանկության օրերից մի դրվագ, երբ հայրը իրենց ընտանիքը հավաքեց՝ տեղեկացնելու, թե ընտանեկան մեքենան փչացել էր, ու ամսվա ավարտին իրենց գումարը պիտի վերջանար: Մարկի հայրը մի պահ լռելուց հետո աղոթեց: Ապա խնդրեց սպասել Աստծո պատասխանին:

Այսօր Մարկը հիշում է, թե ինչպես Աստված հասավ իրենց զարմանալի կերպով: Մի բարեկամ նորոգեց մեքենան: Անակնկալ դրամատոմս հասավ ու կերակուր՝ իրենց դռան առջև: Դյուրին եղավ Աստծուն փառաբանել, և նրանց այդ շնորհակալությունը կոփվեց ճգնաժամի մեջ:

56-րդ Սաղմոսում, երբ Դավիթը հոչակում է «Դու երկինք ես բարձրացել, Աստված՝» (Հմ. 6), մենք կարող ենք երևակայել նրան, երբ հիացումով դիտում է շքեղ Միջին Արևելյան գիշերային երկինքը կամ երգում է Ուխտի Տապանակի առջև եղած փառաբանությունն պաշտամունքի ընթացքում: Սակայն իրականում նա, վախենալով իր կյանքի համար, պատասպարվել էր քարանձավի մեջ: Դավիթն ասաց. «Գազանների միջից ազատեց ինձ, քանզի ես խռովված ննջում էի: Մարդկանց որդիներին ատամները զենք և նետ են, իսկ նրանց լեզուները՝ ինչպես սուր սուսեր» (Հմ. 5): Դավիթի այս փառաբանությունը հղացված էր ճգնաժամի մեջ: Հակառակ նրան, որ նա պաշարված էր թշնամիներով, որոնք իր մահն էին ուզում, նա կարողացավ այս հիանալի բառերը գրել. «Պատրաստ է սիրտն իմ, Աստված, պատրաստ է սիրտն իմ՝ օրհնելու և սաղմոսերգելու քեզ իմ փառաբանությունամբ» (Հմ. 8):

Ինչ տեսակի ճգնաժամի մեջ էլ լինենք այսօր, կարող ենք փառաբանել, մինչ ակնդետ սպասում ենք՝ վստահ լինելով իր ունեցած անսահման հոգատարություն վրա:

Աղոթք - Դավթի հետ աղոթում ենք. «Ողորմի՛ր ինձ, Աստված, ողորմի՛ր ինձ, քանզի հույսս դրի Քեզ վրա»: Շնորհակալ ենք Քո բարության ու ողորմության համար: Ամեն:

Քո հաջորդ ճգնաժամը քո հաջորդ առիթն է՝ վստահելու մեր անվրեպ Աստծուն:

Կարդա՛ Սաղմոս 56

Քո քեռիի հովանուն պիտի ապավինեմ, մինչև անօրեմությունն անցնի: Սաղմ. 56.2

Երկնային ընդմիջումներ

Մասնագետները համաձայն են, որ ամեն օր հեշտությամբ կարելի է ժամանակ կորցնել ընդմիջումների պատճառով: Աշխատանքի ժամին և տանը հեռաձայնով խոսելը կամ անակնկալ այցելությունը կարող են մեզ հեշտությամբ շեղել մեր հիմնական նպատակից ու այդ օրը մեր ծրագրած աշխատանքից:

Մեզնից քչերն են միայն սիրում ընդմիջումները առօրյայում, հատկապես երբ դրանք անհարմար են ու ծրագրի փոփոխություններ են առաջացնում: Սակայն Հիսուսը շատ տարբեր մոտեցում ունեցավ հաճախակի ընդմիջումներին: Հաճախ ենք Ավետարանների մեջ հանդիպում պարագաների, երբ Հիսուսը կանգ է առնում՝ օգնելու մեկին, որ դրա կարիքն ունի:

Մինչ Հիսուսը Երուսաղեմ էր գնում խաչվելու, մի կույր մարդ, որ նստած էր ճամփի եզրին մուրալու, գոչեց ու ասաց. «Հիսո՛ւս, Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ» (Ղուկ. 18.35-38): Ամբոխի միջից շատերը հանդիմանեցին կույր մարդուն, որպեսզի լռի, սակայն նա էլ ավելի աղաղակեց: Հիսուսը կանգ առավ ու հարցրեց. «Ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ համար»: Նա էլ ասաց. «Տե՛ր, որ տեսնեմ»: Ու Հիսուսը ասաց նրան. «Տե՛ս, քո հավատը քեզ փրկեց» (Հմ. 41-42):

Երբ մեր ծրագրերը ընդմիջվում են մեկի կողմից, որ մեր օգնություն կարիքն ունի, կարող ենք իմաստություն խնդրել Տիրոջից՝ սիրով ընդառաջվելու այդ խնդրանքին: Ինչ որ մենք ընդմիջում ենք կոչում, կարող է երկնային ծրագիր լինել Տիրոջ կողմից այդ օրվա համար:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, լցրու մեզ Քո իմաստությունով ու սիրով, որպեսզի կարողանանք Քեզ նման պատասխանել բոլոր նրանց, ովքեր օգնության կարիք ունեն: Ամեն:

Ընդմիջումները կարող են ծառայության սքանչելի առիթներ լինել:

Կարդա՛ր
Ղուկաս 18.35-43

Դիսուսը հարցրեց ու ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ համար»: Նա ասաց. «Տե՛ր, որ տեսնեմ»: Ղուկ. 18.40-41

Մեզ վրա սավառնել

Բեթիի աղջիկը տուն վերադարձավ ճամփորդությունից հիվանդացած: Երբ ցավը անտանելի դարձավ, Բեթին և ամուսինը շուտով նրան հիվանդանոցի շտապ օգնություն բաժինը հասցրին: Բժիշկներն ու հիվանդապահները շուտով գործի լծվեցին, ու մի քանի ժամ հետո հիվանդապահներից մեկը Բեթիին ասաց. «Լավ կլինի: Շատ լավ պիտի խնամենք ու հարկ եղածը պիտի անենք նրա շուտափոյթ ապաքինման համար»: Ընդհատ այդ պահին Բեթին խաղաղություն գգաց, ու սիրտը ջերմ սիրով ողողվեց: Նա մտածեց, որ մինչ ինքն անձկությունս սպասում էր ու իր աղջկա վրա սավառնում, Տերը կատարյալ հայրն է, որ սնուցանում է իր զավակներին՝ մխիթարելով նրանց իրենց դիմագրաված դժվար պահերին: Բ Օրինաց գրքում Տերը հիշեցնում է անապատում թափառող Իր ժողովրդին, թե հոգում է նրանց այնպես, ինչպես սիրող հայրը կամ մայրն է սավառնում ու հսկում իր զավակներին: Նա երբեք չի թողնում նրանց, սակայն որպես արծիվ՝ «տարածում է իր թևերը»՝ պաշտպանելու իր ձագերին, ու «իր մեջքին է դնում նրանց» (Հմ. 32. 11): Նա ուզում է, որ նրանք հիշեն, հակառակ անապատի մեջ իրենց կրած բոլոր տառապանքներին եւ նեղություններին, որ Նա երբեք չպիտի թողնի իրենց: Մենք էլ զանազան մարտահրավերներ ենք դիմագրավում, սակայն կարող ենք մխիթարվել ու քաջալերվել այն հիշեցումով, որ Աստված երբեք մեզ չպիտի թողնի: Երբ զգանք, որ սայթաքելու վրա ենք, Տերը արծվի նման Իր թևերը պիտի տարածի մեզ վրա՝ մեզ վեր տանելու (Հմ. 11) ու մեզ խաղաղություն տալու համար:

Կարդա՛ երկ. Օրենք 32.7-12

...պաշտպանեց նրան, խրատեց ու աչքի լույսի պես պահեց... ձագերին թևի տակ առնող արծվի նման: Երկ. Օր. 32.10-11

Աղոթք - Հայր Աստված, որպես Հայր՝ Քո սերն ավելի հզոր ու մեծ է, քան որևէ բան, որ կարող եմ երևակայել: Թող իմ վստահությունը Քեզ վրա լինի, ու Քո սերը բաժնեկցեմ ուրիշների հետ: Ամեն:

Աստված սիրով է մեզ վրա սավառնում:

Եթե այն ժամանակ իմանայի

Աշխատանքի գնալու ճանապարհին ունկնդրեցի «Սիրելի իմ երիտասարդ» երգը, որտեղ հարց է տրվում. «Եթե կարողանայիր ետ գնալ, իմանալով ինչ որ գիտես հիմա, ի՞նչ պիտի ասելիք քո երիտասարդ անձին»։ Մինչ լսում էի, մտածեցի այն իմաստուն մտքերի և ազդարարություն մասին, որ կարող էի տալ իմ երիտասարդ անձին։ Մեր կյանքի որոշ հանգրվանին մեզնից շատերը մտածում են, թե ինչպես կարելի էր որոշ բաներ տարբեր ձևով անել, եթե միայն դարձյալ անելու հնարավորությունը ունենայինք։ Սակայն երգը ներկայացնում է, որ եթե նույնիսկ մեր անցյալը մեզ ափսոսանք է պատճառում, մեր ունեցած փորձառությունները արդեն մեզ ձևավորել են որոշակի կերպով։ Չենք կարող ետ գնալ կամ փոխել մեր ընտրությունները ու նրանց պատճառով մեր կրած հետևանքները և կամ մեր գործած մեղքերը։ Սակայն գոհություն Աստծո, որ կարիք չունենք մեր բեռներն ու անցյալի սխալները մեզ հետ կրելու Հիսուսի արած բաների շնորհիվ։ Աստծո «առատ ողորմությանը, Հիսուսի Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելով, մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը...» (Ա Պետ. 1.3)։ Եթե հավատքով իրեն դառնանք ու մեր մեղքերը խոստովանենք, Նա մեզ կների ու մեզ բոլորովին նոր արարած կղարձնի՝ մեր մեջ հոգևոր բարեփոխության գործը սկսելով (Բ. Կորնթ. 5.17)։ Կարևոր է, թե ինչ ենք արել. Նա ներում է մեր մեղքերը։ Կարող ենք առաջ գնալ՝ լավագույնս անելով այսօր, ու ապագային նայել մեծ անձկությունից՝ իր հետ լինելու։ Քրիստոսով մենք կարող ենք ազատ լինել։

Կարդա՛

Ա Պետրոս 1.3-9

Օրինյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմությամբ, Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելով, մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը։ Ա Պետ. 1.3

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ Քեզնով կարող եմք մեր բեռներից ազատ լինել, որոնք ծանրորեն ճնշում են մեզ վրա։ Կարող եմք դրանք Քեզ մոտ թողնել։ Ամեն։

Քո ծանր բեռները Աստծո մոտ թող։

Մինչև ե՞րբ

Երբ ամուսնացա, մտածեցի, որ շուտով երեխաներ պիտի ունենամ: Սակայն դա հնարավոր չեղավ, ու չբեր լինելու ցավը ինձ խոնարհեցրեց ու ծնկի բերեց: Հաճախ էի աղաչում Աստծուն՝ ասելով. «Մինչև ե՞րբ»: Գիտեի, որ Աստված կարող էր փոխել հանգամանքները: Սակայն ինչո՞ւ չէր անում:

Արդյոք դո՞ւ էլ ես Աստծուն սպասում ու հարցնում. «Մինչև ե՞րբ, Տե՛ր: Մինչև արդարությո՞ւն տիրի աշխարհի վրա: Մինչև միջո՞ց գտնվի քաղցկեղը բուժելու»:

Ամբակում մարզարեն շատ լավ ծանոթ էր այդ զգացումին: Ն.Ք. յոթերորդ դարում նա աղաղակեց Աստծուն՝ ասելով. «Մինչև ե՞րբ, Տե՛ր, աղոթեմ, բայց դու չլսես: Ինչո՞ւ ինձ ջանք ու հոգնություն պատճառեցիր՝ թշվառություն և ամբարշտություն տեսնելու» (Ամբ. 1.2-3): Նա երկար ժամանակ աղոթեց՝ չկարողանալով հաշտեցնել այն խորհուրդը, թե ինչպես է արդար ու հզոր Աստված թույլ տալիս, որ չարությունը, անարդարությունը և աղտեղությունը շարունակվեն Հուդայի երկրի մեջ: Ամբակումը մտածում էր, որ Աստված արդեն միջամտած պիտի լիներ մինչ այդ: Ինչո՞ւ Աստված ոչինչ չէր անում:

Կան օրեր, երբ մենք էլ զգում ենք, թե Աստված ոչինչ չի անում: Ամբակումի նման մենք էլ շարունակ հարցնում ենք Աստծուն. «Մինչև ե՞րբ»: Սակայն մենք միայնակ չենք: Ինչպես Ամբակումի պարագայում, Աստված լսում է մեր կրած ցավերը: Մենք շարունակելու ենք այդ ցավերը Տիրոջը տանել, որովհետև Նա հոգ է տանում: Աստված լսում է մեզ ու Իրեն հարմար ժամանակ պիտի պատասխանի:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ իմ բեռները կրում ես: Գիտեմ, որ լսում ես իմ աղաղակն ու պիտի պատասխանես ինձ՝ Քո ծրագրի ու նպատակի համաձայն: Ամեն:

Չարի պատճառով մի՛ վհատվիր. Աստված պիտի ասի վերջին խոսքը:

Կարդա՛ր
 Ամբակում 1.2-11

Մինչև ե՞րբ, Տե՛ր,
 աղոթեմ: Ամբ. 1.2

Բավարար

Երբ մեզնից խնդրեցին Աստվածաշնչի սերտողության մի փոքր խումբ հրավիրել մեր տանը, առաջին միտքս եղավ մերժել՝ խորհելով, որ մեզ համար հնարավոր չէր խմբին հյուրասիրել: Նախ, այն պատճառով, որ մեր բնակարանը փոքր էր, ու անհնար էր բավարար նստելու տեղ ունենալ այդ թվով խմբի համար: Նաև չգիտեի, թե ունեին սերտողությունը առաջնորդող մեկը, և մտահոգ էի, որ ինձնից պիտի խնդրեին հյուրասիրության սեղան պատրաստել, որի համար նյութական միջոցներ ու ճաշ պատրաստելու համար բավականաչափ սեր չունեի: Ձէի կարծում, թե «բավարար» միջոցներ ունեի ինձնից ակնկալվածը անելու: Սակայն ամուսինս և ես ուղեցինք մեր լավագույնն անել Աստծո ու խմբի համար: Ուստի, հակառակ մեր մտավախություններին, համաձայնություն եկանք: Հաջորդող հինգ տարիներին մեծ հրճվանքով հյուրասիրեցինք սերտողության խմբին մեր փոքր հյուրասենյակում:

Ես նման դժկամություն և կասկած եմ տեսնում այն մարդու մտքի մեջ, որ գարու հաց բերեց Եղիսեե մարգարեին: Եղիսեեն թելադրեց, որ այդ հացերը ժողովրդին տա, որպեսզի ուտեն, սակայն մարդը այն հարցականի տակ դրեց՝ ասելով. «Ի՞նչ ես տալիս, որ հարյուր մարդու առջև դնեմ» (Դ Թագ. 4.43): Այնպես է թվում, թե նա փորձություն է ենթարկվում չտալ հացերը, որովհետև իր մարդկային չափանիշով բավարար չէր գտնում: Սակայն բավարար էր ու նույնիսկ ավելացավ (Հմ. 44), որովհետև Աստված հնազանդությունը նրա տված պարզեւր առավ ու բավարար դարձրեց: Երբ անկարող ենք զգում կամ մտածում ենք, թե մեր ունեցածը բավարար չէ, հիշենք, թե Աստված մեզնից խնդրում է տալ այն, ինչ ունենք հավատարիմ հնազանդությունով: Միայն Նա է, որ եղածը «բավարար» է դարձնում: **Աղոթք** - Տե՛ր, երբ վախենում եմ, թե ունեցածս բավարար չէ, օգնիր ինձ, որ ունեցածս տամ Քեզ ու վստահ լինեմ, որ Դու այն «բավարար» ես դարձնում: Ամեն:

Յավատարիմ հնազանդությամբ տրված ընծան բավարար է:

Կարդա՛

Դ Թագ. 4.42-44

Դրեց նրանց առջև, նրանք կերան, և, Տիրոջ ասածի նման, մի բան էլ դեռ ավելացավ:

Դ Թագ. 4.44

Որդերից մինչև պատերազմ

Երբ տասը տարեկան Քլիոն առաջին անգամ ձկնորսության գնաց, նայեց կերի ամանում գտնվող որդերին, երկմտեց ու վախենալով ասաց ամուսնուս. «Օգնիր ինձ, Ե-Վ-Ո.»: Երբ ամուսինս հարցրեց, թե ի՞նչ խնդիր կար, Քլիոն ասաց. «Ե-Վ-Ո. ես վախենում եմ որդերից»: Վախեցած՝ նա որևէ բան չէր կարողանում անել:

Վախն ու սարսափը կարող են անդամալուծել նաև չափահաս մարդկանց: Գեղեոնը վախի ու սարսափի մեջ էր, երբ Տիրոջ հրեշտակը նրան եկավ, երբ հնձանում գաղտնի ցորեն էր ծեծում՝ մազիանացիներին փախչելու համար (Դատ. 6.11): Հրեշտակը նրան ասաց, որ Աստված նրան էր ընտրել Իր ժողովրդին առաջնորդելու (Հմ. 12-14):

Ի՞նչ եղավ Գեղեոնի պատասխանը: «Աղաչում եմ քեզ, Տե՛ր իմ, ինչո՞վ փրկեմ ես Իսրայելը. ահա իմ հազարավոր մարդիկ ամենից աղքատն են Մանասեի ցեղի մեջ» (Հմ. 15): Աստծո ներկայությունը հավաստիքը ստանալուց հետո Գեղեոնը ղեռ վախենում է ու նշան խնդրում, որպեսզի իմանա, թե իր հետ խոսողը Տե՛րն է, ու թե իրեն պիտի օգտագործի Իսրայելը ազատելու համար, ինչպես խոստացել էր (Հմ. 36-40): Ու Աստված պատասխանում է Գեղեոնի խնդրանքին: Իսրայելցիները պատերազմում հաղթում են ու քառասուն տարի խաղաղության մեջ ապրում:

Մենք բոլորս տարբեր տեսակի վախեր ունենք՝ որդերից սկսած մինչև պատերազմները: Գեղեոնի պատմությունը մեզ սովորեցնում է, թե մենք վստահ կարող ենք լինել, որ եթե Աստված խնդրի մեզինից որևէ բան անել, Նա նաև պիտի տա զորու՜թյունն ու ուժը՝ այդ ակնկալվածը անելու:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ վստահության համար, թե Դու մեզ հետ ես: Ամեն:

Վախը մեր կյանքերից դուրս հանելու համար հավատանք կենդանի Աստծուն:

Կարդա՛ր

Դատ. 6.11-16, 36-40

Տերը նրան ասաց. «Խաղաղություն քեզ, մի՛ վախեցիր, չես մեռնի»: Դատ. 6.23

Ձարթնումի կոչ

Այն տարիներին, երբ ես հաճախ տարբեր քաղաքներ էի ճամփորդում ու ամեն գիշեր տարբեր տեղերում մնում, միշտ խնդրում էի պանդոկից հեռախոսով արթնացնել: Իմ անձնական ժամացույցի զանգի հետ առավոտ հարկ էին համարում հնչեցնել հեռախոսի զանգը՝ ինձ անկողնից հանելու համար: Հայտնության գիրքը պարունակում է հոգևոր զարթնումի հնչյունը՝ Հովհաննես առաքյալի՝ Ասիայում գտնվող յոթ եկեղեցիներին գրած նամակների մեջ: Սարգիկեի եկեղեցուն նա Հիսուսի այս պատգամն է գրում. «Գիտեմ քո գործերը, որ անուն ունես, թե կենդանի ես, բայց մեռած ես: Արթո՛ւն եղիր և հաստատի՛ր մնացածներին, որ մեռնելու մոտ են, որովհետև քո գործերն իմ Աստծու առաջ կատարյալ չգտա» (Հայտ. 3.1-2):

Հոգևոր տաժանքի մեջ մենք կարող ենք ձախողել՝ տեսնելու քնախորը, որ կարող է սպրդել Աստծո հետ մեր ունեցած հարաբերության մեջ: Սակայն Տերը մեզ հորդորում է հիշել, թե ի՞նչ ընդունեցինք ու լսեցինք, այն ամուր պահել և ապաշխարել (Հմ. 3):

Շատերի համար առավոտյան մի քիչ ժամանակ գտնելը՝ Աստծու խոսքը կարդալու և ազդեցվելու, օգնում է հոգևոր առումով զգաստ ու արթուն մնալ: Աշխատանք չէ Հիսուսի հետ ժամանակ անցկացնելը, այլ մեծ հրճվանք և ուրախություն, որ պատրաստում է ու զինում մեզ մեր առջև գտնվող ամեն բանի դիմագրավելու:

Աղոթք - Տե՛ր, զորություն տուր մեզ այսօր լսելու ու պատասխանելու Քո զարթնումի կոչին: Ամեն:

Կարդա՛

Հայտնություն 3.1-6

Արթո՛ւն եղիր և հաստատի՛ր մնացածներին, որ մեռնելու մոտ են, որովհետև քո գործերն իմ Աստծու առաջ կատարյալ չգտա: Հայտն. 3.2

Քրիստոսի հետ ժամանակ անցկացնելը ուրախություն ու հրճվանք է:

Երկթև արև

Երեք հազար տարեկան մի կնիք, որ պեղված էր Երուսաղեմի հին քաղաքի հարավային պատի հատակից, ու հնարավոր չեղավ հաստատել նրա պատմական կարևորությունը, հինգ տարի փականքի տակ մնաց Երուսաղեմի Հնագիտության Հիմնարկում: Ապա մի հետազոտող կնիքի վրայի տառերը ուշադիր քննելուց հետո մեծ գյուտ արեց: Հին եբրայերենով գրված արձանագրությունը այսպես էր կարդում. «Պատկանում է Հուդայի թագավոր Աքազի որդի Եգեկիային»:

Կնիքի կենտրոնում գտնվում է երկթևանի մի արև՝ շրջապատված կյանքի երկու խորհրդանիշներով: Հնագետը, որ այս գյուտն արեց, հավատում է, որ Եգեկիա թագավորը սկսեց գործածել այս կնիքը որպես խորհրդանիշ Աստծո պաշտպանության, երբ Տերը բժշկեց իրեն մահացու հիվանդությունից (Ես. 38.1-8): Աստվածաշունչն ասում է. Եգեկիան աղերս բարձրացրեց Աստծուն իր ունեցած հիվանդության համար բուժում խնդրելով: Ու Աստված լսեց նրա աղաղակը ու նրան նշան տվեց՝ ցույց տալու, թե պիտի անի այն, ինչ խոստացել էր, ու ասաց. «Քո տան տասը աստիճաններով ներքև իջած շողքը ես տասը աստիճանով հետ եմ շրջելու» (Հմ. 8): Այս պեղված հին կնիքի հետ առնչվող իրողությունը մեզ քաջալերական հիշեցում է տալիս, թե Աստվածաշնչի մեջ հիշված մարդիկ սովորում են, ինչպես մենք, Տիրոջը կանչել: Այն Տիրոջը, որ մեզ լսում է, երբ աղաղակում ենք օգնություն խնդրելով: Եվ եթե նույնիսկ իր պատասխանները չեն լինում այն, ինչ մենք ենք ակնկալում կամ փափագում, կարող ենք վստահ լինել, որ հոգատար ու հզոր է: Նա, ով հրամայում է արևին շարժվել, վստահորեն կարող է մեր սրտերն էլ շարժել: **Աղոթք** - Սիրելի՛ Տեր, Դու մեծ ես ու հզոր, սակայն մեզ պահում ես: Օգնիր, որ վստահենք Քո սիրուն ու զորությանդ՝ միշտ Քո օգնությունը խնդրելով: Ամեն:

Կարդա՛ր Եսայի 38.1-8

Այսպես է ասում քո հոր՝ Դավթի Տեր Աստվածը. «Լսեցի քո աղոթքի ձայնը և տեսա քո արցունքները»: Ես. 38.5

Աստծուն կանչիր. Նա սպասում է քեզնից լսել:

Բարի հովիվը

Ամուսնուս հետ նստեցի հիվանդասենյակում՝ անհամբեր սպասելով: Մեր փոքր տղան աչքի վիրահատություն էր տանում, ու ես մտահոգված վախի զգացումներ էի ունենում: Փորձեցի ազդեցիկ խնդրելով Աստծուց, որ Իր խաղաղությունը տա: Երբ սկսեցի Աստվածաշունչս թերթատել, Եսայի 40-րդ գլխի մասին մտածեցի ու բանալով այս ծանոթ հատվածը՝ կարդացի՝ հուսալով նորություն գտնել այնտեղ:

Երբ կարդացի շատ տարիներ առաջ արձանագրված այս բառերը, շնչահեղձ եղա՝ հիշելով, որ Տերը «հովիվի նման հովվելու է իր հոտերը», ինչպես որ Նա «իր բազկով հավաքելու է գառներին, կրելու է նրանց իր ծոցում...» (Հմ. 11): Ընդհատ այդ պահին իմ պրկումները անցան, ու զգացի, թե Տերը մեզ հետ է ու մեզ իր թևերի մեջ առած՝ հոգ է տանում: Սրտիս մեջ ասացի. «Ընդհատ այս բանի կարիքն ունենք, Տե՛ր»: Աստծո խաղաղությունը զգացի վիրահատության ժամանակ ու դրանից հետո:

Տերը մարգարեի միջոցով Իր ժողովրդին խոստում տվեց, որ իրենց հովիվը պիտի լինի ու առաջնորդի նրանց իրենց ամենօրյա կյանքի մեջ և պիտի հանգստացնի: Մենք էլ կարող ենք Նրա հոգատարությունն ու գուրգուրանքը զգալ, երբ մեր նեղություններն ու դժվարությունները Իրեն հանձնենք՝ խնդրելով Իր սերն ու խաղաղությունը: Գիտենք, որ Նա մեր Բարի Հովիվն է, որ մեզ Իր սրտին մոտիկ է պահում ու կրում իր հզոր բազուկների մեջ:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, Դու ես Բարի Հովիվը, որ Իր կյանքը դնում է Իր ոչխարների համար: Շնորհակալ եմք Քո զոհաբեր սիրո ու ամեն մտքից վեր եղող խաղաղության համար: Ամեն:

Բարի Հովիվը հոգում է Իր ոչխարների համար:

Կարդա՛
Եսայի 40.6-11

Իր բազկով հավաքելու է գառներին, կրելու է նրանց իր ծոցում: Ես. 40.11

Նոր անուն

«Անուն տալով առաջնորդել» խորագրով հոդվածում Մարք Լաբերթոնը գրում է անվան գորութայն մասին: Նա ասում է. «Դեռ հստակ հիշում եմ մի բարեկամի, որ մի օր ինձ կոչեց «երաժշտական»: Ոչ ոք ինձ այդպես չէր անվանել: Երաժշտական որևէ գործիք չէի նվագում ու մեներգիչ էլ չէի: Սակայն անմիջապես սիրված ու գնահատված զգացի: Նա նկատեց, արժևորեց ու գնահատեց մի բան, որ իրապես ճիշտ էր:

Հավանաբար նույն զգացումը ունեցավ Սիմոնը, երբ Հիսուսը նոր անուն տվեց նրան: Անդրեասը, համոզվելով, որ Հիսուսը Մեսիան է, անմիջապես իր Սիմոն եղբորը գտավ ու Հիսուսի մոտ բերեց (Հովհ. 1.41-42): Հիսուսը Սիմոնի հոգու մեջ թափանցեց, արժևորեց ու գնահատեց մի բան, որ խորապես իրական էր Սիմոնի համար: Այո՛, Հիսուսը նաև տեսավ նրա մեջ ձախողություն ու նրա անգուսպ բնույթը, որ նրան դժվարություն պիտի մատնեց: Սակայն դրանից ավելի Նա տեսավ նրա մեջ եկեղեցու առաջնորդ լինելու կարողությունը: Հիսուսը նրան Կեփաս կոչեց, արամերենով Պետրոս, որ նշանակում է ժայռ կամ վեմ (Հովհ. 1.42, տե՛ս՝ Մատթ. 16.18): Այդպես է նաև մեր պարագայում: Աստված տեսնում է մեր հպարտությունը, բարկությունն ու մեր տկար սերը ուրիշների հանդեպ, սակայն Նա նաև գիտի, թե մենք ո՛վ ենք Քրիստոսով: Նա մեզ կոչում է արդարացած ու հաշտված (Հռոմ. 5.9-10), ներված, սուրբ և սիրված (Կող. 2.13, 3.12), ընտրված և հավատարիմ (Հայտ. 17.14): Հիշիր, թե Աստված ինչպես է տեսնում ու սահմանում քեզ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ինձ լավ ես ճանաչում ու սիրում: Օգնիր, որ իմ շուրջիցներին տեսնեմ, ինչպես Դու ես տեսնում: Ամեն:

Ոչ ոք չի կարող Քրիստոսով քո ունեցած ինքնությունը գողանալ:

Կարդա՛ր Հովիհաննես 1.35-42

Հիսուսն էլ նրան
նայեց ու ասաց.
«Դու Սիմոնն ես՝
դու Կեփաս ես կոչ-
վելու»: Հովի. 1.42

Աստծուց բռնված

Կեսորից հետո, երբ քրոջս ու նրա զավակների հետ ճաշն ավարտեցինք, քույրս իր երեք տարեկան աղջկան՝ Աննիկային ասաց, թե քնելու ժամն է: Նրա դեմքին անհանգիստ արտահայտություն պարզվեց, ու արցունքոտ աչքերով առարկեց ու ասաց. «Մոնիկա մորաքույրը դեռ ինձ չի գրկել այսօր»: Քույրս ժպտաց ու ասաց. «Շատ լավ, նա կարող է քեզ գրկել, սակայն ինչքա՞ն»: «Հինգ րոպե», - ասաց Աննիկան:

Գրկելով նրան՝ շնորհակալ եղա, որ նույնիսկ առանց փորձելու՝ նա շարունակ ինձ հիշեցնում է, թե ինչպիսին է սիրելն ու սիրվելը: Ես մտածում եմ, թե երբեմն մենք մոռանում ենք, որ մեր հավատքի ճամփորդությունը մեր երևակայածից շատ ավելի՝ Աստծո սիրո փորձառությունը սովորելն է (Եփ. 3.18): Երբ այդ կենտրոնացումը կորցնենք, մենք մեզ կգտնենք Անառակ Որդու առակի մեծ եղբոր տիպարի մեջ, որ ամեն զնով փորձում էր Աստծո հավանությունը շահել, մինչ կորցնում էր այն բաները, որ արդեն իրեն էին տրված (Ղուկ. 15.25-32):

Սաղմոս 131-ը ազդիթ է, որ կարող է մեզ օգնել «երեսանների նման լինելու» (Մատթ. 18.3) ու հրաժարվելու մեր մտքի մեջ մղվող պատերազմից այն բաների դեմ, որոնք հասկանալի չեն մեզ համար (Սաղմ. 130.1): Դրա փոխարեն մենք կարող ենք իր հետ մեր անցկացրած ժամանակով խաղաղություն վայր վերադառնալ (Հմ. 2)՝ գտնելով մեզ պետք եղած հույսը (Հմ. 3) իր սիրո մեջ, մոր ձեռքերի մեջ եղող հանդարտ ու լուռ մանուկի պես (Հմ. 2):

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք նրանց համար, ովքեր մեր կյանքի մեջ են ու հիշեցնում են, թե ինչ է նշանակում սիրել ու սիրվել: Օգնիր մեզ ավելի արմատանալ Քո սիրո մեջ: Ամեն:

Մանուկների նման մենք կարող ենք Աստծո սիրո մեջ հանգստանալ:

Կարդա՛
Սաղմոս 130

Խոնարհ եղա մոր կրծքից կտրված մանկան նման, որի փափագը նույն բանին դառնալն է:
Սաղմ. 130.2

Ստեղծագործության հանդեպ հոգատար

Մեծ սրճագուլյն կարմրախայտները ձագեր են բերում Օու-եյհի գետում՝ սկսելով իրենց աշնանային ձվադրման ծեսը: Տեսնում ես, թե նրանք ինչպես են պեղում ու շինում իրենց բները ծանծաղ ջրերի խճաքարերի մեջ:

Իմաստուն ձկնորսները գիտեն, թե տարվա այդ եղանակին ձկները ձագեր են ունենում, ուստի փորձում են չխանգարել նրանց: Ջանում են չքայլել խճաքարերի վրա՝ ձվերը չվնասելու համար, ոչ էլ բների մոտից անցնել հոսանքի հակառակ ուղղությամբ, որպեսզի շարժվող ավազն ու քարերը չխեղդեն ձագերին: Եվ չեն որսում այդ կարմրախայտներին ծանծաղ ջրերի մեջ, հակառակ այն բանի, որ փորձություն է դրանք տեսնելը այնտեղ:

Կարդա՛
Ծճնդոց 1.26-31

Երկինքների երկինքը Տիրոջն է, բայց երկիրը նա տվեց մարդկանց որդիներին:
Սաղմ. 113.16

Այս գգուշացումները կարևոր մասն են պատասխանատու ձկնորսության: Սակայն կա ավելի լուրջ պատճառ: Աստվածաշունչը շեշտում է այն ճշմարտությունը, թե Աստված երկիրը մեզ տվեց, ու ամեն ինչ, որ նրա մեջ է, մեր տրամադրություն տակ է (Ծննդ. 1.28-30): Երկիրը մերն է, սակայն այն պիտի գործածենք սիրով ու հոգատարությամբ: Ես հիանում եմ Աստծո ձեռագործի վրա. օդի մեջ սավառնող արծիվն ու կաքավը, ցուլի գորավոր եղջյուրը, հորիզոնի վրա երևացող այծքաղների հոտը, վտակի մեջ եղող վարդագույն պուտերով կարմրախայտները, դաշտի շուշաններն ու զանազան գույներով գեղեցիկ ծաղիկները: Այս բոլորը սիրում եմ, որովհետև ինձ տրված են իմ Հոր մեծ սիրո պատճառով:

Եվ ինչ որ սիրում եմ, պաշտպանում եմ:

Աղոթք - Երկնավոր Հայր, մեզ այստեղ դրել ես՝ վայելելու ու հոգալու Քո սքանչելի ստեղծագործությունը: Թող ամեն բան, որ Դու ես ստեղծել, մեզ հիշեցնի Քո բարությունը, սերն ու հոգատարությունը: Ամեն:

Ստեղծագործության հանդեպ հոգատար լինելը պատվում է Արարչին:

Սենյակ թիվ 5020

Ձեյ Բաֆթոնը իր հիվանդասենյակը փարոսի վերածեց: Հիսուսներկու տարեկան Ձեյը՝ ամուսին, հայր, բարձրագույն վարժարանի ուսուցիչ և մարզիչ, քաղցկեղի պատճառով մահն էր դիմավորում, սակայն նրա սենյակը՝ թիվ 5020-ը, հույսի փարոս ու ազդարար եղավ բոլորի համար: Իր զվարթ կեցվածքի ու զորավոր հավատքի պատճառով հիվանդապահները միշտ ցանկանում էին Ձեյին խնամք տանել:

Նույնիսկ ոմանք այցելում էին նրան աշխատանքի ժամերից դուրս: Հակառակ այն բանի, որ իր մարզիկի մարմինը օրըստօրե մաշվում էր, նա ողջուցում էր ամենքին ժպիտով ու քաջալերանքով: Մի բարեկամ ասաց. «Ամեն անգամ Ձեյին այցելելիս նրան տեսնում էի դրական, բարձր տրամադրությունում ու հույսով լեցուն, հակառակ այն իրողության, որ իր դեմքին կարելի էր տեսնել քաղցկեղն ու մահը: Նա հավատքով էր ապրում»: Ձեյի հուղարկավորության ժամանակ խոսողներից մեկն ասաց, թե թիվ 5020 սենյակը հատուկ իմաստ ուներ իր համար, ու մատնանչեց Ծննդոց 50.20-ը, ուր Հովսեփին ասում է, թե հակառակ այն բանի, որ իր եղբայրները իրեն վաճառեցին գերության, Աստված դա բարու գործակից դարձրեց ու շատ մարդկանց կենդանի պահեց: Քաղցկեղը խլեց նրա կյանքը, սակայն նշմարելով Աստծո գործի վրա եղող ձեռքը՝ նա կարող էր ասել. «Աստված բարու գործակից դարձրեց»: Ի՛նչ մեծ ավանդ՝ մեր Փրկչին վստահելու, նույնիսկ երբ մահը կյանքի դուռն է բախում: Վստահության ի՛նչ մեծ վկայություն մեր բարի ու վստահելի Աստծուն:

Աղոթք - Տեր, հաճախ դժվարություններ ու նեղություններ են մտնում մեր կյանքերից ներս: Խնդրում ենք, օգնիր մեզ՝ Քեզ վստահելու ու տեսնելու, որ ոչ մի բան Քո հսկողությունից դուրս չէ: Օգնիր մեզ Քո սիրո մասին խոսելու նույնիսկ դժվար ժամանակների մեջ: Ամեն:

Աստծո շնորհքով մենք կարող ենք մեր լավագույն վկան ունենալ ամենավատ ժամանակներում:

Կարդա՛

Ծննդոց 50.15-20

Դուք մտածեցիք ինձ չարիք պատճառել, բայց Աստված իմ նկատմամբ բարի վարվեց, ինչպես որ եղավ այսօր, որովհետև նարոկյանց մեծ բազմություն կերակրեցի ես»: ԾՆՆ. 50.20

ԱՆԵՐԼՈՒՅԹ ազդեցություն

Երբ այցելեցի Վաշինգտոնի Արվեստի Ազգային Պատկերասրահ, տեսա մի գլուխգործոց՝ խորագրված «Հովը»: Գծանկարը ներկայացնում էր ծառաստանի մեջ մի ուժեղ փոթորիկ, հսկա ու նիհար բարձր ծառեր՝ ձախ թեքված, ու նույն ուղղությամբ տապալված մացառուներ:

Սուրբ Հոգին էլ ավելի ուժգին կարող է թեքել հավատացյալներին դեպի Աստծո բարություն ու ճշմարտության կողմը: Եթե մենք Սուրբ Հոգու հետ քայլենք, կարող ենք ավելի քաջ ու սիրող լինել: Նաև ավելի խոհեմ պիտի լինենք մեր ունեցած սրտի ցանկությունների հանդեպ (Բ Տիմ. 1.7):

Կարդա՛
Ա թես. 5.16-24

Չոգին մի հանգցրեք: Ա թես. 5.19

Մի շարք պարագաներում Հոգին մեզ դեպի հոգևոր աճման ու փոփոխության է տանում, սակայն մենք պատասխանում ենք՝ «ո՛չ»: Աստվածաշունչը մշտական կերպով այս համոզումը կաշկանդելը «Հոգին հանգցնել» է անվանում (Ա թես. 5.19): Ժամանակի ընթացքում այն բաները, որ մենք սխալ ենք համարում, պիտի ոչ այնքան վատ թվան:

Մեր հարաբերությունը Աստծո հետ հեռու ու խզված է թվում, քանի որ թերևս մենք Սուրբ Հոգու համոզումը դարձյալ ու դարձյալ մեկ կողմ ենք դնում: Ինչքան երկար տևի այս վիճակը, ավելի դժվար պիտի լինի տեսնել հարցի բուն արմատը: Բարեբախտաբար մենք կարող ենք աղոթել ու խնդրել Աստծուց, որ ցույց տա մեզ մեր մեղքը: Եթե մեղքից հեռանանք ու մեր անձերը վերստին Աստծուն հանձնենք, Նա պիտի ների մեզ ու նորոգի Իր Հոգու զորությունն ու ազդեցությունը մեր մեջ:

Աղոթք - Աստված, ցույց տուր ինձ, թե ինչպես դիմավորեմ Քո Չոգուն: Օգնիր, որ լսեմ, երբ Դու ես խոսում: Ուզում եմ դարձյալ շիտակ լինել Քեզ հետ: Ամեն:

Սուրբ Չոգու կողմը թեքվելն ուղղորդում է շիտակ ապրելակերպի:

Քարերի հետ հանդիպում

Քարեր շարունակ պատերազմից ու կործանումից հետո ներկա Երուսաղեմը կառուցված է իր հին փլատակների վրա: Ընտանիքով Երուսաղեմ մեր այցելության ժամանակ քայլեցինք դեպի Վիա Դոլորոսա՝ «Տառապանքի ճանապարհը», ուր ըստ ավանդության՝ Հիսուսը քայլեց դեպի խաչը: Օրը տաք էր, հետևաբար հանգստանալու համար մի տեղ կանգնեցինք ու իջանք Սիոնի Քուլյրերի Վանքի զով ներքնահարկը: Այնտեղ մեծ հիացումով տեսա պեղված հին սալահատակի քարեր, որոնց վրա քանդակված էին հռոմայեցիների զբոսանքի ժամանակ խաղացած խաղերի պատկերները:

Այդ հատուկ քարերը, հակառակ նրան, որ Հիսուսի օրերից հետո էին, պատճառ եղան, որ ես մի պահ մտածեմ իմ հոգևոր կյանքի մասին: Զանճրացած զինվորի՝ ժամանակ անցկացնելու պես ես էլ սկսել էի անտարբեր ու դժվարահաճ լինել Աստծու և ուրիշների հանդեպ: Հուզվեցի՝ հիշելով, որ իմ մնացած տեղի մոտ Տերը ծեծվեց, ծաղրվեց, վարկաբեկվեց ու չարչարվեց իմ անօրենությունների համար:

«Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար նա՛ պատիժ կրեց, և նրա՛ վերքերով մենք բժշկվեցինք» (Ես. 53. 5):

Իմ հանդիպումն այդ քարերի հետ տակավին պատմում է ինձ Հիսուսի սիրո շնորհքի մասին, որ իմ բոլոր մեղքերիցս ավելի մեծ է:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, Քո մեծ զոհողության միջոցով մենք ներում, բժշկություն և հույս ունենք: Ծնորհակալ եմ, որ մենք ապրում ենք այսօր ու հավիտյան Քո սիրո մեջ: Ամեն:

Մեր մեղքը մեծ է, սակայն Աստծո շնորհքը շատ ավելի մեծ է:

Կարդա՛
Եսայի 53.1-6

Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրենությունների համար դատապարտվեց: Ես. 53.5

Մենք գորուծյուն ունենք

Ուժեղ պայթյունի ձայնը երկյուղ պատճառեց ինձ: Գիտենալով, թե ինչ էր պատահել, դեպի խոհանոց վազեցի: Մխալմամբ դատարկ սրճեփի կոճակն էի սեղմել: Անջատելով գործիքը՝ ջրամանի կոթը բռնեցի: Ապա ջրամանի տակ ձեռք տվեցի, որպեսզի եթե շատ տաք լինի, չգնեմ խոհանոցի սեղանին: Տաք ջրամանը մատներին ծայրը վառեց, ու փուչիկներ եղան փափուկ մաշկիս վրա:

Մինչ ամուսինս վերքերիս դեղ էր դնում, գլուխս տարուբերեցի: Գիտեի, որ ջրամանը տաք պիտի լիներ, ու չզիտեմ, թե ինչու ձեռք տվի դրան:

Իմ պատասխանը նման սխալ անե-

լուց հետո ինձ հիշեցրեց Պողոսի հակադարձումը ավելի լուրջ մի հարցի հետ կապված Աստծո խոսքում՝ մեղքի բնույթը:

Առաքյալն ընդունում է, որ «այն չեմ անում, ինչ որ ուզում եմ, այլ այն եմ անում, ինչ որ ատում եմ» (Հռոմ. 7.15): Հաստատելով, որ Աստվածաշունչը եւ Օրենքը տարբերում են բարին չարից (Հմ. 7), նա ընդունում է իրական ու բարդ պատերազմը, որ մղում է մարմնի դեմ, և հոգին, որ պայքարում է մեղքի դեմ (Հմ. 15-23): Խոստովանելով իր տկարությունը՝ նա հույս է առաջարկում այն հաղթանակի համար, որ հիմա է ու հավիտյան (Հմ. 24-25):

Երբ մեր կյանքերը Քրիստոսին հանձնենք, Նա մեզ Սուրբ Հոգուն կպարզեի, որ ուժ է տալիս՝ ընտրելու շիտակ վարվել (8.8-10): Ինչպես մեզ կարողություն է ընծայվում Աստծո խոսքին հնազանդվելու և մեղքից հեռանալու, մենք էլ կարող ենք անտեսել մեղքը, որ մեզ հեռացնում է կյանքից, կյանք, որ Աստված է խոստացել նրանց, ովքեր սիրում են Իրեն:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ կտրում ես շղթաները, որոնք մեզ կապում են մի կյանքի, որ մեղքի իշխանության տակ է: Ամեն:

Սուրբ Հոգին բարեփոխում է մեզ Իր սիրո ու շնորհքի միջոցով:

Կարդա՛
Հռոմ. 7.14-25

Եթե Հոգով եմք ապրում, Հոգով վարվե՛նք: Գաղ. 5. 25

Երբ գեղեցկությունը հարատևում է

Ես սիրում եմ դիտել «Մեծ ձորը»: Երբ կանգնում եմ ձորի եզրին, տեսնում եմ Աստծո ձեռագործի վրձնի գեղեցիկ հարվածները ու հիանում:

Հակառակ այն բանի, որ «Մեծ ձորը» մեծ փոս է թվում, պատճառ է դառնում, որ անդրադառնամ երկնքին: Շատ անկեղծ տասներկու տարեկան փոքրիկ մի օր հարցրեց. «Երկինքը ձանձրացուցի՞չ չէ՞: Չե՞ս մտածում, որ մենք պետք է հոգնենք ամեն ժամանակ Աստծուն պաշտելուց»: Սակայն եթե «գետնի մեծ փոսն» այսքան սքանչելի կերպով գեղեցիկ կարող է լինել, ու չենք կարողանում դադարել նրան նայելուց, մենք միայն կարող ենք երևակայել մի օր գեղեցկություն իսկական աղբյուրը ու մեր սիրող Արարչին տեսնելը նոր ստեղծագործության ամբողջական, նախնական սքանչելիքի մեջ:

Դավիթն արտահայտեց իր այս ցանկությունը, երբ գրեց. «Մի բան եմ խնդրել Տիրոջից, և նույնն եմ աղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ տանը, տեսնեմ Տիրոջ վայելչությունը...» (Սաղմ. 26.4): Աստծո ներկայությունից ավելի գեղեցիկ բան չկա, որ մեզ ձգում է այս աշխարհի վրա, մինչ հավատքով Իրեն ենք փնտրում ու առաջ նայում՝ Իրեն երես առ երես տեսնելու:

Այդ օրը բնավ չպիտի հոգնենք Իրեն պաշտելուց, որովհետև Իր ձեռքի հրաշալի գործերն ու սքանչելիքները և նոր հայտնությունով եղած Իր բարությունը բնավ չպիտի վերջանան: Ամեն վայրկյան Իր ներկայության մեջ Իր գեղեցկություն ու սիրո շունչը ցույց տվող հայտնություն պիտի բերի:

Աղոթք - Գեղեցիկ Փրկիչ, օգնիր ինձ Քեզ փնտրելու ամեն օր ու ապրելու նույնիսկ հիմա՝ Քո ներկայության ու սիրո մեջ: Ամեն:

Մենք ստեղծված ենք Աստծով հրձվելու՝ հավիտյան:

Կարդա՛ր Սաղմոս 26.1-4

Քանզի ինձ համար քո ողորմությունն ավելի լավ է, քան կյանքս, և շրթունքներն իմ պիտի գովեն քեզ: Սաղմ. 62.4

Քո ապահով տեղը

Աղջիկս ու ես ծրագրում էինք մեր մեծ ընտանեկան հավաքույթին մասնակցել: Բանի որ մի քիչ ջղագրգիռ էր, առաջարկեցի, որ ես վարեմ մեքենան: Նա ասաց. «Լա՛վ: Սակայն ես պելի ապահով եմ զգում իմ մեքենայի մեջ: Դու կարո՞ղ ես վարել այն»: Ենթադրեցի, որ նա նախընտրում էր իր մեծ մեքենան՝ իմ փոքրի փոխարեն: Ուստի ասացի. «Իմ մեքենան շա՞տ փոքր է»: «Ո՛չ, պարզապես իմը իմ ապահով տեղն է, ու մի տեսակ հանգիստ եմ զգում նրա մեջ»:

Նրա ակնարկը մարտահրավեր եղավ ինձ համար՝ նկատի առնելու իմ անձնական «ապահով տեղը»: Անմիջապես Առ. 18:10-ի շուրջ սկսեցի մտածել. «Տիրոջ անունը հայտնի է նրա զորության մեծությունից, և դեպի նա ընթացող արդարները բարձրանում են»: Հին օրերին քաղաքի պարիսպներն ու հսկողությունն աշտարակները դրսից եկող վտանգներն էին ազդարարում ու քաղաքացիներին պաշտպանում էին ներսից: Հեղինակի շեշտած կետը այն էր, թե Աստծո անունը, որ ներկայացնում է Նրա նկարագիրը, անձն ու ամեն ինչ, որ ունի, հայթայթում է իսկական պաշտպանություն Իր ժողովրդին:

Որոշ վայրեր խոստանում են ցանկալի ապահովություն այն պահերին, երբ թվում է, թե վտանգ կա: Ապահով ծածկոց մարդկանց համար փոթորիկների ժամանակ: Ինչպես հիվանդանոցի հայթայթած բժշկական հոգատարությունն ու խնամքը և կամ սիրելիի ողջագուրումը: Ո՞ւր է քո ապահով տեղը: Ուր որ ապահովություն ենք փնտրում, իրականում Աստծո ներկայությունը կա, որ տալիս է մեզ անհրաժեշտ զորությունն ու պաշտպանությունը:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմք, որ մինչ այսօր ունենք մտահոգություն կամ մտավախություն, երբ Քո մասին եմք մտածում, Քո ներկայության մեջ եմք ապահովություն գտնում: Ամեն:

Աստված ապահով տեղ է կյանքի փոթորիկների մեջ:

Կարդա՛ Առակներ 18.10-11

Տիրոջ անունը հայտնի է նրա զորության մեծությունից, և դեպի նա ընթացող արդարները բարձրանում են: Առ. 18.10

Ուրիշ տեսակի սեր

Իմ նախասիրած եկեղեցիներից մեկը տարիներ առաջ սկսեց առաքելություն՝ օգնելու այն բանտարկյալներին, որոնք նորից հասարակության մեջ էին մտնում: Ներկայումս եկեղեցին ծաղկում է կյանքի ամեն տեսակի խավերից եղող մարդկանցով: Ես սիրում եմ եկեղեցին, որովհետև ինձ հիշեցնում է, թե ինչպես պիտի պատկերացնեմ երկինքը՝ տարբեր տեսակի մարդկանցով լեցուն, մեղքերից ներված ու իրար կապված Հիսուսի սիրով:

Երբեմն մտածում եմ, թե եկեղեցին թվում է առանձին մի ակումբ՝ փոխանակ մեղքերից ներված մեղավորների համար ապահով վայր լինելու: Մինչ բնականաբար մարդիկ համախմբվում են «որոշ տեսակի մարդկանցից» կազմված խմբերի մեջ, որոնց հետ լինելով ավելի ապահով են զգում, ուրիշները դուրս նետվելու զգացումն են ունենում: Սակայն դա այն չէ, ինչ Հիսուսն ունեւր իր մտքում, երբ իր աշակերտներին ասում էր. «Սա է իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի» (Հովհ. 15.12): Իր եկեղեցին լինելու էր Նրա սիրո ցոլացումը ու փոխադարձ բաժանումը ամենքի հետ: Եթե ցավի մեջ եղող ու մերժված մարդիկ կարողանան գտնել սիրո ապահով մի օազիս, հանգիստ ու ներում՝ Հիսուսի մեջ, նրանք ավելի քիչ չպետք է ակնկալեն եկեղեցուց: Ուստի մեզ մնում է արտահայտել Հիսուսի սերը բոլոր նրանց հանդեպ, որոնց հանդիպում ենք, հատկապես նրանց, որոնք մեզ նման չեն ու մեզ պես չեն մտածում: Մեր շուրջ են գտնվում մարդիկ, որոնց Հիսուսն ուզում է սիրել մեր միջոցով: Ինչ ուրախություն է, երբ մարդիկ իրար միանում են սիրով Աստուծան պաշտելու և վայելում են մի կտոր երկինք այստեղ՝ երկրի վրա:

Աղոթք - Տե՛ր, այսօր ինձ հիշեցրու, որ երբ ես մեղավոր էի, Դու ինձ գրկեցիր Քո մեծ սիրով ու բերիր ինձ Քո շնորհքի հաղորդակցության: Առաջնորդիր ինձ մեկի մոտ, ում կարողանամ սիրել, ինչպես Դու ինձ սիրեցիր: Ամեն:

Բաժանիր Քրիստոսի սերը ուրիշների հետ:

Կարդա՛

Յովհաննես 15.9-17

Սա է իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի:

Յովհ. 15.12

Եղբայրը եղբորը

Եղբայրս և ես փոքր տարիքում միշտ մրցակից էինք իրար, քանի որ միայն մեկ տարվա տարբերություն կար մեր միջև: Երբեմն նույնիսկ կռվում էինք: Հորս համար հասկանալի էր, որովհետև եղբայրներ ունեն: Սակայն մորս համար՝ ո՛չ:

Մեր պատմությունը շատ հարմար կլիներ Ծննդոց գրքում զբվելու համար՝ «Կարճ պատմություն երկու եղբայրների մրցակցության» խորագրով, ինչպիսին էին Կայենի և Աբելի (Ծննդ. 4), Իսահակի և Իսմայելի (21.8-10), Հովսեփի և բոլոր եղբայրների՝ բացի Բենիամինից (37), պատմությունները: Սակայն երբ մտածում ենք եղբայրների մրցակցության ու թշնամության մասին, Հակոբի ու Եսապի հանգամանքից ավելի սուր մրցակցու-

Կարդա՛
Ծննդոց 33.1-11

Ձեզ նոր պատվիրան եմ տալիս, որ իրար սիրեք:
Չովհ. 13.34

թյուն չկա: Եսապի երկվորյակ եղբայրը՝ Հակոբը, երկու անգամ խարդախություն արեց, հետևաբար Եսապն ուզեց եղբորը սպանել (27.41): Տասնյակ տարիներ հետո Հակոբը և Եսապը հաշտվում են (33), սակայն մրցակցությունը շարունակվում է նրանց զավակների միջև, որոնք եղան Եզովմի ու Իսրայելի՝ իրար թշնամի ժողովուրդներ: Երբ Իսրայելի ժողովուրդը պատրաստվեց խոստացյալ Երկիրը մտնելու, Եզովմի ժողովուրդը նրա դեմ ելավ ազդարարությունով ու բանակով (Թվեր 20.14-21): Շատ տարիներ հետո, երբ Երուսաղեմի քաղաքացիները փախուստ տվեցին գրավող ուժերից, Եզովմը կոտորեց ազատվածներին (Աբդիու 1.10-14): Բարեբախտաբար Աստվածաշունչը պարունակում է ոչ միայն տխուր պատմություններ մեր կոտորածության մասին, այլև Աստծո փրկության պատմությունը: Հիսուսը ամեն բան փոխեց, երբ իր աշակերտներին ասաց. «Ձեզ նոր պատվիրան եմ տալիս, որ իրար սիրեք» (Հովհ. 13.34): Ապա իր մահով ցույց տվեց, թե այդ ինչ է նշանակում մեզ համար: Նրա չնորհքը կարող է մեր եղբայրական մրցակցություններն ու պայքարները փոխել եղբայրական սիրո:

Աղոթք - Տե՛ր, հրավիրում եմք Քեզ մեր հարաբերությունները բարեփոխելու Քո բժշկարար սիրով: Ամեն:

Եղբայրական մրցակցությունը բնական է, սակայն Աստծո սերը՝ գերբնական:

Հիսուսը՝ ծալտված

Երբ մի բարեկամուհի տանը բանտարկված սկեսրոջը հոգ էր տանում, հարցրեց, թե ի՞նչ էր ցանկանում: Սկեսուրն ասաց. «Ուզում եմ, որ ոտքերս լվանաս»: Ընկերուհիս ասաց. «Ինչքա՛ն ատեցի այդ գործը: Ամեն անգամ, երբ ուզում էր, որ ոտքերը լվանայի, գայրանում էի ու խնդրում Աստծուց, որ իմ զգացումները թաքցնե՛ր նրանից»:

Սակայն մի օր նրա դանգատող կեց-վածքը փոխվեց մի ակնթարթում, երբ կոնքը հանեց, սրբիչը վերցրեց ու ծունկի եկավ սկեսրոջ ոտքերի առջև: Նա ասաց. «Երբ այդ օրը վերև նայեցի, մի պահ զգացի, թե Տեր Հիսուսի ոտքերն եմ լվանում: Կարծեցի, որ սկեսուրս ծալտված Հիսուսն էր»: Դրանից հետո նրա համար պատիվ էր սկեսրոջ ոտքերը լվանալ:

Երբ լսեցի այս զգայացունց պատմությունը, Հիսուսի ասած խոսքերը մտաբերեցի վերջին ժամանակների մասին, որ սովորեցրեց Ձիթենյաց Լեռան վրա: Թագավորը ընդունում է իր թագավորության մեջ իր տղաներին ու աղջիկներին՝ ասելով, թե երբ նրանք հիվանդներին այցելեցին կամ քաղցածներին կերակրեցին, Նրան դա արեցին: Նա ասում է. «...Քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ի՛նձ արեցիք» (Մատթ. 25.40): Մենք էլ Տեր Հիսուսին ենք ծառայում, երբ այցելում ենք նրանց, ովքեր բանտի մեջ են, եւ կամ երբ կարոտյալներին հագուստ ենք տալիս:

Այսօր դու էլ, ո՛վ բարեկամ, կարող ես արձագանքել, երբ նոր մարդու ես հանդիպում, ու ասել. «Դու ծալտված Հիսո՞ւսն ես»:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, Դու կարող ես բարեփոխել ամենից վատ պարտականությունը: Օգնիր ինձ Քո անունով ուրիշներին սիրել: Ամեն:

Երբ ուրիշներին ենք ծառայում, Հիսուսին ենք ծառայում:

Կարդա՛

Մատթեոս 25.31-40

...քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք: Մատթ. 25.40

Անապատում վերապրել

1 1960-ական թթ. Կինգսթոն եռյակը հրապարակեց մի երգ, որ կոչվում է «Անապատի Պետիկը»: Վիպերգը պատմում է մի ծարավ հովվի մասին, որ անապատի մեջ գտնում է ձեռքի ջրհան: Զրհանի կողքին Անապատի Պետիկը գրուկթյուն է թողել ու խնդրում է ընթերցողին, որ չխմի այնտեղ դրված կփի մեջ եղած ջրից, այլ օգտագործի այն՝ ջրհանը աշխատացնելու համար:

Հովվիվը, ջուրը խմելու փորձուկթյանը դիմանալով, գործածում է ջուրը այնպես, ինչպես գրուկթյունն էր թելադրում: Որպես վարձատրուկթյուն՝ նա ունենում է առատ ու սառը, ծարավը հագեցնող ջուր: Եթե նա հավատքով չվարվեր, պիտի ունենար միայն մի կուժ ծարավ չհագեցնող խմելու տաք ջուր:

Նա ինձ հիշեցնում է Իսրայելի ճամփորդուկթյունը անապատի մեջ: Երբ նրանց ծարավը անտանելի եղավ (Ել. 17.1-7), Մովսեսը Տիրոջ օգնուկթյանը դիմեց: Տերը պատվիրեց նրան իր գավազանը խփել Քորեբի ապառաժին: Մովսեսը հավատաց ու հնազանդվեց, և քարից ջուր ժայթքեց:

Դժբախտաբար, Իսրայելը հաստատորեն չհետևեց Մովսեսի հավատքի օրինակին: Ի վերջո՝ «... խոսքը նրանց օգուտ չբերեց, քանի որ լսողների մեջ հավատով չխառնվեց» (Եբ. 4.2):

Երբեմն կյանքը չոր ու անջրդի անապատ է թվում: Սակայն Աստված մեր ծարավը կարող է հագեցնել ամենից դժվար պարագաներում: Երբ հավատքով ընդունենք Աստծո խոսքի խոստումները, կարող ենք ունենալ կենդանի ջրերի գետեր ու շնորհք մեր ամենօրյա կարիքների համար:

Աղոթք - Տե՛ր, օգնիր, որ մեր վստահուկթյունը դնենք Քո վրա: Դու մեր սրտի ծարավը հագեցնողն ես: Ամեն:

Միայն Հիսուսը՝ կենդանի ջուրը կարող է մեր ունեցած Աստծո ծարավը հագեցնել:

**Կարդա՛ր
Ելք 17.1-7**

...բայց ավետիսի քարոզության խոսքը նրանց օգուտ չբերեց, քանի որ լսողների մեջ հավատով չխառնվեց: Եբր. 4.2

Չափազանց լավը

Իմ տարեդարձը մորս տարեդարձից մեկ օր անց է: Իբրև չափահաս՝ փորձում եմ հարմար նվեր գտնել, որ համապատասխանի գրպանիս և հաճույք պատճառի մորս: Նա միշտ նվերներս ցնծությամբ է ընդունում: Ու հաջորդ օրը իմ ծննդյան նվերն է տալիս: Առանց բացառություն մորս տված նվերները իմ տվածից շատ ավելի լավն են լինում: Նրա նպատակը իմ տված նվերներն արժեզրկելը չէ. նա պարզապես առատաձեռնորեն իր ունեցածից է տալիս, որ իմ ունեցածից շատ ավելին է:

Իմ փափազը, մորս նվեր տալու, ինձ հիշեցնում է Դավթի ցանկությունը՝ Աստծո համար տուն շինելու: Իր պալատի ու Աստծո վրանի հակասությունը տեսնելով՝ նա ցանկանում է Աստծո համար տաճար շինել: Դավթի փափազին ընդառաջելու փոխարեն՝ Աստված պատասխանում է՝ տալով անհամեմատելիորեն ավելի լավ նվեր: Աստված ոչ թե միայն խոստանում է, որ Դավթի որդիներից մեկը՝ Սողոմոնը տաճարը պիտի կառուցի (Ա Մնաց. 17.11), այլև խոստանում է Դավթի համար տուն՝ թագավորություն շինել: Խոստումը սկսվեց Սողոմոնով, սակայն ամբողջական իրագործումը եղավ Տեր Հիսուսի միջոցով, որի գահը հաստատվեց՝ մնալու հավիտյան հավիտենից (12): Դավթի ռզեց իր սահմանափակ ունեցածներից լավագույնը տալ, սակայն Աստված խոստացավ անսահման մի բան:

Դավթի նման թող մենք էլ միշտ մղում ունենանք՝ Աստծուն տալու՝ սիրով ու երախտագիտությամբ: Ու նաև միշտ տեսնենք, թե որքա՛ն ավելի է Նա մեզ տվել Տեր Հիսուսով:

Աղոթք - Հայր Աստված, շնորհակալ եմ Քո ապշեցուցիչ պարգևի համար Տեր Հիսուս Քիստոսով: Քո սերը պարուրում է ինձ: Ամեն:

Աստծո պարգևը մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով գերազանցում է ցանկացած պարգևի:

Կարդա՛ր Ա Մնաց 17.1-15

Նա ինձ համար տուն պիտի շինի, իսկ ես նրա գահը հավիտենական պիտի դարձնեմ:
Ա Մնաց. 17.12

Աստված հայթայթում է

Գրասենյակիս պատուհանից դուրս սկյուռները ձմռան դեմ պայքարում են իրենց խոզակաղիճները ապահով ու հասանելի տեղ թաղելով: Նրանց խռովքը ինձ զվարճացնում է: Եղնիկների ամբողջ խմբակ կարող է մեր տան ետևից անցնել ու նույնիսկ աղմուկ չհանել, սակայն մեկ սկյուռի ձայնը կարծես արշավանք է:

Երկու կենդանիները իրարից տարբեր են նաև այլ ձևերով: Եղնիկները չեն պատրաստվում ձմռանը: Երբ ձյունը գալիս է, նրանք ուտում են, ինչ որ գտնում են ճանապարհին: Սակայն սկյուռները սովամահ կլինեն, եթե նույնը անեն, որովհետև անկարող պիտի լինեն հարմար ուտելիք գտնել:

Կարդա՛ր
Բ Օրինաց 24.19-22

Ով մշակում է իր հողը, պիտի կշտանա հացով: Առ. 12.11

Եղնիկն ու սկյուռը ներկայացնում են ձևեր, որով Աստված հոգում է մեզ: Նա մեզ տալիս է կարողություն՝ գործելու ու պահելու ապագայի համար: Նա նաև մեր բոլոր կարիքներն է հոգում, երբ կարելիությունները պակասում են: Ինչպես իմաստության խոսքն է սովորեցնում, Աստված տալիս է մեզ առատ եղանակներ, որպեսզի մենք պատրաստվենք կարիքի եղանակների համար (Առ. 12.11): Եվ ինչպես 22-րդ Սաղմոսն է ասում, Տերը ինձ խոտավետ արոտների մեջ է պառկեցնում:

Այլ խոսքով, քանի որ Աստված հոգ է տանում, հորդորում է նրանց, որոնք առատորեն ունեն, կիսել նրանց հետ, ովքեր կարոտ են (Բ. Օր. 24.19): Ուստի երբ գալիս է նախատեսությունը, Աստվածաշնչի պատգամը այս է. գործենք, երբ կարող ենք, խնայենք ու բաժանենք այն, ինչ կարող ենք, ու Աստծուն վստահենք մեր կարիքները հոգալու համար:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ խոստանում ես մեր կարիքները հոգալ: Օգնիր մեզ չվախենալ կասկածից: Երախտապարտ եմք, որ մեզ վրա հսկում ես, ու մեր օգնության աղաղակները Քեզ եմ հասնում: Ամեն:

Մեր կարիքները բնավ չպիտի սպառեն Աստծո ունեցած պաշարը:

Աստծո մեջ արմատացած

Երբ բարեկամներս նոր բնակարան փոխադրվեցին, վիստա-
րիա ցանեցին ցանկապատի մոտ ու ակնդետ սպասեցին, որ
Հինգ տարի Հետո ծաղկի: Երկու տասնամյակ նրանք վայելեցին
այդ բույսը՝ ուշադրությամբ կտրելով ու հոգ տանելով նրա
մասին: Սակայն մի օր վիստարիան մահացավ, որովհետև ցան-
կապատի մյուս կողմի հարևանը խոտը չորացնող վնասակար
դեղ էր թափել: Դեղի մեջ եղած թույնը
վնասել էր վիստարիայի արմատները,
ու ծառը ոչնչացավ: Սակայն զարմա-
նալիորեն հաջորդ տարի նոր ծիլեր
դուրս եկան:

Մենք տեսնում ենք ծաղկող և փչա-
ցող ծառերի պատկեր, որ Երեմիան
նմանեցնում է Աստծո ժողովրդին, որ
կամ վստահում է Աստծուն, կամ էլ
անտեսում Նրա ճամփաները: Նրանք, ովքեր Աստծուն են
հետևում, իրենց արմատները պիտի նետեն ջրերին մոտ հողի
մեջ ու պտուղ պիտի տան (Եր. 17.8), սակայն նրանք, ովքեր
իրենց սրտին պիտի հետևեն, պիտի լինեն անապատի մեջ եղող
ցախերի նման (Հմ. 5-6): Մարգարեն ցանկանում է, որ Աստծո
ժողովուրդը վստահի ճշմարիտ ու կենդանի Աստծուն, ու «կլի-
նի ինչպես հոսող ջրերի մոտ աճած ծառ» (Հմ. 8):

Մենք գիտենք, որ «Հայրը մշակն է» (Հովհ. 15.1), և մենք
կարող ենք իրեն վստահել (Եր. 17.7): Թող հետևենք մեր ամ-
բողջ սրտով, մինչ տալիս ենք պտուղ, որ մնայուն է:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ուզում եմ ամբողջությամբ Քեզ
հետևել չորության կամ առատության ժամանակ: Օգնիր, որ
Քեզ դառնամ օգնության և հույսի համար: Ամեն:

Կարդա՛
Երեմիա 17.5-8
Նա կլինի ինչպես
հոսող ջրերի մոտ
աճած ծառ... Եւ չի
դադարի պտուղ
տալուց:
Երեմ. 17.8

Երբ Աստծուն հետևենք, Նա մեզ կծաղկեցնի:

Վստահության ցուցակ

Նախկինում, երբ ամուսինս և ես մեր կյանքերը Քրիստոսին հանձնեցինք, լրջությամբ նկատի էին ունեցել ամուսնալուծումը: Սակայն երբ հանձն առանք Աստծուն սիրել ու Նրան հնազանդվել, վերահանձնվեցինք իրար: Իմաստուն խորհրդատուների ղեմեցինք ու հրավիրեցինք Սուրբ Հոգուն, որ մեզ վերափոխի անհատապես, ինչպես նաև իբրև զույգ: Մեր Երկնավոր Հայրը շարունակում է մեզ օգնել, որ զարգացնենք առողջ հաղորդակցության կարողությունը: Նա մեզ սովորեցնում է, թե ինչպես կարող ենք Նրան սիրել ու վստահել իրար, ինչ էլ պատահի: Սակայն մինչ մոտենում ենք մեր ամուսնության 25-ամյակին, երբեմն մոռանում ենք ամեն ինչ, որ Աստված է արել մեզ մեր փորձությունների մեջ: Շատ հաճախ պայքարում եմ անորոշության վախի դեմ և ունենում անտեղի նեղություն՝ փոխանակ Աստծու արած գործերն արձանագրելու:

Բ Օրենքի առաջին գլխում Մովսեսը հաստատում է Աստծո վստահելիությունը: Նա քաջալերում է իսրայելցիներին, որ առաջ գնան հավատքով, որպեսզի կարողանան վայելել իրենց ժառանգությունը (Հմ. 21): Սակայն Աստծո ժողովուրդը պահանջում է մանրամասնություններ, թե ինչի ղեմաց պիտի հայտնվեն և ինչ ստանան՝ իրենց ապագայի համար Նրա վստահությանը հանձնվելուց առաջ (Հմ. 22-23): Քրիստոսի հետևորդները վախից ու նեղությունից զերծ չպիտի լինեն: Սակայն Սուրբ Հոգին կարող է մեզ օգնել՝ ստեղծելու վստահության ցուցակ Աստծո անցյալի հավատարմությունների մասին: Նա կարող է մեզ զորացնել ու նաև մղել քաջալերական վստահությամբ Իրեն մոտենալու:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ հաստատում ես, որ մենք կարիք չունենք իմանալու ամեն բան, որ մեզ է սպասում ապագայում: Շնորհակալ եմք, որ Դու ես ես, ով բնավ չի փոխվում ու միշտ Իր խոստումները հարգում է: Ամեն:

Աստծո անցյալի հավատարմությունը փաստում է Նրա հավիտենական վստահելիությունը:

Կարդա՛ր Բ Օրենք 1.21-33

Տեսաք, որ ահա մեր Տե՛ր Աստվածը երկիրը ձեր աչքի առջև բաժանել է մեր միջև...Մի՛ վախեցեք և մի՛ սարսափեք: Բ Օր. 1.21

Խորհուրդներ պարզել

Միշտ մեծ հաճույքով եմ վայելել «Պիստակներ» ծաղրանկարի հեղինակ Չարլզ Շուլթցի իմաստությունն ու ներշնչումը: Իր նկարած ու իմ նախասիրած ծաղրանկարներից մեկը եկեղեցու մեջ եղող երիտասարդների մասին է՝ «Երիտասարդությունը հիվանդությունն է» խորագրով գրքի մեջ: Այդ նկարը ցույց է տալիս երիտասարդ մի մարդու՝ հեռախոսը մի, Աստվածաշունչը՝ մյուս ձեռքում, որ բարեկամին ասում է. «Մտածում էի, թե առաջին քայլը արեցի Հին Կտակարանի խորհուրդների թնջուկը պարզելու... Խոսքը կարդալով»: Մաղմոս 118-ը հորդում է հեղինակի՝ Աստծո խոսքի գորությունը հասկանալու ու ամեն օր նրա փորձառությունը ունենալու ծարավով: «Որքա՛ն սիրեցի օրենքները քո, նրանք գիշեր-ցերեկ իմ խոհերն էին» (Հմ. 97): Այս նախանձախնդիր հետապնդումը առաջնորդում է աճող իմաստության, հասկացողության և Աստծո հնազանդության (Հմ. 98-100):

Աստվածաշունչը չի պարունակում կախարդական տարազ՝ «խորհուրդների թնջուկը պարզելու»: Գործընթացը մտային մարզանքից ավելին է և պահանջում է պատասխան մեր կարդացածին: Մինչ մի շարք հատվածներ մնում են թնջուկ մեզ համար, կարող ենք ողջագուրել այն ճշմարտությունները, որոնք հասկանում ենք, և ասել Տիրոջը. «Որքա՛ն քաղցր են քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին: Քո պատվիրաններով իմաստնանալով՝ ատեցի չարիքի բոլոր ճանապարհները...» (Հմ. 103-104): Հայտնության սքանչելի ճամփորդություն է սպասում մեզ Աստծո խոսքի մեջ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ Քո խոսքի համար, որ մեզ իմաստություն և հասկացողություն է տալիս Քո կյանքի ճանապարհին հետևելու: Ամեն:

Հանձնառությունը՝ Խոսքը կարդալու, սկիզբն է մեր ամենօրյա ճամփորդության՝ գտնելու Իր սերն ու զորությունը:

Կարդա՛
Մաղմոս 118.97-104
Քո պատվիրաններով իմաստնանալով՝ ատեցի չարիքի բոլոր ճանապարհները...
Մաղմ. 118.104

Հուլիսի պատմությունը

Հուլիսը չի կարողանում իր պատմությունը պատմել առանց արցունքների: Ութսունհինգ տարեկան ու շրջագայելու անկարող Հուլիսը, կարող է ոչ կենտրոնական պատկեր թվալ մեր եկեղեցու կյանքում: Նա կախված է ուրիշներից՝ տեղափոխվելու համար, և քանի որ միայնակ է ապրում, այլևս մեծ ազդեցություն չունի իր շուրջիների վրա: Սակայն երբ նա իր փրկության պատմությունն է պատմում, երևում է որպես Աստծո շնորհքի երևելի օրինակ: Երբ նա երեսուն տարեկան էր, մի երեկո բարեկամներից մեկը նրան հրավիրեց ժողովի: Նա չգիտեր, որ մի քարոզիչի պիտի լսեր: Ասաց. «Ես չպիտի գնայի,

Կարդա՛
Հոմ. 10.1-13

Քանի որ ով Տիրոջ
անունը կանչի, կփրկվի:
Հոմ. 10.13

եթե իմանայի»: Նա արդեն հավատ ուներ, որ շատ էլ օգուտ չէր բերում իրեն: Սակայն նա գնաց ու այդ երեկո լսեց Տեր Հիսուսի մասին եղած բարի լուրը: Հիմա, հիսունից ավելի տարիներ անց, նա ուրախության արցունքներ է թափում, երբ պատմում է, թե ինչպես է Հիսուսը իր կյանքը հեղաշրջել ու բարեփոխել: Նրա պատմությունը երբեք հին պատմություն չի կարող լինել:

Բոլորովին կարևոր չէ, թե քո պատմությունը Հուլիսի պատմության նման է թե ոչ: Կարևորն այն է, որ մենք պարզ քայլ ենք անում մեր հավատքը Հիսուսի, Նրա մահվան ու կյանքի մեջ դնելու համար: Պողոս առաքյալն ասաց. «...եթե Հիսուսին բերանովդ Տեր դավանես և սրտովդ հավատաս, որ Աստված նրան մեռելներից հարություն տվեց, կփրկվես» (Հռոմ. 10.9):

Ծիշտ դա արեց Հուլիսը: Դու էլ նույնը կարող ես անել: Հիսուսը փրկում է, բարեփոխում և մեզ տալիս նոր կյանք:

Աղոթք - Երկնավոր Հայր, ես փորձում եմ գտնել կյանքի իմաստը, սակայն՝ առանց հաջողության: Հիմա ուզում եմ Տեր Հիսուսին հավատալ՝ ընդունելով այն, ինչ որ արեց խաչի վրա իմ մեղքերի համար: Նրան եմ վստահում այսօր: Ամեն:

Քրիստոսին պատկանելը վերահաստատություն է, այլ՝ վերստեղծում:

Ո՞վ է սա

«Գրասեղանի վրայից ամեն ինչ վերցրեք, թուղթ ու գրիչ հանեք»: Երբ աշակերտ էի, այս երկյուղ ազդող բառերով էին հայտարարում, որ «քննության ժամանակը» եկել է:

Մարկոսի Ավետարանի 4-րդ գլխում կարդում ենք, որ Տեր Հիսուսի օրը սկսվեց ծովափին սովորեցնելով (Հմ. 1) ու ավարտվեց քննությամբ (Հմ. 35): Նավը, որ օգտագործվել էր որպես սովորեցնելու ամբիոն, հիմա դարձել էր փոխադրամիջոց՝ Հիսուսի ու Իր աշակերտների համար՝ ծովի մյուս եզերքը անցնելու: Ծամփորդության ընթացքում, մինչ Հիսուսը հոգնած ու սպառված նավի ետևում քնել էր, նրանք մեծ փոթորկի հանդիպեցին (Հմ. 37): Թրջված ու ահաբեկված աշակերտները Հիսուսին արթնացնում են հետևյալ խոսքով. «Վարդապետ, հոգդ չէ՞, որ կորչում ենք» (Հմ. 38): Եվ ապա մեծ հրաշք է պատահում: Նա, որ նախպես հորդորել էր մեծ բազմությանը՝ ասելով. «Լսեցե՛ք» (Հմ. 3), արտասանեց պարզ, սակայն հզոր մի հրաման քամուն «Լռի՛ր, հանդարտվի՛ր» (Հմ. 39): Քամին հնազանդվեց, ու վախեցած աշակերտների դեմքերին զարմանք հայտնվեց, ու հետևյալն ասացին. «Սա ո՞վ է արդյոք» (41): Հարցը լավ էր, սակայն բավական ժամանակ պիտի անցներ, որ նրանք անկեղծությամբ ու ճշմարտապես կարողանային եզրակացնել, թե Հիսուսը Աստծո Որդին էր: Անկեղծ ու բաց սրտով եղած հարցումներն ու նման փորձառութիւնները առաջնորդում են մարդկանց նույն եզրակացություն: Նա ուսուցչից ավելի մեծ է, ում պետք է լսել. Նա պաշտամունքի արժանի եղող Աստվածն է:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք քո խոսքի համար, որ օգնում է մեզ՝ տեսնելու Հիսուսին որպես Քո Որդու: Խնդրում եմ օգնիր ինձ Քեզ լսելու և վստահ լինելու, որ Դու ղեկավարում ես: Ամեն:

«Վարդապետ, ես Քո հետևից կգամ, ո՛ր էլ գնաս»:

Մատթ. 8.19

Կարդա՛ր Մարկոս 4.35-41

Նրանք սաստիկ վախեցան ու իրար ասում էին. «Սա ո՞վ է արդյոք, որ քամին էլ, ծովն էլ հնազանդվում են սրան»:
Մարկ. 4.41

ԱճԱՆՈՒՆ ապրել

Ջեյն Յուլենը իր շատ ընթերցված «Անանուն աշխատել» խորագրով գրությունն մեջ այս խոսքն է գրում. «Լավագույն գրողները նրանք են, ովքեր իրենց սրտի մեջ տենչում են մնալ անանուն: Նրանց համար պատմված պատմությունն է կարևորը, ոչ թե պատմողը»:

Այն պատմությունը, որ մենք ենք պատմում, Հիսուսի մասին է, որ իր կյանքը տվեց մեզ համար: Բոլոր հավատացյալների հետ մենք իր համար ենք ապրում ու իր սերն ենք կիսում ուրիշների հետ:

Հռոմ. 12.3-21 համարները հեղուկության կեցվածքն ու սերն են նկարագրում, որ իր տեղը պիտի ունենա իրար հետ ունեցած մեր հարաբերությունների մեջ՝ որպես Տեր Հիսուսի հետևորդներ: Առաքյալն ասում է. «Որովհետև Աստուծո շնորհով, որ տրված է ինձ, ասում եմ ձեզանից յուրաքանչյուրին. ձեր անձի մասին ավելի մտածում մի՛ ունեցեք, քան արժան է մտածել, այլ մտածել պարկեշտ մնալ այնպես, ինչպես որ Աստված ամեն մեկին հավատի չափը բաժանեց» (հմ. 3, 10):

Հպարտությունը մեր անցյալի հաջողությունների համար կարող է մեր աչքերը կուրացնել՝ չտեսնելու ուրիշների պարգևները: Հոխորտանքը կարող է թունավորել ապագան: Հովհաննես Մկրտիչը, որի առաքելությունն էր Հիսուսի ճանապարհը պատրաստել, ասաց. «Նա պետք է մեծանա, իսկ ես փոքրանամ» (Հովհ. 3.30): Լավ նշանաբան է սա մեր բոլորի համար:

Աղոթք - Ընդունում եմ, Տեր, թե շատ բան ունեմ սովորելու հեղուքյան մասին: Օգնիր ինձ տեսնելու Քեզ՝ որպես խոնարհ ու հեզ Տիրոջ, որպեսզի նույն հոգով նայեմ իմ շուրջիներին: Ամեն:

Միշտ խոնարհ ու հեզ եղիր Աստծո առջև՝ թույլ տալով, որ
Նա լինի քո ամեն բանը: **Օսվալդ Զամբերս**

Կարդա՛ր Հռոմ. 12.1-13

Եղբայրասիրության մեջ իրար նկատմամբ գթասիրտ եղեք, պատիվ տալու մեջ իրարից առաջ անցեք:
Հռոմ. 12.10

Չզոր մանուկը

Առաջին անգամ, որ նրան տեսա, լաց եղա: Նա ճիշտ նորածին մանկան էր նման, որ քնել էր իր անկողնում: Սակայն մենք գիտեինք, որ երբեք չպիտի արթնանար, մինչև որ Տեր Հիսուսի ձեռքերի մեջ լիներ:

Նա կառչած մնաց կյանքին մի քանի ամիս: Հետո մայրը նրա մահվան լուրը հայտնեց մեզ սրտաճմլիկ էլեկտրոնային նամակով: Նա գրեց այդ «խոր ցավի մասին, որ մեր մեջ է հառաչում»: Ապա ասաց. «Որքա՛ն խոր կերպով Աստված իր գործը քանդակեց մեր սրտում այդ փոքր կյանքի միջոցով: Ի՛նչ հզոր կյանք էր այդ կյանքը»:

Հզո՞ր: Ինչպե՞ս կարող էր այդ բանը ասել: Այս ընտանիքի թանկագին փոքր որդին ցույց տվեց նրանց ու մեզ, որ մենք

Աստծուց կախյալ պիտի լինենք ամեն բանի համար, մանավանդ երբ մեր կյանքերը վատ ընթացքի մեջ են: Դժվար, սակայն մխիթարող ճշմարտությունը այն է, որ Աստված մեզ հետ է մեր ցավի մեջ: Նա գիտի որդի կորցնելու ցավն ու վիշտը:

Մեր ցավի մեջ Դավթի երգերին ենք դիմում, որովհետև նա գրում է իր ցավի ու վշտի մեջ՝ ասելով. «Մինչև ե՞րբ խռովք ունենամ իմ հոգում և ամենօրյա ցավ՝ իմ սրտում» (Սաղմ. 12.2): «Լույս տուր, Տե՛ր, իմ աչքերին, որ երբեք մահվան քուն չմտնեմ» (Հմ. 4): Ու Դավիթն իր կյանքի մեծագույն հարցումները Աստծուն է հանձնում. «Ես ողորմությունդ վրա հույս դրի, Տե՛ր, սիրտս հրճվեց քո փրկագործությունք...» (Հմ. 6):

Միայն Աստված կարող է գերագույն նշանակություն տալ մեզ ողբ պատճառող դեպքերում:

Աղոթք - Ո՞ւմ դիմեմ, երբ նեղությունները գան: Արդյոք բարկանո՞ւմ եմ Աստծո վրա, երբ վիշտ ու կորուստ եմ ունենում: Վախենո՞ւմ եմ զգացումներս կիսել իր հետ: Երբևէ Աստծուց խնդրե՞լ եմ իր խաղաղությունը:

Աստված կարող է մեծագույնն ու հզորագույնը անել այն բանով, որը մենք տկար ու փոքր ենք նկատում:

Կարդա՛ Սաղմոս 12

Մինչև ե՞րբ, Տե՛ր, պիտի մոռանա ինձ իսպառ: Ես ողորմությունդ վրա հույս դրի: Սաղմ. 12.1,5

Յոչակակոյր Ժպիտը

Կնոջս հետ Փարիզի Լուվր թանգարանը այցելելու հրաշալի Կառիթից հետո զանգեցի մեր տասնմեկ տարեկան թոռնուհուն՝ Ադիին: Երբ հիշեցի, որ մենք տեսանք Դա Վինչիի գլուխգործոցը՝ Մոնա Լիզան, Ադին հարցրեց. «Ժպտո՞ւմ էր»:

Արդյոք դա մեծ հարցում չէ՞, որ արվում է այս նկարի մասին: Դա Վինչիի այդ նկարից 600 տարի հետո մենք դեռ չգիտենք, թե նկարի կինը ժպտո՞ւմ է, թե՞ ոչ: Գրավված ու հափշտակված կտավի գեղեցկությունից՝ մենք վստահ չենք, թե հասկանում ենք Մոնա Լիզայի արտահայտությունը:

«Ժպիտը» մաս է կազմում այս գրավիչ նկարին: Սակայն ինչքա՞ն կարևոր է դա: Ժպիտը բան է, որ Աստվածաշունչն է հիշեցնում: Իրականություն մեջ «Ժպիտ» բառը հազիվ մի քանի անգամ է հիշատակվում Աստվածաշնչի մեջ, ու երբեք չի դիտարկվում այնպիսի բան, որ պետք է անենք: Սակայն Աստվածաշունչը առաջարկում է մեզ ունենալ այնպիսի կեցվածք, որ մղում է մեզ ժպտալու, ու այդ բառը ուրախությունն է: Մոտավորապես 250 անգամ կարդում ենք Աստծո Խոսքի մեջ ուրախություն մասին: Դավիթն ասում է Տիրոջ մասին մտածելով. «Եվ մարմինս գոհացավ ու զվարճացավ. ես հոժարակամ պիտի փառաբանեմ նրան» (Սաղմ. 27.7): Մենք պետք է «ցնծանք Տիրոջով» (Սաղմ. 32.1), Աստծո վկայությունները «սրտի ցնծությունն են» (118.11), ու մենք «ցնծացի՞նք», որովհետև «մեծ բաներ գործեց Տերը մեզ համար» (125.3): Վստահաբար, ուրախությունը, որ Աստված է պարգևում Իր ամեն արած բաների միջոցով մեզ համար, կարող է ժպիտ պարզել մեր դեմքին:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Դու բարի Յայր ես ու մեր դեմքի վրա ժպիտ ես դրոշմում և ուրախություն տալիս, որ շատ ավելի մեծ է, քան աշխարհի տված ուրախությունը: Օգնիր մեզ, որ ցույց տանք այդ ուրախությունը ուրիշներին մեր ժպիտով: Ամեն:

Սրտի մեջ եղած հույսը ժպիտ է բերում մեր դեմքին:

Կարդա՛ր
Սաղմոս 27.6-9

Արդարների ուրախությունը պիտի երկարի: Առ. 10.28

Ուրախություն և արդարություն

Ասիայում տեղի ունեցած մի համագումարի ժամանակ մի քանի ժամվա մեջ աչք բացող երկու խոսակցություն ունեցա: Առաջինն այն էր, որ մի հովիվ ասաց, թե տասնմեկ տարի սխալմամբ բանտարկված էր եղել մի ոճրի համար: Երկրորդն այն էր, որ մի խումբ ընտանիքներ հայտնեցին, թե ինչպես էին մեծ գումարներ տվել կրոնի համար իրենց կրած հալածանքի դիմաց իրենց հայրենիքում, և նրանք, որոնց տվել էին այդ գումարները, ինչպես էին դավաճանել, ու հիմա, երկար տարիներ գաղթականների ճամբարում մնալով, վստահ չէին, որ տուն պիտի ունենային:

Երկու պարագաներում էլ խնդիրը արդարություն էր, որ ապացուցում է մեր երկրի կոտրած լինելը: Սակայն այս արդարության պակասը մնայուն չէ:

66-րդ Սաղմոսն աղբսում է Աստծուն, որ Իրեն ցույց տա ցավ ունեցող այս աշխարհին: Դրա արդյունքը պիտի լինի ուրախությունը, ոչ միայն որպես պատասխան ու ապացույց Նրա սիրո, այլև այն բանի, որ Նա արդար Աստված է: «...Դու արդարությամբ ես դատում ժողովուրդներին և երկրի ազգերին դու ես առաջնորդում» (Հմ. 5):

Հակառակ այն բանի, որ Աստվածաշնչի հեղինակները հասկացան, որ «իրավունքը» (ուղղամտությունն ու արդարությունը) բանալին է Աստծո սիրո, նաև իմացան, որ դա ամբողջովին պիտի կատարվի ապագայում: Մինչ այդ մեր անարդար աշխարհում մենք կարող ենք ծառայել ուրիշներին ուղղելով մեր Աստծո երկնային արդարության: Նրա գալուստը պիտի լինի այնպես, որ «...հորդի իրավունքը ինչպես ջուր, և արդարությունը՝ ինչպես անհուն հեղեղ» (Ամոս 5.24):

Աղոթք - Հայր, օգնիր մեզ, որ Քո արդարության համար գործենք, ուր էլ լինենք, մինչ սպասում ենք այն օրվան, երբ Դու ամեն բան ուղիղ պիտի դարձնես: Ամեն:

Արդարության համար գործիր, ողորմության համար աղոթիր:

Կարդա՛ր
Սաղմոս 66

...արդարությամբ ես դատում ժողովուրդներին և երկրի ազգերին դու ես առաջնորդում:

Սաղմ. 66.5

Մեր աղոթքներն ու Աստծո ժամանակը

Երբեմն Աստված Իր ժամանակը տրամադրում է մեր աղոթքներին պատասխանելու, և դա զժվար է հասկանալ:

Նման էր դա Զաքարիա քահանայի պարագային, որին երևաց Գաբրիել հրեշտակը մի օր Երուսաղեմի տաճարում, խունկի գոհասեղանի մոտ: Գաբրիելն ասաց նրան. «Մի՛ վախեցիր, Զաքա՛րիա, որովհետև քո աղոթքը լավեց, և քո կինը՝ Եղիսաբեթը, քեզ մի որդի կծնի, և նրա անունը Հովհաննես կդնես» (Դուկ. 1.13):

Հավանաբար Զաքարիան տարիներ առաջ գավակ ունենալու խնդրանքով էր դիմել Աստծուն ու հիմա զարմանում էր Գաբրիելի տված լուրից, որովհետև Եղիսաբեթը արդեն ծննդաբերության տարիքից անցել էր: Ու տակավին Աստված պատասխանում է նրա աղոթքին: Աստծո հիշողությունը կատարյալ է: Նա կարող է ոչ միայն մեր աղոթքները հիշել միայն մի քանի տարի, այլև սերունդներ հետո էլ: Նա երբեք չի մոռանում ու պատասխանում է մեր խնդրելուց շատ տարիներ անց: Երբեմն Իր պատասխանը «Ո՛չ» է լինում, այլ դեպքում՝ «Սպասի՛ր»: Սակայն Իր պատասխանը միշտ էլ չափվում է սիրով: Աստծո ճանապարհները մեր ճամփաներից շատ տարբեր են, և մենք կարող ենք վստահ լինել, որ նրանք բարի են:

Զաքարիան սովորեց սա: Նա որդի խնդրեց, սակայն Աստված ավելին տվեց: Նրա որդին՝ Հովհաննեսը, պիտի մեծանար՝ դառնալու այն մարգարեն, որ պիտի հռչակեր Մեսիայի գալուստը: Զաքարիայի փորձառությունը պարզում է մի ճշմարտություն, որ մեզ քաջալերելու է, մինչ աղոթում ենք: Աստծո ժամանակը հազվագյուտորեն մեր ժամանակն է, սակայն միշտ էլ արժե սպասել նրան:

Աղոթք - Բզո՛ր Փրկիչ, շնորհակալ եմ, որ լսում ես իմ աղոթքները ու պատասխանում իմ ակնկալությունից շատ ավելին տալով: Ամեն:

Երբ չենք տեսնում գործի վրա եղող Աստծո ձեռքը, կարող ենք շարունակել վստահել Նրա սրտին:

Կարդա՛ր Դուկաս 1.5-17

Բայց նրան, ով կարող է առատությամբ ամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք ու իմանում, այն գործության չափով, որ մեր մեջ ներգործում է: Եփ. 3.20

Երկրորդ հնարավորություն

«**Ինչպե՞ս** կարող ես այդքան ազնիվ լինել, եթե ինձ չես ճանաչում»:

Միսայ որոշման արդյունքում Լինդան բանտարկվեց օտար երկրի մեջ: Վեց տարի բանտում մնալուց հետո, երբ ազատ արձակվեց, գնալու տեղ չուներ: Նա մտածեց, թե իր կյանքը վերջացած էր: Մինչ իր ընտանիքը մի քիչ փող հավաքեց նրա վերադարձի համար տոմս գնելու, մի ազնիվ գույգ առաջարկեց նրան անվճար կեցություն, ուտելիք և օգնության ձեռք մեկնեց: Լինդան մեծ հուզումով ընդունեց նրանց ազնվությունը ու մեծ ցանկությամբ լսեց, երբ նրանք խոսեցին Աստծո սիրո ու երկրորդ հնարավորություն տալու բարի լուրի մասին:

Լինդան ինձ հիշեցնում է Նոոմինին՝ մի որբևայրի, նշված Աստծո Խոսքի մեջ, որ իր ամուսնուն ու երկու զավակներին կորցրեց օտար երկրում ու մտածեց, թե իր կյանքը փչացել էր (Հուլի 1): Սակայն Տերը մոռացել էր Նոոմինին, ու իր հարսի սիրո միջոցով, ինչպես նաև Բոոսի՝ աստվածավախ մի մարդու բարյացակամությամբ, Նոոմինը տեսավ Աստծո սերը և ունեցավ երկրորդ հնարավորություն (4.13-17): Նույն Աստվածը հոգում է մեզ համար այսօր: Ուրիշներին ցուցաբերած սիրո միջոցով մեզ հիշեցնում է տրվում, որ Նա մեզ հետ է: Մենք կարող ենք տեսնել Աստծո շնորհքը մեզ անձանոթ մարդկանց օգնող ձեռքերի մեջ: Սակայն այս բոլորից վեր և ավելի Աստված փափագում է մեզ տալ նոր սկիզբ: Մենք միայն կարիք ունենք Լինդայի և Նոոմինի նման տեսնելու Աստծո ձեռքը մեր ամենօրյա կյանքում ու անդրադառնալու, որ Նա բնավ չի դադարում իր ազնվությունը մեզ ցույց տալ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք, որ մեզ թույլ ես տալիս դարձյալ ու դարձյալ սկսել: Ամեն:

Աստված մեզ երկրորդ հնարավորություններ է տալիս:

Կարդա՛ր Յուլի 4.13-17

Օրինյալ լինի նա Տիրոջից, որ իր գուրջը չպակասեցրեց ողջերից և մեռածներից: Յուլ. 2.20

Մտածիր խոսելուց առաջ

Չունգը բարկացավ կնոջ վրա, որ չէր ստուգել նշանավոր ռեստորանը զնայու ուղղութիւնը, որտեղ պիտի ունենային իրենց ընտանեկան վերջին ընթրիքը ճապոնիայից տուն վերադառնալուց առաջ: Քանի որ ուշացել էին, ստիպված էին ընթրիքը չեղյալ անել: Չունգը քննադատեց կնոջը օրը լավ չծրագրելու համար: Սակայն հետո նա զղջաց իր վարվելակերպի ու ասած խոսքերի համար: Նա շատ կոշտ էր վարվել, հակառակ այն բանի, որ ինքն էլ կարող էր ստուգել ռեստորան տանող ճանապարհը: Նա նաև շնորհակալութիւն չէր հայտնել կնոջը մնացած յոթ օրերը լավ ծրագրելու համար: Մեզնից շատերը կարող են Չունգի նման լինել:

Կարդա՛ր
Սաղմոս 140

Պահապան դիր, Տե՛ր, իմ բերանից, և ամուր դուռ՝ իմ շրթներից...
Սաղմ. 140.3

Մենք փորձութիւն ենք ենթարկվում՝ պոռթկալու, երբ բարկացած ենք, ու թույլ տալու, որ բառերը անզուսպ դուրս ժայթքեն մեր բերանից: Օ՛, որքա՛ն ազդեքի կարիք ունենք, ինչպես Սաղմոսերգուն արեց. «Պահապան դիր, Տե՛ր, իմ բերանին, և ամուր դուռ՝ իմ շրթներին...» (Սաղմ. 140.3):

Սակայն ինչպե՞ս կարելի է դա անել: Ահա օգտակար մի գաղտնիք. մտածի՛ր խոսելուց առաջ: Քո ասած խոսքերը արդյո՞ք օգտակար, շնորհալի ու ազնի՞վ են (Տե՛ս՝ Եփ. 4.29-32):

Մեր բերաններին պահապան դնելը պահանջում է, որ մենք մեր բերանները փակ պահենք, երբ բորբոքված ենք, ու խնդրենք Տիրոջ օգնութիւնը շիտակ բառերը ասելու համար, և կամ էլ բնավ չխոսենք: Մեր խոսակցութեան վրա հսկելու պարագան երկար տարիների աշխատանքի է կարոտում: Բարեբախտաբար Աստված գործում է մեր մեջ ու տալիս մեզ ցանկութիւնն ու գորութիւնը «անել իր հաճութեան պես» (Փիլ. 2.13):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր մեզ, որ միշտ մտածենք խոսելուց առաջ: Տո՛ւր մեզ ասել շիտակ բառերը և իմաստութիւն՝ իմանալու, թե երբ է պետք լուռ մնալ: Ամեն:

Բարի խոսքը մեղրի խորիսխ է, և հոգու բժշկութիւն է նրա քաղցրութիւնը: Առ. 16.24

Լավ ավարտ

Մինչ սրահի լույսերը մարեցին, ու մենք պատրաստվեցինք դիտելու Ապոլո 13-ի շարժանկարը, ընկերս մեզմ ձայնով ասաց. «Ափսոս, որ ամենքը մեռան»: Դիտեցի 1970-ի դեպի տիեզերք թռիչքի շարժանկարը՝ ողբերգության զգացողությամբ ու սպասելով տխուր ավարտի: Սակայն ավարտին հասկացա, որ խաբվել էի: Լավ չէի հիշում պատմության վերջը. հակառակ այն բանի, որ հերոսները մեծ դժվարություններ դիմազրավեցին, կարողացան ապահով տուն վերադառնալ:

Քրիստոսով մենք կարող ենք պատմության ավարտը իմանալ, թե ինչպես մենք էլ տուն պիտի կարողանանք հասնել ողջ ու հավիտյան ապրել մեր Երկնավոր Հոր հետ, ինչպես տեսնում ենք

Հայտնություն գրքի մեջ: Տերը պիտի ստեղծի «նոր երկիր ու երկիր», ինչպես ամեն բան է նորացնում (21.1,5): Նոր քաղաքում Տեր Աստված պիտի ողջունի Իր ժողովրդին՝ Իր հետ ապրելու առանց ցավի ու առանց խավարի: Մենք հույս ունենք՝ իմանալով պատմության ավարտը:

Ի՞նչ տարբերություն կարող է անել սա: Կարող է բարեփոխել դժվար պարագաները, ինչպես երբ մարդիկ սիրելի մեկին կորցնելու իրականության առջև են կանգնում և կամ մահն են դիմազրավում: Հակառակ այն բանի, որ սոսկում ենք մահվան իրողություններից, մենք կարող ենք ողջագուրել հավիտենական կյանք ունենալու խոստումի ուրախությունը: Ցանկանում ենք բնակվել այն քաղաքում, ուր ցավ, նեղություն ու նզովք չպիտի լինեն, ու այնտեղ Աստծո լույսի մեջ պիտի մնանք հավիտյան (22.5):

Աղոթք - Տե՛ր Հիսուս, տո՛ւր ինձ հույս, որ կարողանամ հանգստանալ Քո խոստումի մեջ և արժանի լինել Քո տված հավիտենական կյանքին: Ամեն:

Աստված խոստանում է Իր ժողովրդին պատմության լավ ավարտ:

Կարդա՛ր Հայտնություն 22.1-5

Աստծու ու Գառան աթոռը նրա մեջ կլի-
նի, և նրա ծառանե-
րը կպաշտեն նրան:
Հայտն. 22.3

Մխիթարող ձեռք

«Հիվանդը պատերազմի մեջ է», - ասում էր բուժքույրի արձանագրությունը:

Նա մինչև վերջ չանդրադարձավ, որ ես այերգիկ հակազդեցություն ունեի, երբ ինձ վերագտնում էի սրտի լուրջ վիրահատությունից հետո: Վիճակս կայուն չէր. մարմինս դողում էր, ու ձեռքերս կապված էին, որպեսզի չնչառություն համար կոկորդիս դրված խողովակը չքաշելի: Վախազդու ու ցավալի հանգրվան էր սա: Մի պահ հիվանդապահի օգնականը, անկողնուս աջ կողմը կանգնած, ձեռքս բռնեց: Նրա անակնկալ շարժումը ուշադրությունս գրավեց, հատկապես այն պատճառով, որ փափուկ հպում էր: Սկսեցի հանդարտվել, ինչից հետո մարմնիս դողն անցավ:

Այս փորձառությունը ունենալով ուրիշ հիվանդների հետ՝ հիվանդապահի օգնականը հասկացավ, որ մխիթարող ձեռքը կարող է ինձ էլ օգտակար լինել: Սա պարզ օրինակ է, թե ինչպես է Աստված Իր մխիթարական ձեռքը երկարում, երբ Իր զավակները տառապում են: Մխիթարությունը ազդու գործիք է ցանկացած հոգատար մարդու համար: Պողոսը Բ. Կորնթացիների 1.3-4 համարներում մեզ ասում է, թե սա Աստծո գործածած միջոցներից կարևորներից է: Միաժամանակ Աստված բազմապատկում է Իր մխիթարող ազդեցությունը՝ կոչ անելով մեզ, որ մեր հերթին ուրիշներին մխիթարենք (Հմ. 4-7): Սա նշան է Իր՝ մեր հանդեպ ունեցած մեծ սիրո, որ կարելի է ուրիշների հետ էլ բաժանել՝ շատ անգամ ամենապարզ շարժումով կամ հպումով:

Աղոթք - Հայր, շնորհակալ ենք Քո տված մխիթարության համար: Օգնիր մեզ, որ կարողանանք տեսնել, թե որտեղ կարող ենք գործածել այդ նույն մխիթարող ձեռքը՝ ուրիշներին մխիթարելու Քո անունով: Ամեն:

Պարզ մոտեցումը կարող է հզոր մխիթարության միջոց լինել:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 1.3-7

Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը ...Որ մեր բոլոր նեղությունների ժամանակ մխիթարում է մեզ: Բ Կորնթ. 1.3-4

Մի բարի երկիր

1968-ին «Ապոլոն 8» տիեզերանավի տիեզերագնաց Բիլ Անդերսը մոտիկից դիտելով լուսինը նկարագրեց նրա մակերեսը՝ կոչելով այն «լուկ պարզ ու անախորժ տեսարան»: Ապա դիտելով երկիր մոլորակը՝ տիեզերագնացները հերթով կարգացին Ծննդոց 1.1-10 համարները: Հրամանատար Ֆրանք Բորմանը ավարտեց 10-րդ համարով՝ «Աստված տեսավ, որ լավ է», ձեռքով նշան արեց ու ավելացրեց. «Աստված օրհնի ձեզ բոլորիդ, բոլորիդ, որ բարի աշխարհի վրա եք գտնվում»: Ստեղծագործությունը Աստծո գործն է. «Եվ Աստված ասաց...» խոսքը ներդաշնակորեն հանդես է գալիս ամբողջ գլխի մեջ: Ողջ սքանչելի աշխարհը, որի մեջ ապրում ենք, Աստծո ստեղծագործությունն արդյունքն է: Ամեն ինչ, որ Աստվածաշնչի մեջ է, հաստատում է Ծննդոց 1-ին գլխի պատգամը, թե ամբողջ պատմության ետևում Աստված կա:

Ստեղծագործությունը բարի է: Մի ուրիշ խոսք է մեղմորեն հնչում զանգակի նման, որ ասում է. «Աստված տեսավ, որ լավ է»: Շատ բան է փոխվել արարչագործության այդ առաջին պահից: Ծննդոց 1-ը նկարագրում է աշխարհը այնպես, ինչպես Աստված է ուզում որ լինի, այնպես, ինչպես որ էր ազավազվելուց առաջ: Ինչ գեղեցկություն տեսնում ենք այսօր բնության մեջ, աղոտ արձագանքն է Աստծո ստեղծած վաղեմի վիճակի:

«Ապոլոն 8» տիեզերանավի տիեզերագնացները տեսան աշխարհը իբրև պայծառ, գունավոր գնդակ՝ առանձին կախված օդի մեջ: Նա երևում էր սքանչելիորեն գեղեցիկ ու դյուրաբեկ: Նա երևում էր Ծննդոց 1-ում պատկերված տեսարանի նման:

Աղոթք - Հայր, շնորհակալ ենք Քո ստեղծած սքանչելի ու գեղեցիկ երկրի համար: Հավատում ենք, որ երկիրն ու մեզ բարի ստեղծեցիր: Օգնիր, որ մաքուր ու անարատ պահենք այն: Ամեն:

Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը:

ԾՆՆՂՈՑ 1.1

Կարդա՛ ԾՆՆՂՈՑ 1.1-10

Աստված ասաց. «Թող երկնքի տակ գտնվող ջրերը հավաքվեն մի տեղ, և երևա ցամաքը»: Եվ եղավ այդպես... Աստված տեսավ, որ լավ է: ԾՆՆՂ. 1.9-10

Ո՞րն է լավագույն պարզևը

Ամուսինս վերջերս տոնեց հատկանշական մի տարեդարձ, որը զրոյով է վերջանում: Շատ մտածեցի լավագույնս նրան պատվելու մասին այս կարևոր և ուրախ առիթով: Զավակներին հետ զանազան գաղափարների մասին խոսեցի՝ փորձելով գտնել լավագույնը: Ցանկություն ունեի, որ մեր տոնակատարությունը երևան հաներ նոր տասնամյակի հատկանշական լինել, և ցույց տար, թե ինչքան արժեքավոր էր նա մեր ընտանիքի համար: Ուզում էի, որ նվերը կապ ունենար իր կյանքի այս կարևոր հանգրվանի հետ:

Սողոմոն թագավորն ուզեց Աստծուն տալ «մեծ տարեդարձի» նվերից շատ ավելի մեծ պարգև: Նա ցանկացավ, որ իր կառուցելիք տաճարը արժանի լիներ Աստծո ներկայությունը նրա մեջ: Անհրաժեշտ շինանյութը գտնելու համար պատգամ ուղարկեց Տյուրոսի թագավորին: Իր նամակում նշեց, որ տաճարը մեծ պիտի լիներ, «քանզի մեր Աստվածն ավելի մեծ է, քան բոլոր աստվածները» (Բ Մնաց. 2.5): Նա ընդունեց, որ Աստծո վիթխարիությունը, մեծությունն ու բարությունը շատ ավելի մեծ էին, քան որևէ մարդկային ձեռակերտ շինվածք:

Մեր Աստված արդարև բոլոր աստվածներից մեծ է: Նա հրաշալի բաներ է արել մեր կյանքերի մեջ՝ մղելով մեզ սիրո ու արժեքավոր ընձաներ բերելու իրեն՝ անկախ դրանց արտաքին արժեքից: Սողոմոնը շատ լավ գիտեր, թե իր բերած պարգևը չպիտի համապատասխաներ Աստծո արժեքին. հակառակ դրա՝ նա իր ընձան բերեց Նրա առջև: Մենք էլ կարող ենք նույնը անել:

Աղոթք - Տե՛ր, Դու մեծ Աստված ես՝ արժեքով անհամապատասխան որևէ բանի: Թող իմ մատուցած պարզևը հաճելի լինի քեզ: Ամեն:

Ամենից արժեքավոր պարզևը, որ կարող ենք Աստծուն տալ, մեր սերն է:

Կարդա՛ր Բ Մնաց. 2.1-10

Այն տունը, որ կառուցելու եմ, մեծ է լինելու, քանզի մեր Տե՛ր Աստվածն ավելի մեծ է, քան բոլոր աստվածները:

Բ. Մնաց. 2.5

Բազմապատկված առատաձեռնություն

Շերըը անակնկալի եկավ, երբ իր մեքենան կանգնեցրեց՝ հանձնելու իր բերած պիցցան: Ակնկալելով տեսնել բնակարան՝ փոխարենը նա իրեն գտավ եկեղեցու առջև: Շփոթված՝ պիցցան տարավ ներս, ուր եկեղեցու հովիվը նրան դիմավորեց:

«Արդյոք արդա՞ր է ասել, թե քո կյանքը այդքան էլ հեշտ չի եղել», - հարցնում է հովիվը: Շերըը համաձայնում է նրա հետ: Այդ խոսքը ասելով՝ հովիվը դուրս է բերում հանգանակության երկու ափսե, որոնք եկեղեցու անդամները լցրել էին իրենց ընծաներով: Հետո հովիվը 750 դոլար է դնում Շերըլի պայուսակի մեջ իբրև նվեր: Շերըը չգիտեր, թե հովիվը խնդրել էր պիցցայի խանութից, որ նյութապես ամենից անապահով վարորդի հետ ուղարկեին իրենց պատվերը: Շերըը ապշած էր: Հիմա կարող էր մի շարք պարտքեր վճարել: Երբ առաջին Քրիստոնյաները Երուսաղեմի մեջ նյութական կարիքի մեջ էին, մի եկեղեցի իր օժանդակությամբ օգնեց նրանց: Հակառակ այն բանի, որ նրանք էլ ունեին իրենց կարիքները, Մակեդոնիայի եկեղեցիները զոհաբերությամբ տվեցին առատորեն՝ առանձնաշնորհում նկատելով նման բան անելը (Բ Կորնթ. 8.1-4): Պողոսը ներկայացնում է նրանց առատաձեռնությունը՝ օրինակելի կորնթացիների ու մեզ համար: Երբ մեր ունեցածից տալիս ենք ուրիշների կարիքների համար, ցույց ենք տալիս Տեր Հիսուսին, որ տվեց իր ամբողջ ունեցածը մեր հոգևոր չքավորության համար (Հմ. 9):

Շերըը, հետևելով նրանց օրինակին, իր հերթին օրվա մնացած ժամերին իր ստացած նվերները տվեց այլ կարոտյալների: Առատաձեռնության բազմապատկման արարք եղավ սա, որով Քրիստոսը փառավորվեց:

Աղոթք - Տեր, Դու մեր կարիքներն ես հոգում զարմանալի ձևերով: Մեզ առաջնորդիր, որ ուրիշներին էլ նույնը անենք: Ամեն:

Մեր առատաձեռնությունը կարիքներ է հոգում ու Տիրոջը փառավորում:

Կարդա՛

Բ Կորնթ. 8.1-9

...այդ շնորհում էլ
ավելանաք:

Բ Կորնթ. 8.7

Մեծ սեր

Վերջերս առաջին անգամ մեր քսանմեկ ամսական թոռնուհուն՝ Մորիային մեր տուն բերեցինք գիշերելու առանց իրենից մեծ եղբայրների: Մենք շռայլորեն բաշխեցինք սեր և ուշադրություն և ուրախացանք իր հետ անելով այն, ինչ սիրում է: Հաջորդ օրը նրան իրենց տանը թողնելով ու հրաժեշտ տալով՝ դուրս եկանք: Մինչ այդ Մորիան առանց բառ արտասանելու վերցրեց իր պայուսակն ու մեզ հետևեց:

Այդ պատկերը մեծապես տպավորեց ինձ. Մորիան դարձյալ պատրաստ էր գնալու իր տատի ու պապի հետ: Ամեն անգամ, երբ մտածում եմ այդ մասին, ժպտում եմ: Տեսնում եմ նրա մեծ ցանկությունը՝ մեզ հետ լինելու ու միայնակ մեզ հետ ավելի շատ ժամանակ անցկացնելու:

Հակառակ այն բանի, որ նա դեռ չի կարողանում հստակ արտահայտվել, զգում է սերն ու արժևորումը: Պարզապես մեր սերը Մորիայի հանդեպ դրվագ է Աստծո՝ մեր՝ Իր զավակների հանդեպ ունեցած սիրո: «Տեսեք, թե Հայրն ինչպիսի՜ սեր շնորհեց մեզ, որ Աստծու որդիներ կոչվենք...» (Ա Հովհ. 3.1)

Երբ հավատանք Հիսուսին և ընդունենք Իրեն որպես մեր Տեր ու Փրկիչ, մենք նրա զավակները կլինենք ու կսկսենք հասկանալ Իր տված շռայլ սերը՝ մեզ համար մեռնելով (Հմ. 16): Մեր ցանկությունն է նրան հաճո լինել մեր արածներով ու ասածներով (Հմ. 6) ու նրան սիրել՝ փափազելով Իր հետ ժամանակ անցկացնել:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք, որ մեզ սիրելու համար մեռար ու հարություն առար, որպեսզի մենք հավիտենական կյանք ունենանք: Օգնիր մեզ, որ Քո սիրո օրինակները լինենք բոլոր նրանց համար, որոնց հանդիպում եմք: Ամեն:

Որքա՞ն խորն է Աստծո սերը մեր հանդեպ:

Կարդա՛ր Ա Յովհ. 3.1-8

Տեսեք, թե Հայրն ինչպիսի սեր շնորհեց մեզ, որ Աստծու որդիներ կոչվենք:
Ա Յովհ. 3.1

Որքա՞ն առավել

1915-ի հոկտեմբերին, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, Օսվալդ Չամբերսը Կահիրեի մոտ գտնվող զինավորական ծառայության համար մարզվելու կենտրոն՝ Զեյթունի ճամբար հասավ դառնալու YMCA-ի հոգեւոր տեսուչը Բրիտանիայի Թագավորության զինվորների համար: Երբ ծանուցեց շաբաթվա մեջ կատարվելիք կրոնական պաշտամունքի մասին, 400 մարդ լցվեց YMCA-ի մեծ վրանը՝ լսելու նրա պատգամը՝ «Մո՛րն է աղոթքի օգուտը» խորագրով: Հետո, երբ նա անհաստատվեա խոսակցություն ունեցավ մարդկանց հետ, որոնք փորձում էին Աստծուն գտնել պատերազմի մեջ, մեջբերեց Ղուկաս 11.13-ը. «Արդ եթե դուք, որ չար եք, ձեր որդիներին բարի պարգևներ տալը գիտեք, որքա՞ն առավել երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, ովքեր խնդրում են նրանից»:

Կարդա՛ր Ղուկաս 11. 5-13

Արդ եթե դուք, որ չար եք, ձեր որդիներին բարի պարգևներ տալը գիտեք, որքա՞ն առավել երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, ովքեր խնդրում են նրանից: Ղուկ. 11.13

Աստծո ձրի պարգևը Իր Որդու միջոցով ներում է, հույս ու Իր ներկայությունը: «Որովհետև ամեն ոք, ով խնդրում է, և ով որոնում է, գտնում է, և ով որ դուռը բխում է, նրա առաջ բացվում է» (Հմ. 10):

1917-ի նոյեմբերի 15-ին Օսվալդ Չամբերսը հանկարծամահ եղավ՝ պայթած կույր աղիքի պատճառով: Նրան պատվելու համար նրա շնորհիվ Հիսուսին դարձած մի զինվոր գնեց մարմարից շինված մի Սուրբ Գիրք՝ Ղուկաս 11.13 համարը քանդակված բաց էջի վրա, ու դրեց նրա գերեզմանի կողքին. «Որքա՞ն առավել երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, ովքեր խնդրում են նրանից»: Հիանալի պարգևը, տրված Աստծուց, տրամադրելի է մեզնից յուրաքանչյուրին ամեն օր:

Աղոթք - Երկնքում եղող սիրելի՛ Հայր, Դու ես տալիս բոլոր բարի պարգևները: Շնորհակալ եմք Սուրբ Հոգու մեծ պարգևի համար, որ ապրում է մեր մեջ ու առաջնորդում մեզ Քո ճշմարտությանը: Ամեն:

Աստծո տված Սուրբ Հոգու պարգևը մեզնից յուրաքանչյուրին տրամադրելի է ամեն օր:

Իր ներկայությամբ

17-րդ դարի վանական Եղբայր Լորենսը, որպես կամավոր խոհարար, իր առօրյա աշխատանքից առաջ իր համայնքում աղոթում է՝ ասելով. «Ո՛վ իմ Աստված, տո՛ւր ինձ շնորհը Քո ներկայության մեջ մնալու: Օգնիր ինձ իմ գործի մեջ: Տիրիր իմ խանդաղատանքին»: Իր գործն անելիս նա աղոթում է Աստծուն՝ լսելով Նրա տված առաջնորդությունը ու նվիրելով իր աշխատանքը Նրան: Նույնիսկ իր ամենից զբաղված պահերին նա գործածում է հանգստի ժամերը՝ շնորհ խնդրելու Աստծուց: Ինչ էլ որ պատահեր, նա որոնում ու գտնում էր Աստծո սիրո զգացումը:

Ինչպես 88-րդ Սաղմոսն է խոստովանում, ծովերի վրա իշխանություն ունեցող ու հրեշտակների փառաբանությունը ստացող Արարչին մեր տալիք պատասխանը պետք է լինի մեր ամբողջ կյանքը Նրան հանձնելը: Երբ լավ ըմբռնենք ու հասկանանք Աստծո գեղեցկությունը, կլսենք պաշտամունք բարձրացնելու կոչի ուրախությունը, ուր էլ լինենք, ցանկացած պահի՝ «ամեն օր» (Հմ. 15-16):

Լինի շուկայում կամ օդակայանի սպասասրահում, կամ այլ սպասման պահի, կարող ենք ձանձրանալ կամ նեղվել: Նման պարագաները կարող են առիթ լինել՝ շունչը պահելու ու տեսնելու այս պահերից յուրաքանչյուրը՝ որպես առիթ՝ սովորելու, թե ինչպես կարելի է Աստծո «երեսի լույսով ընթանալ» (Հմ. 16):

Մեր վատնած պահերը, երբ սպասման կամ էլ անորոշության մեջ են, և չգիտենք ինչ անել հաջորդ քայլափոխին, հնարավոր ընդմիջումներն են՝ զիտելու մեր կյանքը իր ներկայության լույսի տակ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Քո շնորհով ինձ միշտ հիշեցրու, թե հնարավոր է մեր կյանքերը ապրել Քո ներկայության մեջ: Ամեն:

Յուրաքանչյուր պահ կարելի է ապրել Աստծո ներկայության մեջ:

**Կարդա՛ր
Սաղմոս 88.1-17**

Երանի՛ այն ժողովրդին, որը գիտակցում է քո օրհնությունը, Տեր, նա քո երեսի լույսով պիտի ընթանա:
Սաղմ. 88.15

Ծառայիր ու ծառայություն ստացիր

Երբ Մերիլինը երկար ժամանակ հիվանդ էր, շատերն էին նրան քաջալերել դժվար պահերին: Ու հիմա նա մտահոգ էր, թե ինչպես պիտի հատուցեր նրանց ցուցաբերած ազնվությունը: Մի օր նա կարդաց հետևյալ աղոթքը. «Աղոթիր, որ զարգացնես խոնարհություն, որ նրանք ոչ թե միայն ծառայություն անեն, այլև ծառայություն ընդունեն»: Մերիլինը նկատեց, որ կարիք չունի հավասարակշռել նժարները, այլ պարզապես շնորհակալ պիտի լինի և թույլ տա ուրիշներին, որ ծառայության հաճույքը զգան:

Փիլիպպեցիս 4-րդ գլխում Պողոս առաքյալը իր երախտագիտությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր բաժանել էին իր տառապանքները (Հմ. 14): Նա մարդկանց վստահեց, որ իրեն աջակցեն, երբ Տիրոջ Ավետարանն էր քարոզում ու սովորեցնում: Նա հասկացավ, որ իրեն տրամադրված պարզեցնեք, երբ դրանց կարիքն ունեն, պարզապես մարդկանց՝ Աստծո հանդեպ ունեցած սիրո արտահայտությունն էին. «...Ստացա այն, ինչ ձեզանից էր՝ անուշ հոտ, ընդունելի պատարագ՝ Աստծուն հաճելի» (Հմ. 18):

Կարող է հեշտ չլինել ստացողի դերը, հատկապես երբ միշտ եղել ենք օժանդակություն տրամադրողը: Սակայն հեզությունը մենք կարող ենք Աստծուն թույլ տալ, որ մեր կարիքները հոգազանազան ձևերով, երբ օգնության կարիք զգանք: Պողոսը գրում է. «Իմ Աստվածը թող իր հարստության չափով ձեր կարոտությունը լցնի...» (Հմ. 19): Սա մի բան էր, որ նա սովորել էր փորձություններով լեցուն իր կյանքում: Աստված հավատարիմ է ու իր ունեցած նախատեսությունը մեր հանդեպ՝ անսահման:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ հոգում ես մեր կարիքները Քո ժողովրդի միջոցով: Թող մենք էլ առատաձեռնությանը տանք ու օժանդակություն ստանանք: Ամեն:

Սեր ստացիր: Սեր տուր: Կրկնի՛ր:

Կարդա՛
Փիլիպ. 4. 10-19

...ինչպես որ հոգում էիք, բայց հարմար առիթ չէիք գտնում:

Փիլիպ. 4.10

Աչխփուկ - աչքակապուկ

«Ինձ չե՛ս տեսնում»: Երբ փոքրիկները «աչխփուկ» են խաղում, երբեմն մտածում են, թե աչքերը փակելով թաքնվում են: Եթե նրանք չեն տեսնում, ենթադրում են, որ դու էլ նրանց չես տեսնում:

Ինչքան էլ դա պարզ ու հասարակ թվա, մենք էլ երբեմն նման բան ենք անում Աստծո հետ: Երբ ցանկություն ենք ունենում սխալ բան անելու, Աստծուն դուրս ենք նետում ու շեղվելով մեր ուզած ճանապարհով ենք դնում:

Եգեկիել մարգարեն այս ճամարտությունը նկատեց Բաբելոնի մեջ աքսորված իր ժողովրդի մասին Աստծո տված տեսիլքում: Տերն ասաց նրան. «Մարդո՛ւ որդի, տեսնո՞ւմ ես, թե Իսրայելի այդ տան նախնիներն ինչե՛ր են անում այստեղ, խավարի մեջ, յուրաքանչյուրն իր ծածուկ սենյակում: Նրանք ասում են, թե Տերը լքել է երկիրը, չի նայում երկրին» (Եգ. 8:12): Սակայն Աստծո աչքից ոչ մի բան թաքնված չէ, ու Եգեկիելի այս տեսիլքը լավագույն փաստն է: Հակառակ այն բանի, որ նրանք մեղք գործեցին, Աստված իր զղջացող ժողովրդին հույս ներշնչեց նոր խոստումի միջոցով. «Նոր սիրտ եմ տալու ձեզ, նոր հոգի եմ դնելու ձեր մեջ» (Եգ. 36:26):

Աստված մեր փոխարեն իր սքանչելի շնորհքով մեծ գին վճարեց մեղքի պատճառով եղած մեր ապստամբության համար: Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով Աստված ոչ միայն մեզ առաջարկում է նոր սկիզբ, այլև մեր մեջ գործում մեր սրտերը փոխելու համար, եթե իրեն հետևենք: Որքա՛ն բարի է Աստված: Երբ մենք կորսված էինք ու թաքնվում էինք մեր մեղքերի մեջ, Աստված մեզ մոտեցավ Հիսուսի միջոցով, որ եկավ մեզ փնտրելու ու փրկելու (Ղուկ. 19:10, Հռոմ. 5:8):

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ Քո բարության համար: Օգնիր ինձ, որ Քեզ որոնեմ ու հավատարմությամբ հետևեմ Քեզ: Ամեն:

Աստված մեզ կատարելապես ճանաչում է ու շատ է սիրում:

Կարդա՛ր Եգեկիել 8

Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմությամբ, Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելով, մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը: Ա Պետ. 1:3

Գլուխգործոցներ տեսնել

Հայրս հատուկ կապարճներ է շինում աղեղնաձիգների համար: Նա ճարտար ու ընտիր կերպով փորագրում է մաքուր կաշվի վրա վայրի կենդանիների պատկերներ ու ապա կարում դրանք կապարճների վրա: Մի անգամ նրան այցելելու ժամանակ ուշադրությամբ հետևեցի իր մի արվեստի գործին: Նրա ուշադիր ձեռքերը հարկավոր ճնշումն արեցին, երբ իր սուր դանակը խրեց դյուրաթեք ու կակուղ կաշվի մեջ՝ ստեղծելով գանազան տեսակի գործվածքներ: Ապա մի լաթ թաթախելով բոսոր ներկի մեջ՝ թեթև ներկի հարվածներ տվեց կաշվին՝ իր ստեղծագործության գեղեցկությունը ավելի պարզելով:

Կարդա՛

Սաղմոս 138.11-18

...մորս որովայնից
իմձ ընդունեցիր:
Սաղմ. 138.13

Մինչ հիանում էի հորս վստահ արհեստագիտությամբ, հասկացա, թե որքա՛ն հաճախ եմ ձախողում շնորհակալ լինելու իմ երկնավոր Հոր ստեղծագործությանը՝ հայտնված իմ և ուրիշների կյանքերի մեջ: Խորհրդածելով Աստծո չքեղ արհեստագիտության վրա՝ հիշեցի Դավիթ Թագավորի հաստատումը, թե Աստված ստեղծում է մեր «ներսի մարդուն», և մենք «ահեղ ու սքանչելի գործեր» ենք (Սաղմ. 138.13-14): Մենք կարող ենք փառավորել մեր Արարչին վստահությամբ, որովհետև մենք գիտենք, թե իր «գործերը սքանչելի» են (Հմ. 14): Ու մենք կարող ենք քաջալերվել՝ ուրիշներին ու ինքներս մեզ պատվելու, հատկապես երբ հիշենք, որ Տիեզերքի Արարիչը մեզ շատ լավ գիտի ու մեր օրերը ծրագրեց նրանց ստեղծվելուց առաջ (Հմ. 15-16): Հորս ճարտար ձեռքերով փորագրված դյուրաթեք կաշվի նման մենք էլ առանձին-առանձին գեղեցիկ ու արժեքավոր ենք, պարզապես որովհետև մենք էլ Աստծո հատուկ ստեղծագործությունն ենք: Մեզնից յուրաքանչյուրը ձևավորված է հատուկ ու նպատակադրված՝ լինելու Աստծո սիրելի գլուխգործոցը, ինչը ցույց է տալիս Աստծո գերազանցությունը:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք մեզ Քո սքանչելի սիրով ստեղծելու համար: Օգնիր մեզ, որ տեսնենք մենք մեզ և ուրիշներին՝ որպես Քո հատուկ գլուխգործոց: Ամեն:

Աստված ճարտարությամբ է ստեղծում յուրաքանչյուր անձի՝ եզակի ու նպատակադրված:

Մի թիվ վերցրու

Մեր տան ետևում ունենք կեռասի մի հին ծառ, որ բազմաթիվ պտղաբեր տարիներ է ունեցել: Սակայն հիմա չորանալու վրա է կարծես: Հետևաբար մի ծառագետ կանչեցի, որ իր կարծիքը հայտնի: Ծառը մոտիկից տեսնելուց հետո նա եզրակացրեց, որ այն «չափազանց մեծ ճնշումի տակ էր» և կարիք ուներ անմիջական խնամքի: Կինս՝ Կարոլինը, մրթմրթաց ու ծառից հեռացավ ասելով. «Մի թիվ վերցրու»: Դա օրերից մեկն էր:

Անշուշտ մենք էլ ունենք անձկալի օրեր՝ լեցուն մտահոգություններով՝ մեր ընտանիքների, մեր զավակների... ու մեր գործերի համար: Այսուհանդերձ, Հիսուսը մեզ վստահեցրել է, թե հակառակ նեղացուցիչ հանգամանքներին՝ մենք կարող ենք խաղաղություն ունենալ: Նա ասաց. «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ...» (Հովհ. 14:27): Հիսուսի օրերն էլ լեցուն էին ճնշումներով ու խռովություններով: Նա պաշարված էր թշնամիներով ու սխալ էր հասկացված ընտանիքի անդամների ու բարեկամների կողմից: Նա հաճախ տեղ չուներ իր գլուխը դնելու: Հակառակ այս բոլորին՝ իր վարմունքի մեջ բնավ չկար ճնշումի ու նեղատուլթյան հետք: Նա ուներ ներքին խաղաղություն ու հանդարտություն: Այս խաղաղությունն է, որ մեզ տվել է ազատություն անցյալի, ներկայի ու ապագայի մտահոգության ճնշումներից: Այս խաղաղությունը «Իր խաղաղությունն» է: Մենք կարող ենք փառավորել մեր Արարչին վստահությունով, որովհետև մենք գիտենք, թե իր «գործերը սքանչելի» են (Հմ. 14): Ու մենք կարող ենք քաջալերվել՝ ուրիշներին և մեզ պատվելու, հասկապես երբ հիշենք, թե Տիեզերքի Արարիչը մեզ շատ լավ գիտի ու մեր օրերը ծրագրել է մեր ստեղծվելուց առաջ (Հմ. 15-16):

Կարդա՛ր
Յովհ. 14. 15-27

Խաղաղությունն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ:

Յովհ. 14.27

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք մեզ Քո սքանչելի սիրով ստեղծելու համար: Օգնիր մեզ, որ տեսնենք մենք մեզ և ուրիշներին՝ որպես Քո հատուկ գլուխգործոց: Ամեն:

Մեր տազնապների մեջ կարող ենք խաղաղություն գտնել Քրիստոսով:

Ուղղաթիռի հուճեր

Երբ մեր զավակները փոքր էին, սիրում էին բռնել «ուղղաթիռի հատիկները», որոնք ընկնում էին մեր զբացիի արծաթյա թխկի ծառից: Յուրաքանչյուր հատիկ նման է թևի: Գարնան վերջին նրանք գետնին են թափվում ուղղաթիռի պտտվող շեղբերի նման: Հատիկների նպատակը թռչելը չէ, այլ ընկնել գետնին ու ծառերի վերածվել:

Հիսուսը խաչվելուց առաջ Իրեն հետևողներին ասաց. «Ժամը հասավ, որ Մարգու Որդին փառավորվի... Եթե ցորենի հատիկը հողի մեջ չընկնի ու մեռնի, միայն ինքը կմնա, բայց եթե մեռնի, շատ արդյունք կտա» (Հովհ. 12.23-24):

Մինչ Տեր Հիսուսի աշակերտները ցանկանում էին Նրան որպես Մեսիայի փառավորված տեսնել, Նա եկավ Իր կյանքը տալու, որպեսզի մենք ներում ստանանք ու բարեփոխվենք Իր վրա մեր ունեցած հավատքով: Որպես Հիսուսի հետևողներ՝ լսում ենք Իր խոսքերը. «Իր անձը սիրողը կկորցնի այն, իսկ այս աշխարհում իր անձն ստողը հավիտենական կյանքում կպահի այն: Եթե մեկը ծառայում է ինձ, իմ հետևից թող գա նա, և ուր որ ես եմ, իմ ծառան էլ այնտեղ կլինի: Եթե մեկն ինձ ծառայի, Հայրը նրան կպատվի» (Հմ. 25-26):

Ուղղաթիռի հատիկները մեզ ցոյց են տալիս Հիսուսի՝ Փրկչի հրաշագործությունը, որ մեռավ, որպեսզի մենք ապրենք Իր հետ:

Աղոթք - Տեր Դիսուս, զարմանում եմք Քո հիանալի սիրով: Տո՛ւր մեզ շնորհք՝ այսօր Քեզ ծառայելու: Ամեն:

Կարդա՛

Յովհ. 12.23-33

Եթե ցորենի հատիկը հողի մեջ չընկնի ու մեռնի, միայն ինքը կմնա, բայց եթե մեռնի, շատ արդյունք կտա:

Յովհ. 12.24

Դիսուսը հրավիրում է մեզ մեր կյանքերը տալու՝ Իրեն ծառայելով:

Ցնծության աղաղակ բարձրացրու

Անցյալում երբ մի եկեղեցի էի փնտրում գնալու համար, ընկե-
րուհին ինձ հրավիրեց ներկա լինել իր եկեղեցու պաշտամուն-
քին: Պաշտամունքը առաջնորդողները հրավիրեցին ներկաներին
միասին երգելու մի երգ, որը շատ սիրեցի: Հետևաբար սկսեցի
խանդավառ երգել ու հիշեցի մեր քոլեջի երգչախմբի ղեկավարին,
որ հաճախ մեզ թելադրում էր. «Ցնծալիր»: Երգը երգելուց հետո
ընկերուհուս ամուսինը ինձ դիմելով ասաց. «Շատ բարձր ձայնով երգեցիր»: Ակնարկը
գովասանք չէր: Դրանից հետո միշտ ուշա-
դիր էի երգեցողությանս՝ վստահ, թե իմ
կողքին նատողներից ավելի մեղմ ձայնով
եմ երգում, և միշտ մտածելով, որ շուրջս
եղող մարդիկ չքննադատեն երգելս:

Կարդա՛
Սաղմոս 97

Աղաղակի՛ր Տիրոջ
առջև, ո՛րջ երկիր.
օրհնեցե՛ք, ցնծա-
ցե՛ք ու սաղմո՛ս եր-
գեցե՛ք: Սաղմ. 97.4

Սակայն մի կիրակի նշմարեցի կողքիս նս-
տած կնոջ երգելու ձևը: Նա փառաբանության հոգով էր երգում՝
առանց ինքնագիտակցության նշույլի: Նրա երգեցողությունը հիշեց-
րեց ինձ՝ Դավթի խանդավառ ու ինքնամատույց պաշտամունքը: Սաղ-
մոս 97-ում Դավիթը գտնում է, որ «ողջ երկիրը» պետք է «ցնծա ու
սաղմոս երգի» պաշտամունքի ժամանակ (հմ. 4): Սաղմոսի առաջին
համարը մեզ ասում է, թե ինչո՞ւ պետք է ցնծությունը պաշտամունք
բարձրացնենք՝ հիշեցնելով, թե «Տերը սքանչելագործություններ
արեց»: Սաղմոսի մեջ Դավիթը նշում է Աստծո արած այդ սքանչելի
բաները. Իր հավատարմությունն ու արդարությունը բոլոր ազգերին,
Իր ողորմությունը և փրկությունը: Իմանալով, թե ով է Աստված և ինչ
է արել, մեր սրտերը կարող ենք լցնել փառաբանության հոգով: Ի՞նչ
«սքանչելագործություններ» է արել Աստված քո կյանքում: Շնորհա-
կալության Օրը լավագույն առիթն է՝ հիշելու Նրա սքանչելի գործերը
ու շնորհակալություն հայտնելու: Բարձրացրու ձայնդ ու երգիր:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ իմ Աստվածն ես ու շատ բան
ես արել ինձ համար: Ամեն:

**Պաշտամունքը մեր վրայից վերցնում է կենտրոնացումը ու
դնում ուր պետք է այն լինի՝ Աստծո վրա:**

Յունճք և շնորհակալություն

Հագարավոր տարիներ առաջ Աստված ուղղակի Մովսեսի Հետ խոսեց ու հաստատեց նոր տոն իր ժողովրդի համար: Ելից 23.16-ում Մովսեսի արձանագրության համաձայն՝ Աստված ասաց. «...կկատարես ամառվա քո առաջին բերքը քաղելու տոնը: Տոն կկատարես նաև տարվա վերջում, երբ հանդից հավաքած կլինես քո բերքը»: Այսօր աշխարհի երկրները նման բան են անում՝ տոնելով երկրի բերքը: Կանայում մարդիկ տոնում են Յամը՝ որպես հունճքի տոն: Բրազիլիայում Դիա դի Աբսոն դի Գրասաս տոնը առիթ է՝ երախտապարտ լինելու բերքի համար, որ տրված է ուտելու համար: Չինաստանի մեջ կա Կիս-աշնան տոնը: Միացյալ Նահանգներում և Կանադայում՝ Ծնորհակալության տոնը:

Հասկանալու համար բերքի տոնի նպատակը՝ մենք դիմում ենք Նոյին՝ ճիշտ ջրհեղեղից հետո: Աստված Նոյին և իր ընտանիքին, ու այսօր էլ մեզ, հիշեցրեց իր ունեցած կանխատեսությունը երկրի վրա մեր ծաղկող ու զարգացող գոյություն համար: Երկիրը պիտի ունենա եղանակներ, ցերեկ ու գիշեր, «սերմն ու հունճը» (Ծննդ. 8.22): Մեր շնորհակալությունը այն բերքի համար, որ մեզ պահում է, Աստծուն է գնում: Հոգ է թե որտեղ ես ապրում կամ ինչպես ես տոնում հողի բերքը, ժամանակ տրամադրիր այսօր շնորհակալություն հայտնելու Աստծուն, որովհետև բերք չպիտի ունենաս տոնելու համար՝ առանց Աստծո ստեղծագործ աշխատանքի:

Աղոթք - Սիրելի՛ արարիչ Աստված, շնորհակալ եմ, որ սքանչելի կերպով այս երկիրը ստեղծեցիր՝ եղանակներով, հունճքի ժամանակով ու ամեն ինչով, որի կարիքն ունենք գոյատևելու համար: Ընդունիր մեր երախտագիտությունը: Ամեն:

Երախտագիտությունը ուրախ սրտի հիշողությունն է:

Կարդա՛
Ծննդոց 8.15 - 9.3

Կկատարես ամառվա քո առաջին բերքը քաղելու տոնը: Տոն կկատարես նաև տարվա վերջում, երբ հանդից հավաքած կլինես քո բերքը:
Ելք 23.16

Սրտի իրական տունը

Երկար տարիներ մենք ունեինք որջեր բացելու բնազդ ունեցող փոքր գետնաշուն: Մի առիթով նա տարվեց մեր տան ետևի ժայռի տակ եղող փոքր կենդանիով, որը փորեց ու փորեց մի քանի ոտք խորության ներքնուղի:

Նկատի ունենանք այս հարցը. Ինչո՞ւ ենք մենք՝ մարդ արարածներս, հետապնդում, հետապնդում ու հետապնդում: Ինչո՞ւ ենք արկածախնդրություններ ունենում ու փորձում մագլցել այն լեռները, որոնք որևէ մեկը չի մագլցել, մարտահրավեր նետում բնության ուժերին և վտանգավոր բաներ անում: Մի մասը նման հակումների մեր՝ արկածախնդրություն ունենալու ցանկությունից է, որից հաճույք ենք ստանում: Սակայն դրանից շատ ավելին կա: Դա հակում է, որ մեր մեջ է ցանված: Չենք կարող չուզել Աստծուն գտնել: Ու մեծ կարոտով փափագում ենք նրան ունենալ:

Թերևս տեղյակ չենք այս բանի մասին, սակայն գիտենք, որ ցանկանում ենք մի բան ունենալ: Մարկ Տվենը ասել է. «Չգիտես, թե ինչ ես ուզում ունենալ, սակայն մեռնելու աստիճան մեծ ցանկությամբ ես ուզում ունենալ»: Աստված մեր սրտի ճշմարիտ բնակարանն է: Ինչպես եկեղեցու հայրը համարվող Օգոստինոսն է ասում իր նշանավոր մեջբերման մեջ. «Ո՛վ Տեր, մեզ Քեզ համար ես պատրաստել, ու մեր սրտերը անհանգիստ են, մինչև որ Քո մեջ հաստատվեն»:

Եվ ի՞նչ է սիրտը: Մեր մեջ եղած այն խոր պարապությունն է, որ միայն Աստված կարող է լցնել:

Աղոթք - Օգնիր ինձ, Տեր, տեսնելու իմ ունեցած փափազը Քեզ ունենալու: Ապա լցրու ինձ Քո գիտությամբ: Ինձ Քեզ մոտ պահիր: Ամեն:

Մեր բոլոր ցանկություններում Քեզ համար մեծ փափագ կա:

Կարդա՛ր
Ժողովող 3.10-11

Աստված... հավիտենությունը ճանաչելու իղձ տվեց նրանց սրտերին:
Ժող. 3.11

Մարդ արարած լինել

Երբ մի ոստիկանապետի խնդրեցին սահմանել իր ունեցած դերը Հասարակության մեջ, որը երբեմն համապատասխան չէ օրենքների գործադրությանը, չպատասխանեց իր ունեցած դիրքով ու ցույց տալով իր ինքնությունը փաստող կրծքանշանը: Ընդհակառակը, պարզորեն ասաց. «Մենք մարդկային արարածներ ենք, ովքեր գործում են ճգնաժամի մեջ եղող այլ արարածների հետ»:

Իր մարդկայնությունը ու հաստատած հավասարությունը այլ մարդկանց հետ ինձ հիշեցնում են Պետրոսի խոսքերը, երբ գրեց Հռոմեացիների հալածանքին ենթակա առաջին դարի տառապող Քրիստոնյաների մասին: Պետրոսը նկարագրում է. «Բոլորդ համախոհ, կարեկից, եղբայրասեր, բարեսիրտ, քաղցրաբարո՛ եղեք» (Ա Պետ. 3.8): Թերևս Պետրոսն ասում էր, թե լավագույն հակադարձությունը ճգնաժամի մեջ եղող մարդկային արարածներին մարդկային լինելն է՝ զգուշանալով այն բանից, որ մենք բոլորս էլ նման ենք իրար: Վերջապես այդ նույնը չէ՞ր, որ Աստված արեց, երբ Իր Որդուն ուղարկելով մարդեղացավ, որպեսզի կարողանա օգնել մեզ (Հմ. 2.7):

Միայն մեր մեղավոր սրտերը դիտելը փորձություն է մեր մարդկային բնույթը արհամարհելու: Սակայն ի՞նչ է պատահում, երբ մեր մարդկայնությունը նկատի ունենանք որպես մաս մեր մատուցած ընծաների: Հիսուսը մեզ սովորեցնում է, թե ինչպես կարելի է ամբողջովին մարդկային կյանք ապրել՝ որպես ծառաներ, երբ նկատի ենք ունենում, որ մենք բոլորս էլ նույնն ենք: Աստված մեզ «մարդկային» ստեղծեց՝ իր պատկերի նմանությունամբ ստեղծված ու փրկված՝ իր առանց պայմանի սիրով:

Աղոթք - Հայր, օգնիր մեզ խոնարի լինել, մինչ պատասխանում եմք իրար ինչպես մարդը՝ մարդու: Ամեն:

Խոնարիությունը արդյունքն է Աստծուն ու ինքներս մեզ ճանաչելու:

Կարդա՛

Ա Պետ. 2.11-17, 3.8-9

Բոլորդ համախոհ, կարեկից, եղբայրասեր, բարեսիրտ, քաղցրաբարո՛ եղեք: Ա Պետ. 3.8

Աստված գիտի

Երբ Դենիսը եկեղեցում հանդիպեց վշտահար մի կնոջ, ցավեց նրա համար ու մտածեց, թե ինչպես կարող է օգտակար լինել: Որոշեց ամեն շաբաթ ժամանակ անցկացնել նրա հետ՝ խորհուրդ տալով ու աղոթելով: Դենիսը եղավ նրա խորհրդատուն. սակայն եկեղեցու առաջնորդներից ոմանք չնկատեցին նրա թափած ջանքերը ու որոշեցին եկեղեցու պաշտոնյաներից մեկին նշանակել որպես կնոջ խորհրդատու: Նրանք ասացին, թե ոչ ոք նրան հոգ չէր տանում: Հակառակ այն բանի, որ Դենիսը որևէ գովասանք չէր ակնկալում, վհատություն զգացում ունեցավ ու ասաց. «Կարծես թե ոչինչ չեմ անում»:

Սակայն մի օր երիտասարդ կինը ասաց Դենիսին, թե որքա՛ն երախտապարտ էր նրա տված մխիթարությունների համար: Դենիսը քաջալերված զգաց. կարծես Աստված նրան ասում էր. «Գիտեմ, որ դու այնտեղ ես նրա համար»: Դենիսը տակավին կանոնավոր հանդիպումներ է ունենում կնոջ հետ:

Երբեմն մենք էլ չգնահատված ենք զգում, երբ մեր թափած ջանքերը հաշվի չեն առնվում: Սակայն Աստծո Խոսքը մեզ հիշեցնում է, թե Աստված գիտի, թե մենք ինչ ենք անում: Նա նաև տեսնում է, թե ուրիշներն ինչ չեն անում: Ու Նրան շատ ենք ուրախացնում, երբ ծառայում ենք Իր ու ոչ թե մարդկանց գովասանքի համար: Թերևս այդ պատճառով է, որ Հիսուսը օրինակ ծառայեց մեզ՝ ասելով, թե մեր ողորմությունը պիտի անենք «ծածուկ կերպով», որպեսզի «...Քո Հայրը, որ ծածուկ տեղում տեսնում է, քեզ հայտնապես հատուցի» (Մատթ. 6.4): Մենք ուրիշներին չպիտի նայենք ճանաչումի ու գնահատանքի համար: Մենք կարող ենք քաջալերվել, որովհետև Աստված գիտի, որ մենք հավատարիմ ենք Իրեն և ուրիշներին ծառայելու մեջ:

Աղոթք - Տեր, ներիր ինձ այն պահերի համար, երբ ուրիշների գնահատանքի ու փառաբանության բաղձանքն եմ ունենում: Ամեն:

Աստված տեսնում է ամեն ինչ, որ անում ենք Իր համար:

Կարդա՛ր
Մատթեոս 6. 1-4

...քո Յայրը, որ ծածուկ տեղում տեսնում է, հայտնապես կհատուցի քեզ: Մատթ. 6.4

Ավելի լավ ճանաչել

Երբ մեր որդեգրած տղային տուն բերեցինք, ես անհամբեր էի սիրով ողողելու նրան ու հայթայթելու ամեն բան, ինչից զրկված էր անցյալում: Հատկապես ընտիր ճաշ, որի պատճառով թերանուցում ունեւր: Սակայն հակառակ մեր բոլոր ջանքերին՝ ներառյալ անդաբանի խորհուրդը, նա շատ քիչ էր աճում: Մտաւորապես երեք տարի հետո իմացանք, որ նա որոշ կերակուրների հանդեպ սահմանափակութուն ունեւր: Երբ այդ տեսակի կերակուրները հանեցինք նրա ճաշացանկից, մի քանի ամսվա մեջ նա աճ ունեցավ, իսկ ես տրտմում էի, որ անգիտակցաբար այդքան հրամցրել էի այն կերակուրները, որոնք նրա աճին արգելք էին եղել:

Ես մտածում եմ, թե Հոսիան նման զգացում ունեցավ, երբ Օրենքի գիրքը գտնվեց տաճարի մեջ երկար տարիներ կորած լինելուց հետո: Մինչ ես ցավ էի ապրում, թե ինչպես էի որդուս աճին արգելք եղել, Հոսիան ողբաց, որ անգիտակցաբար նկատի չէր ունեցել Իր ժողովրդի հանդեպ Աստծո ունեցած լավագույն մտադրութունները (Դ Թագ. 22.11): Հակառակ այն իրողության, որ նա գնահատված էր Աստծո կողմից իր արածների համար (Հմ 2), նա ավելի լավ սովորեց, թե ինչպես պիտի պատվել Աստծուն Օրենքը գտնելուց հետո: Այս նոր գտնված գիտութունով նա առաջնորդեց ժողովրդին դարձյալ պաշտելու այնպես, ինչպես որ Աստված ցույց տվեց նրան (23.22-23): Մինչ սովորում ենք Աստվածաշնչի միջոցով, ողբում ենք՝ տեսնելով, թե ինչպես մեզ համար Աստծո ունեցած ծրագրից հեռու ենք մնացել: Ու տակավին կարող ենք մխիթարվել, թե նա կարող է բուժել, նորոգել ու առաջնորդել մեզ ավելի լավ հասկանալու:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ, որ ինձ ցույց տվեցիր, թե ինչպես պիտի ապրեմ Քեզ հաճո լինելու համար: Ներիր ինձ նրա համար, ինչ որ ես չկարողացա անել Քեզ պատվելու ու հնազանդվելու համար: Ամեն:

Աստված մեզ նոր սկիզբ է տալիս:

Կարդա՛

Դ Թագ. 22.1-4, 8-13

Երբ արքան լսեց օրենքի գրքի խոսքերը, իր զգեստները պատառոտեց: Դ Թագ. 22.11

Մեր հզոր Աստված

Մի օր ծովեզերքին կանգնած մեծ հաճույքով դիտեցի բարձր առագաստով փրփրաբաշ ալիքների հոսանքով ընթացողներին, որոնք քամու ուժով առաջ էին շարժվում ջրերի վրա: Երբ նրանցից մեկը ցամաք ելավ, հարցրեցի, թե արդյոք փրփրաբաշ ալիքների հոսանքով ընթանալու այդ փորձառությունը այդքան դժվա՞ր էր: «Ո՛չ», ասաց նա: «Իրականում ավելի դյուրին է, քան միայն ալիքների հոսանքով ընթանալը, որովհետև երբ առագաստով ես ընթանում, առաջ ես գնում քամու մղիչ զորությունամբ»:

Երբ շարունակեցի քայլել ծովեզերքին, մտածեցի քամու կարողության մասին, որ ոչ միայն ընթացողներին էր առաջ մղում, այլև մագերս երեսիս խփում: Կանգ առա՝ սքանչանալու մեր Արարչագործ Աստծո արածով, ինչպես տեսնում ենք Ամոս մարգարեի գրքում, ուր ասում է. Նա, որ «ելնում է բարձունքների վրա» և «հաստատում է հողմերը», ստեղծում է նաև «առավոտն ու մեզը» (Հմ. 4.13):

Այս մարգարեի միջոցով Աստված հիշեցնում է իր ժողովրդին իր ունեցած զորություն մասին, մինչ հրավիրում է նրանց ետ իրեն վերադառնալ: Որովհետև նրանք իրեն հնազանդ էին եղել, Նա ասում է, թե իրեն պիտի հայտնի անի նրանց (Հմ. 13): Թեև մենք այստեղ տեսնում ենք Նրա դատապարտությունը, նաև գիտենք ըստ իր խոսքի մեզ տրված իր զոհաբեր սիրո մասին, որը հայտնվեց իր Որդու՝ Տեր Հիսուսի միջոցով (Հովհ. 3. 16):

Այդ գով օրը քամու զորությունը Բրիտանիայի Հարավային շրջանի ծովափին ինձ հիշեցնում է Տիրոջ անհունությունն ու վիթխարիությունը: Եթե դու այսօր զգում ես քամու զորությունը, ինչո՞ւ կանգ չես առնում ու մտածում մեր հզոր Աստծո մասին:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Քո սիրո ու զորության համար: Օգնիր մեզ, որ ամեն օր Քեզ վստահենք: Ամեն:

Աստված իր մեծ սիրով ստեղծեց աշխարհը: Փառք իրեն:

Կարդա՛ր Ամուս 4.12-13

...հաստատում եմ
հողմերը, ես եմ
ճա... Ամենակալ
Տեր Աստված է
ճրա անունը:
Ամոս 4.13

Համակրանքի գորությունը

Այն պահին, երբ հազնես «Տարիքի տարազը», անմիջապես կզգաս քառասուն տարի ավելի ծերացած, որովհետև տեսողությունդ խանգարվում է, լսողությունդ կորչում, և հեշտ շարժվելու դժվարություն ես ունենում: Այս «Տարիքի տարազը» պատրաստված է օգնելու հիվանդապահահներին ավելի լավ հասկանալ իրենց հիվանդներին: «Վոլ Սթրիթ» թերթի թղթակից Ջեֆրի Ֆաուլերը այս տարազը հազնելով գրեց. «Անմոռանալի և ժամանակ առ ժամանակ այս տառապալից փորձառությունը լույս սփռեց ոչ միայն ծերություն վրա, այլև սովորեցրեց, թե ինչպես իրականությունը մոտ եղող մի գործիք կարող է մեզ սովորեցնել համակրանք և ձևավորել մեր շուրջ եղող աշխարհի ըմբռնումը»: Համակրանքը գորություն է՝ հասկանալու և կիսելու ուրիշների զգացումները: Հիսուսին հետևողների ծանր հալածանքի ժամանակ Եբբայեցիների նամակի հեղինակը թախանձում է հավատակից քույրերին և եղբայրներին՝ ասելով. «Հիշեցե՛ք բանտարկյալներին, որպես թե դուք էլ նրանց հետ կապվածներ եք» (13.3):

Ճիշտ սա է արել մեր Փրկիչը մեզ համար: Հիսուսը մեզ նման եղավ. «Ուստի պետք էր, որ նա եղբայրներին բոլորովին նմանվեր, որպեսզի ողորմած լիներ և հավատարիմ քահանայապետ Աստծու կողմից, որպեսզի ժողովրդի մեղքերը քավեր: Որովհետև ինքը, որ չարչարվեց ու փորձվեց, կարող է փորձվողներին էլ օգնել» (2.17-18): Քրիստոսը՝ Տերը, որ մեզ նման եղավ, կոչ է անում մեզ ուրիշների կողքին կանգնելու, «կարծես թե մենք էլ նրանց հետ էինք» կարոտություն ժամանակ:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, հիանում ենք մեզ նման լինելու Քո պատրաստակամության համար, որպեսզի գնես մեր փրկությունը: Տո՛ւր մեզ շնորհքը՝ ուրիշների կողքին լինելու, ովքեր զանազան կարիքներ ունեն այսօր: Ամեն

Հիսուսը կոչ է անում մեզ ուրիշների կողքին մնալու, կարծես թե մենք նրանց տեղում ենք:

Կարդա՛
Եբր. 2.14-18, 13.1-3

Հիշեցեք բանտարկյալներին, որպես թե դուք էլ նրանց հետ կապվածներ եք:

Եբր. 13.3

Ո՛չ կատարյալ, սակայն սիրված

Ճապոնիայում ուստելիքները շատ մաքուր են պատրաստվում և փաթեթավորվում: Ուստելիքները ոչ միայն համեղ պիտի լինեն, այլև ներկայանալի ձև ունենան, որովհետև ճապոնցիները շեշտը դնում են բարձր որակի վրա, և փոքր թերուժյունով ապրանքները հաճախ են անտեսվում: Շատ անգամ ես ինձ հարց եմ տալիս՝ ասելով. «Ես ուստելի՞քն եմ գնում, թե՞ փաթեթավորումը»: Սակայն վերջին տարիներին «wakeari» արտադրանքը, որ ճապոներեն նշանակում է «մի պատճառ ունի», ժողովրդականություն չահեց: Այս արտադրանքները աղբանոց չեն նետվում, այլ վաճառվում են ավելի էժան՝ տալով պատճառը:

Բարեկամս, որ ապրում է Ճապոնիայում, ասում է, թե «wakeari»-ին նաև արտահայտություն է այն մարդկանց համար, ովքեր կատարյալ չեն: Տեր Հիսուսը սիրում է բոլորին՝ ներառյալ «wakeari»-ներին, որոնք դուրս են նետվում հասարակությունից: Երբ մեղավոր մի կին խմացավ, որ Հիսուսը փարիսեցու տանը ընթրիք է անում, այնտեղ գնաց ու լալով ծնկի եկավ Նրա ոտքերի առջև (Ղուկ. 7.37-38): Փարիսեցին կնոջը պիտակեց որպես «մեղավոր» (Հմ. 39), սակայն Հիսուսը ընդունեց նրան: Նա ազնվությունը հետը խոսեց՝ վստահեցնելով, թե նրա մեղքերը ներված են (Հմ. 48): Տեր Հիսուսը սիրում է ոչ կատարյալներին, որոնց մեջ ենք դու և ես: Ու լավագույն օրինակը մեր հանդեպ Իր սիրո այն է, թե «երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հռոմ. 5.8): Որպես այս սերը ստացողներ՝ թող մենք մեր շուրջ եղող կոտրած մարդկանց համար լինենք Իր սիրո փողոթակը, որպեսզի նրանք էլ իմանան, որ կարող են Աստծո սերը վայելել՝ հակառակ իրենց անկատարության:

Կարդա՛ր Ղուկաս 7. 36-50

Բայց Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց. երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: Դոմ. 5.8

Աղոթք - Տե՛ր, գիտեմ, թե կատարյալ չեմ. ուստի օգնիր ինձ, որ չլինեմ կեղծավոր ու ձևացնեմ, թե ամեն բան ունեմ: Բա՛ց սիրտս ուրիշների հանդեպ՝ ընդունելու և սիրելու, որպեսզի նրանք գիտենան, թե Դու սիրում ես: Ամեն:

Կոտրած մարդիկ կատարյալ են լինում Աստծո սիրով:

Վերջինը պիտի լինի առաջինը

Անցյալներում վերջիններից էի չնշանակված աթոռներով ճամփորդական ինքնաթիռ բարձրացողների շարքում: Ինքնաթիռի թևին մոտ մեջտեղի աթոռին կարելի էր նստել, սակայն ձեռքի պայուսակս պիտի դնեի վերջին շարքի վերևում եղող խորշում: Մա նշանակում էր, թե պարտավոր էի սպասել բոլոր ճանապարհորդներին, որպեսզի կարողանայի պայուսակս վերցնել:

Ինքս ինձ խնդացի՝ նստելով իմ տեղում, ու խորհուրդ եկավ ինձ, որ թվում էր Տիրոջից է. «Իրականություն մեջ քեզ չպիտի նեղի սպասելը: Ընդհակառակը՝ քեզ բարիք պիտի անի»: Հետևաբար որոշեցի ուրախ լինել ավելորդ ժամանակով, որը

ինձ առիթ պիտի ընծայեր մյուս ճամփորդներին իրենց պայուսակները ցած իջեցնելու և ինքնաթիռի սպասարկողների մաքրություն աշխատանքներին օգնելու: Երբ ժամանակը հասավ պայուսակս ետևից վերցնելու, դարձյալ խնդացի, երբ ճամփորդներից մեկը մտածեց, թե ես ընկերություն պաշտոնյաներից մեկն էի:

Այդ օրվա փորձառությունը ինձ առիթ ընծայեց խորհրդածելու Տեր Հիսուսի աշակերտներին ասած խոսքի մասին. «Եթե մեկն ուզում է առաջինը լինել, թող ամենքից վերջինն ու ամենքի ծառայի» (Մարկ. 9.35): Այդ օրը ես սպասեցի, որովհետև պարտավոր էի, սակայն Տեր Հիսուսի «գլխիվայր» թագավորության մեջ պատվո տեղ կա նրանց համար, ովքեր կամավոր կերպով են ծառայում ուրիշներին:

Տեր Հիսուսը եկավ մեր աճապարանքի «առաջ ես» մտադրությունը աշխարհը ոչ թե «որ իրեն ծառայեն, այլ որպեսզի ինքը ծառայի և շատերի փոխարեն իր անձը փրկանք տա» (Մատթ. 20.28): Մենք մեր լավագույն ծառայությունն ենք մատուցում Տիրոջը՝ ուրիշներին ծառայելով: Որքան ավելի խոնարհվենք, այդքան ավելի Իրեն կմոտենանք:

Աղոթք - Սիրո՞ղ Տեր, օգնիր ինձ Քեզ հետևելու՝ ուրիշների կարիքները տեսնելով ու Քեզ ծառայելու այդտեղ: Ամեն:

Հիսուսի թագավորությունը «գլխիվայր» է:

Կարդա՛

Մարկոս 9. 33-37

...ով իր անձը խոնարհեցնի, կբարձրանա: Մատթ. 23.12

Խոզապուխտ և հավկիթ

Հավի և խոզի հեքիաթում երկու կենդանիները խորհրդակցում են միասին ճաշարան բացելու կարելիություն մասին: Մինչ նրանք ծրագրում են ճաշացուցակը, հավը առաջարկում է ապուխտ և հավկիթ հրամցնել: Խոզը շուտով հակառակվում է՝ ասելով. «Ո՛հ, շնորհակալ եմ: Այդ պարագայում ես ամբողջովին պետք է հանձնվեմ, մինչ դու միայն պարզապես պիտի մասնակցես»: Հակառակ նրան, որ խոզը հոգ չարեց ինքն իրեն ափսեի վրա դնելու, իր ունեցած հանձնվելու հասկացողությունը շինիչ բան է ասում ինձ, մինչ ավելի լավ եմ սովորում ամբողջ սրտով Աստծուն հետևել:

Իր թագավորությունը պաշտպանելու համար Հուդայի թագավոր Ասան մեծ ջանք թափեց՝ դաշինք կնքելու Սիրիայի թագավոր Բենադազի հետ: Այս ծրագիրը իրագործելու համար նա Աստծո տաճարի արծաթե ու ոսկե գանձերի կողքին իր անձնական գանձերից ուղարկեց՝ Բենադազին սիրաշահելու համար (Բ Մնաց. 16.2): Բենադազը համաձայնեց: Նրանց միացյալ ուժերը Իսրայելին զարկեցին ու կործանեցին:

Սակայն Աստծո Անան մարգարեն Ասային անմիտ կոչեց, որովհետև նա մարդուօրին ապավինեց ու ոչ թե Աստծուն, որ նախապես շատ ուրիշ թշնամիներ իրենց ձեռքն էր հանձնել: «Քանզի Տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպեսզի նա զորացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են» (Հմ. 9): Մինչ մենք դիմազրավում ենք մեր պատերազմներն ու մարտահրավերները, եկեք հիշե՛նք, թե Աստված մեր լավագույն դաշնակիցն է: Նա մեզ ուժ ու կարողություն է տալիս, երբ պատրաստ ենք ամբողջ սրտով Իրեն նվիրվելու:

Աղոթք - Տե՛ր, ուզում եմ ամբողջովին Քեզ ապավինել: Շատ հաճախ տեսնում եմ միայն այն, ինչ իմ շուրջն է: Օգնիր ինձ վեր նայելու ու Քեզ վստահելու: Ամեն:

Երբ Աստծուն ենք հանձնվում, Նա միշտ մեր միջոցով է գործում: Օսվալդ Զամբերս

Կարդա՛ր
Բ Մնաց. 16. 1-9

Քանզի Տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպեսզի նա զորացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են:
Բ Մնաց. 16.9

Սպասել

«Քանի՞ օր կա Ս. Ծնունդին»: Երբ զավակներս փոքր էին, այս հարցն էին տալիս ամեն անգամ: Թեև մենք զալուստի օրացույց էինք գործածում՝ հաշվելու մինչև Ս. Ծնունդ մնացած օրերը, նրանց համար սպասելը տանջանք էր:

Մենք հեշտությամբ ենք նկատում մանուկի սպասելու պայքարը ու տանջանքը, սակայն թերագնահատում ենք Աստծո ժողովրդի մեջ գոյություն ունեցող մարտահրավերը: Օրինակ՝ նկատի առնենք նրանց, ովքեր լսում են Միքիա մարգարեի պատգամը, որ խոստանում է, թե Բեթղեհեմից պիտի գա «Իսրայելի մի իշխան» (5.2), և «կկանգնի, կտեսնի ու կհովվի իր հօտը Տիրոջ զորությամբ» (հմ. 4): Յոթ հարյուր տարի ժողովրդի սպասումից հետո այս մարգարեությունը կատարվեց, երբ Հիսուսը ծնվեց Բեթղեհեմի մեջ (Մատթ. 2.1): Սակայն մարգարեության մյուս մասը դեռ պիտի կատարվի: Մենք հույսով սպասում ենք Տեր Հիսուսի վերադարձին, երբ Աստծո ամբողջ ժողովուրդը «կհաստատվի իրենց Տեր Աստծու անվան փառքի մեջ», և «Նրա հզորությունը պիտի տարածվի մինչև երկրի ծագերը» (Միք. 5.4): Հետո մենք մեծապես պիտի ուրախանանք, որովհետև մեր երկար սպասումը պիտի ավարտվի: Մեզնից շատերը սպասելը դյուրին չեն համարում, սակայն մինչ սպասում ենք, կարող ենք վստահ լինել, թե Աստված պիտի հարգի մեզ հետ լինելու Իր խոստումը (Մատթ. 28.20): Երբ Հիսուսը ծնվեց Բեթղեհեմ փոքր քաղաքում, Նա եկավ կյանք տալու ու ճոխություն տալու (տե՛ս՝ Հովհ. 10.10), կյանք՝ առանց դատապարտության: Մենք վայելում ենք Իր ներկայությունը մեզ հետ այսօր, մինչ անձկագին սպասում ենք Իր վերադարձին:

Աղոթք - Հայր Աստված, սպասում ենք ու հույս ունենք: Սպասում ենք, սիրելի՛ Հիսուս, ինչպես սպասում ենք, որ խաղաղություն տիրի: Սպասում ենք, մխիթարիչ Հոգի, որ ամբողջ աշխարհը Քո սիրո փորձառությունը ունենա: Ամեն:

Սպասում ենք Աստծո խոստումներին՝ հավատալով, որ պիտի իրականանա:

Կարդա՛ Միքիա 5. 2-4

Եվ դու, Բեթղե-
հեմ... քեզնից պի-
տի ելնի ինձ հա-
մար Իսրայելի մի
իշխան... Միք. 5.2

ԾՆՈՒՆԴՐ՝ ՄՐՔՖԵՐԱՐՆ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ

Մատ 230 ընտանիք է բնակվում Մրքֆերարն այգիների շրջանի մեջ, ու իմ բնակարանը 72-րդ շենքում է: Այս շենքերում բնակվող յուրաքանչյուր անձ ունի իր կյանքի հատուկ պատմությունը: Ծննդի տասներորդ հարկում տարեց կին է ապրում, որի զավակները ամուսնացած են և այլ տեղ են բնակվում: Ներկայումս նա մենակ է ապրում, ու իրենից մի քանի դուռ այն կողմ երիտասարդ զույգ կա՝ երկու փոքր երեխաներով՝ տղա ու աղջիկ: Մի քանի հարկ ներքև մի երիտասարդ է ապրում, որ ծառայում է բանակում: Նա եկեղեցի է գնացել նախքան այդ, և կարող է պատահել, որ նորից այցելի այս տարի Ս. Ծնունդին: Այս մարդկանց հանդիպեցի անցյալ տարի Ծնունդին, երբ մեր եկեղեցու անդամներով խթման գիշերը ավետումի ելանք՝ Ծնունդի ուրախությունը բաշխելու: Ամեն Ծնունդի, ինչպես առաջին Ծնունդին, շատերը կան, որ չգիտեն, թե Աստված մեր աշխարհը եկավ որպես Հիսուս մանուկ (Ղուկ. 1.68, 2.21): Կամ չգիտեն այս դեպքի իմաստը, որ «ուրախություն է ավետում, որ ամբողջ ժողովրդին է լինելու» (2.10): Այո՛: Ամբողջ ժողովրդին: Անկախ մեր ազգությունից, մշակույթից, սեռից ու նյութական վիճակից՝ Հիսուսը եկավ մեռնելու մեզ համար ու կատարյալ ներում տալու մեզ, որպեսզի Իր հետ հաշտվենք ու վայելենք Իր սերը, ուրախությունը, խաղաղությունն ու հույսը: Բոլորը՝ դրացի տարեց կնոջից մինչև բոլոր նրանք, որոնց հետ ճաշում ենք, կարիք ունեն լսելու այս ուրախ լուրի մասին:

Առաջին Ծնունդին հրեշտակները այս ուրախության ավետիսը տվեցին: Այսօր Աստված ցանկանում է մեր միջոցով գործելու՝ այս պատմությունը ուրիշներին հասցնելու համար:

Աղոթք - Տե՛ր, գործածիր ինձ՝ ուրիշների կյանքերին դիպչելու Քո գալուստի բարի լուրով: Ամեն:

Հիսուսի Ծննդյան բարի լուրը ամբողջ ժողովրդի ուրախության աղբյուրն է:

Կարդա՛ր Ղուկաս 1. 68-75

Օրինյալ է Իսրայելի Տեր Աստվածը, որ այցելության եկավ և իր ժողովրդին փրկություն բերեց: Ղուկ. 1.68

Յիսուսը սիրում է Մեյսրլին

Երբ քույրս՝ Մեյսրլը, փոքր էր, ծանոթ մի երգ էր երգում իրեն հատուկ ձևով. «Տեր Հիսուսը ինձ սիրում է, Սուրբ Գիրքը Մեյսրլին ասում է»: Սա զայրացնում էր ինձ, որովհետև գիտեի, որ բառերը «Իմ Սուրբ Գիրքը սա է ասում» էին ու ոչ թե «Մեյսրլին»: Սակայն նա շարունակում էր երգել իր ուղած ձևով:

Հիմա գիտեմ, որ քույրս ճիշտ էր: Սուրբ Գիրքն անշուշտ Մեյսրլին ու մեզ բոլորիս ասում է, թե Հիսուսը մեզ սիրում է: Դարձյալ ու դարձյալ այդ ճշմարտությունը մենք կարգում ենք Աստվածաշնչի մեջ: Օրինակ՝ Հովհաննես առաքյալը գրում է. «Այն աշակերտը, որին Հիսուսը սիրում էր» (Հովհ. 21.7, 20): Աստծո սիրո մասին նա մեզ ասում է շատ հայտնի այս համարում. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3.16):

Հովհաննեսը վերահաստատում է սիրո պատգամը Ա Հովհ. 4.10-ի մեջ. «Սրա մեջ է սեր, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ նա մեզ սիրեց...»: Ինչպես Հովհաննեսը գիտեր, թե Հիսուսը սիրում էր իրեն, մենք էլ կարող ենք նույն վստահությունը ունենալ, որ Հիսուսը սիրում է մեզ. Սուրբ Գիրքը մեզ այդպես է ասում:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք այն վստահության համար, թե Դու սիրում ես մեզ: Երախտագիտությանը եմք լցված, որովհետև Դու մեզ այնքան սիրեցիր, որ մեզ համար մեռար: Ամեն:

Կարդա՛

Ա Յովհ. 4. 7 - 16

Սրա մեջ է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ նա մեզ սիրեց:
Ա Յովհ. 4.10

Տեր Յիսուսը ինձ սիրում է: Այս բանը լավ գիտեմ:

Աստծուն վատահել նույնիսկ եթե...

1992-ին տեղի ունեցած պատահարի հետևանքով շարունակ մեջքի, ուսերի և վզի սոսկալի ցավեր եմ ունենում: Ամենատանջալի ու սրտաճմլիկ ցավերի ժամանակ հեշտ չէ Աստծուն վատահել ու իրեն փառավորել: Սակայն երբ վիճակս դառնում է անտանելի, Աստծո հարատև ներկայությունը ինձ մխիթարում է: Նա ուժ է տալիս ու վատահեցնում ինձ իր անփոփոխ բարություն, անսահման զորություն ու պահող շնորհքի մասին: Ու երբ փորձություն եմ ենթարկվում կասկածել Տիրոջս, քաջալերվում եմ Սեղրակի, Միսաքի ու Աբեղնազովի հաստատ հավատքով: Նրանք Աստծուն պաշտեցին ու վատահ եղան, որ Նա իրենց հետ է, նույնիսկ երբ իրենց վիճակը անհույս էր թվում:

Կարդա՛ր
Դանիել 3.13-25

Որովհետև մեր
Աստվածը կարող
է փրկել մեզ:
Դան. 3.17

Երբ Նաբուգոդոնոսոր թագավորը սպառնաց նրանց կրակի հնոցի մեջ նետել, եթե իրենց պաշտած Աստծուց ետ չդառնան ու իր կանգնեցրած ոսկե արձանը չպաշտեն (Դան. 3.13-15), այս երեքը ցույց տվին քաջ ու վատահ հավատք: Նրանք բնավ կասկած չունեցան, թե Աստված իրենց պաշտամունքին արժանի չէր (Հմ. 17), նույնիսկ եթե չի ազատում նրանց իրենց այս վիճակից (Հմ. 18): Ու Աստված միայնակ չթողեց իրենց կարիքի մեջ. նա միացավ նրանց ու պաշտպանեց կրակի հնոցի մեջ (Հմ. 24-25):

Աստված մեզ միայնակ չի թողնում: Նա մեզ հետ է մնում փորձությունների ժամանակ, որոնք կարող են մեզ քանդիչ թվալ Նաբուգոդոնոսորի կրակի հնոցի նման: Եթե նույնիսկ մեր տառապանքը չվերջանա հավիտենականության այս կողմում, Աստված միշտ էլ պիտի լինի ու մնա հզոր, վատահելի ու բարի: Մենք կարող ենք հենվել իր հարատև սիրո ներկայության վրա:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ հետ ես, հոգ չէ թե ինչ վիճակի մեջ եմք: Ամեն:

Հավատքը հաստատված է Ամենակարող Աստծո անփոփոխ բնույթի վրա, ո՛չ թե մեր վիճակի:

Առաջնահերթ բաները սկզբից

Օրանավի թուիչից առաջ ապահովության ցուցումներ են տրվում՝ բացատրելով ինչ անել, երբ սավառնակի ներքին ճնշումը պակասում է: Ճամփորդներին ասվում է, որ թթվածնի դիմակները ցած պիտի իջնեն վերի խորշերից, ու հարկ է նախ դնել դրանք՝ ուրիշներին օգնելուց առաջ: Ինչո՞ւ: Որովհետև ուրիշին օգնելուց առաջ նախ պետք է դու ֆիզիկապես զգաստ լինես:

Երբ Պողոսը գրեց Տիմոթեոսին, շեշտեց կարևորությունը ուշադիր լինելու իր հոգևոր առողջությանը՝ ուրիշներին օգնելուց և ծառայելուց առաջ: Նա հիշեցրեց նրան իր ունեցած զանազան պատասխանատվությունների մասին՝ որպես հովիվ: Այդ օրերին կային սուտ վարդապետներ, որոնց պետք էր դիմադրել (Ա Տիմ. 4.1-5) և սուտ վարդապետությունները շտկել (Հմ. 6-8): Սակայն իր պարտականությունները լավ կատարելու համար կարևորագույնը սեփական կյանքին ու վարդապետությանը ուշադիր լինելն էր (Հմ. 16): Նա կարիք ուներ հոգ տանելու իր հարաբերություններին Տիրոջ հետ՝ նախքան ուրիշների հանդեպ հոգատար լինելը:

Ինչ որ Պողոսն ասաց Տիմոթեոսին, մեզ էլ համապատասխան է: Ամեն օր մենք զանազան տեսակի մարդկանց ենք հանդիպում, որոնք Տիրոջը չեն ճանաչում: Երբ մեզ պետք եղած հոգևոր թթվածինն ենք առնում Աստծո խոսքից, աղոթքի ժամանակ տալով ու Սուրբ Հոգու զորությունը հանձնվելով, մենք կարող ենք ուղիղ պահել մեր հարաբերությունը Աստծո հետ: Այն ժամանակ մենք հոգևոր առումով արթուն վիճակի մեջ կլինենք՝ ուրիշներին օգնելու համար:

Աղոթք - Տե՛ր, բաց Քո խոսքը իմ առջև: Թող շնչեմ ու լցվեմ նրա զորությամբ՝ նախքան դուրս գամ Քո լույսը դառնալու աշխարհի մեջ: Ամեն:

Քրիստոնյայի կյանքը այն պատուհանն է, որի միջոցով ուրիշները Տե՛ր Հիսուսին են տեսնում:

Կարդա՛

Ա Տիմոթեոս 4.12-16

Անձիդ ու թո
ուսուցման նկատ-
մամբ զգո՛ւյշ կաց...
Ա Տիմ. 4.16

Անակնկալ շնորհք

Ավագ դպրոցի ավարտական տարին մի շաբաթ օր վաղ առա-
վոտ ուզում էի շուտ հասնել աշխատանքի՝ տեղական բուսաբույս-
ագի խաղաարահի մոտ: Նախորդող երեկոյան, երկար մնալով, ցեխոտ
սալահատակը ես էի մաքրել, որովհետև բարապանը վատառողջ լի-
նելու պատճառով աշխատանքի չէր եկել: Վերակացուին հոգս
չպատճառելու համար չասացի բարապանի հիվանդությունն մասին,
որպեսզի իմ արած աշխատանքով անակն-
կալ անեի նրան: Ու ես ինձ մտածեցի.
«Ի՞նչ սխալ բան կարող է պատահել»:

Շատ բա՛ն: Ինչը և եղավ: Առավոտ
ներս մտնելով՝ տեսա ամեն տեղ ջուր, ջրի
վրա օրորվող զնդակախաղի կապեր, զու-
գարանի թղթեր և խաղի նիշերը արձա-
նագրելու ցուցակի թղթերի տուփեր: Այդ
ժամանակ հասկացա, թե ինչ էի արել նա-
խորդ երեկո: Գետինը մաքրելու ժամանակ ջրի ծորակը բաց թող-
նելով՝ տուն էի գնացել: Ջարմանալիորեն վերակացուն ժպտով
ողջագուրեց ինձ՝ ասելով. «Փորձելո՛ւք համար»:

Սողոսը հալածում էր Քրիստոնյաներին (Գործք 9.1-2), երբ
Տեր Հիսուսի հետ դեմ-հանդիման կանգնեց Դամասկոսի ճամփի
վրա (Հմ. 3-4): Հիսուսը դիմադրավեց շուտով Պողոս կոչվելիք
առաքյալին իր գործած մեղավոր արարքի համար: Իր ունեցած
այդ փորձառություն պատճառով կուրացած Սողոսը կարիք ու-
ներ Քրիստոնյայի՝ Անանիային, իր տեսողությունը ետ ստանա-
լու համար՝ քաջություն և շնորհքի արարքով (Հմ. 17):

Պողոսը և ես անակնկալ շնորհք ստացանք: Շատերը գիտեն, թե
սխալ բաներ են արել: Անանիայի նման, կամ նույնիսկ վերակացուիս,
Տեր Հիսուսի հետևողները պետք է լինեն շնորհքի դեմքը ուրիշների
հետ եղած կյանքեր փոխող այս հանդիպումների ժամանակ:

Աղոթք - Տեր, օգնիր, որ կարողանանք Քո լույսը ցուցնել ու պարզա-
պես միջոց դառնալ՝ Քեզ ուրիշներին ներկայացնելու համար: Ամեն:

**Քրիստոնյայի շնորհքով արած արարքները կարող են
հարթել դեպի Փրկիչը տանող ճամփան:**

Կարդա՛
Գործք Առ. 9.1-19

Ես տեսիլքի մեջ
Անանիա անունով
մի մարդու տեսավ,
որ մտավ, ձեռքն իր
վրա դրեց, որ տես-
նի: Գործք Առ. 9.12

Դուրսը ներս

«Փոփոխություն. ներսից դուրս, թե՞ դուրսից ներս», - ասում է մի խորագիր: Միտք կա, թե արտաքինը փոխվում է չպարզելու նման, և կամ լավ կեցվածքը կարող է դուրսին միջոց լինել մեր ներքին զգացումները և նույնիսկ մեր կյանքերը փոխելու:

Գրավիչ միտք է սա: Ո՛վ չպիտի ցանկանա այսօր բարելավել իր կյանքը դուրսին կերպով ու ստանալ նոր տեսք: Մեզնից շատերը գիտեն, թե խորապես արմատացած սովորությունները փոխելը անկարելի է թվում: Սովորական արտաքին փոփոխությունը մեզ հույս է տալիս, թե կա ավելի արագ միջոց մեր կյանքերը բարելավելու համար:

Թեև նման փոփոխությունները կարող են բարելավել մեր կյանքերը, Աստվածաշունչը հրավիրում է մեզ որոնելու ավելի խոր կերպարանափոխություն, այն, որ հնարավոր չէ մեր ուժերով: Գաղատացիներին իր գրած նամակում Պողոսը ասում է, թե նույնիսկ Աստծո օրենքը, որ իր ժողովրդին տրված արժեքավոր պարգև էր, չկարողացավ բուժել նրանց օրինազանցությունը (Հմ. 3.19-22): Հավատքով եղած ճշմարիտ բուժում և ազատություն է պահանջվում Քրիստոսին հազնելու համար (Հմ. 27), իր Հոգու միջոցով (5 .5): Իր միջոցով զատված ու ձևավորված լինելով՝ նրանք կարող էին ունենալ իրենց իսկական ինքնությունն ու արժեքը՝ հաստատելով, թե ամեն հավատացյալ հավասարապես ժառանգորդ է Աստծո տված խոստումների (3. 28-29): Մենք կարող ենք հեշտությամբ շատ ջանք դնել՝ մեր անձերի բարելավման միջոցներ գտնելու, սակայն խորագույն ու ամենից գոհացուցիչ փոփոխությունը մեր սրտերում գալիս է՝ ճանաչելով այն սերը, որ ցանկացած մտքից վեր է (Եփ. 3.17-19): Սեր, որ ամեն բան փոխում է:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ միայն մեր կարողության վստահելու կարիքը չունենք: Շնորհակալ եմք մեզ բարեփոխող Գոգուն ու օրեցօր Քեզ ավելի մոտեցնելու համար: Ամեն:

Գիտուսով է հնարավոր ճշմարիտ ու մնայուն կերպարանափոխությունը:

Կարդա՛
Գաղ. 3. 23-29

Քանի որ ամենքդ, որ Քրիստոսով մկրտվեցիք, Քրիստոսին եք հազել: Գաղ. 3.27

Վերանորոգված ձախողություններ

Հյուր նվազախումբը առաջնորդում էր մեր եկեղեցու փառաբանությունյան պաշտամունքը, ու նրանց սերը Տիրոջ հանդեպ հուզիչ էր: Երաժիշտները հայտնեցին, թե իրենք նախապես բանտարկյալներ էին եղել: Հանկարծ նրանց երգեցողությունը հատուկ նշանակություն ունեցավ, ու տեսանք, թե իրենց փառաբանությունյան խոսքերը որքա՛ն մեծ իմաստ ունեին իրենց համար: Նրանց բարձրացրած պաշտամունքը վկայություն էր իրենց կոտրած ու վերանորոգված կյանքերի:

Աշխարհը կարող է ողջագուրել ու գնահատել հաջողությունը: Սակայն մարդկանց անցյալի ձախողությունների պատմությունները հույս են ներշնչում: Նրանք մեզ վստահեցնում են, թե Աստված մեզ սիրում է, հոգ չէ թե քանի անգամ ենք մենք ձախողել: Հովիվը՝ Գարի Ինրիզը, ասում է, թե ինչ որ մենք կոչում ենք Հավատքի Ուսումնարան Եբրայեցիս 11-ի մեջ, շատ դյուրություններ կարելի է կոչել ետ պահանջված ձախողությունների Աստծո ուսումնարանը: Ինրիզը գրում է. «Շատ հազվագյուտ կարելի է գտնել մի անձ այդ գլխում՝ առանց լուրջ բիծի կամ արատի իր կյանքով: Սակայն Աստված գործի վրա է՝ վերանորոգելու այդ ձախողությունները, ու դա Աստծո շնորհքի կարևոր մեկ սկզբունքն է»: Սիրում եմ 144-րդ Սաղմոսի տված մխիթարությունը, որ խոսում է Աստծո «հրաշագործությունների» (Հմ. 5-6) և արքայական փառքի մասին (Հմ. 11): Նա ներկայացնում է Նրա սերը (Հմ. 8-9) և հավատարմությունը (Հմ. 13), ապա մեզ ասում է, թե Նա վեր է բարձրացնում նրանց, որոնք ընկած են (Հմ. 14): Երբ մեզ վեր է բարձրացնում, Իր բոլոր հատկություններն են ներկայացվում: Աստված վերանորոգելու գործի վրա է: Նրանք, ովքեր փրկված են, Աստծո շնորհքի պատմություններն են:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք, որ մեզ վեր ես բարձրացնում, երբ ընկնում ենք, ու պահում ես, երբ սայթաքում ենք: Ամեն:

Մեր ձախողության պատմությունները Աստծո հաջողության պատմություններն են:

Կարդա՛ր
Սաղմոս 144. 1-16

Տերն ամուր է պահում բոլոր սայթաքողներին և ոտքի կանգնեցնում բոլոր գլորվածներին:
Սաղմ. 144.14

Ամեն ինչ պարզ է

Լոնդոնի Կաֆե Ռանդելվուն ունի շատ գեղեցիկ լույսեր, նստելու հանգիստ բարձեր և սուրճի անուշ բույր: Սակայն չունի հրամցված ապրանքների գնացուցակ: Նախապես սկսվեց որպես գործ՝ տեղական եկեղեցու կողմից, սակայն մի տարի հետո սրճարանը փոխվեց: Տնօրենները զգացին, որ Աստված կանչում է իրենց՝ անելու հիմնական փոփոխություն ու ցուցակի բոլոր բաները անվճար դարձնելու: Այսօր այնտեղ կարելի է պատվիրել սուրճ, կարկանդակ կամ սենդվիչ՝ առանց վճարելու: Նույնիսկ նվիրատվության ափսե չկա:

Հարցրի տնօրենին, թե ինչո՞ւ էին այդքան առատաձեռն: Նա սկսեց. «Մենք պարզապես փորձում ենք մարդկանց հետ վարվել այնպես, ինչպես Տերն է վարվում մեզ հետ: Աստված մեզ տալիս է առատորեն, մենք չնորհակալություն հայտնենք կամ ոչ: Մեր երևակայածից շատ ավելի է Նա առատաձեռն մեր հանդեպ»: Հիսուսը մեռավ մեզ մեր մեղքերից ազատելու ու Աստծո հետ հաշտեցնելու համար: Նա գերեզմանից հարուժվելու առավ ու ապրում է այսօր: Սրա համար ամեն սխալ, որ մենք գործում ենք կամ գործել ենք, կարող է ներվել, ու մենք կարող ենք նոր կյանք ունենալ այսօր (Եփ. 2.1-5): Ու ամենից սքանչելի բաներից մեկը սրա մասին այն է, թե այս բոլորը անվճար է: Մենք չենք կարող Հիսուսի տված նոր կյանքը գնել: Նույնիսկ չենք կարող նվիրատվություն անել դրա համար (Հմ. 8-9): Ամբողջը պարզ է:

Կաֆե Ռանդելվուլի մեջ կարկանդակն ու սուրճը ձրի են բաժանվում և Աստծո առատաձեռնությունից մասին փոքրիկ նշույլ ցույց տալիս: Քեզ և ինձ հավիտենական կյանք է առաջարկված, որովհետև Հիսուսը ամբողջ գինը վճարել է:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ մեզ կենաց ջուրը ու ձրի պարզվանք ես տալիս: Ամեն:

**Հավիտենական կյանքը ձրի պարզ է՝
պատրաստ տրվելու:**

Կարդա՛ Եփեսացիներ 2.1-9

Որովհետև շնորհով եք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծու պարզան է: Եփես. 2.8

Մտահոգության բուժումը

Մենք անհամբեր սպասում ենք տեղափոխվելու՝ ամուսնուս նոր աշխատանքի անցնելու հնարավորության պատճառով: Սակայն անորոշություններն ու մարտահրավերները մտահոգում են ինձ: Բնակվելու համար հարմար տեղ գտնել: Ինձ համար նոր գործ գտնել: Կարողանալ հեշտությամբ շրջագայել նոր քաղաքի մեջ ու տեղավորվել: Այդ բոլորը մտահոգություններ են ինձ համար: Մինչ մտածում էի իմ անելիքների մասին, Պողոս առաքյալի գրած խոսքերը արձագանքեցին մտքիս մեջ. «Ոչինչ հոգ մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով...» (Փիլ. 4.6-7):

Եթե կար մեկը, որ պետք է մտահոգվեր անորոշությունների ու մարտահրավերների համար, Պողոսը պիտի լիներ: Նա նավաբեկումի ենթարկված, ծեծված, հալածված ու բանտարկված էր: Փիլիպպեցիներին իր գրած նամակում նա քաջալերում է իր բարեկամներին, որոնք դիմագրավում էին անորոշություններ, ասելով. «Ոչինչ հոգ մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն» (Հմ. 6): Պողոսի խոսքերը ինձ քաջալերեցին: Կյանքը անորոշություններից զերծ չէ. կյանքի մեծ փոփոխություններ, ընտանեկան հարցեր, առողջապահական խնդիրներ և կամ նյութական տագնապներ: Ինչ որ շարունակում եմ սովորել, այն է, թե Աստված հոգ է տանում: Նա հրավիրում է մեզ անորոշության վախերից հրաժարվելու ու զրանք իրեն հանձնելու: Երբ այդպես ենք անում, Նա, որ ամեն բան գիտի, խոստանում է տալ մեզ իր խաղաղությունը, «որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի» (Հմ. 7):

Աղոթք - Սիրելի՛ Աստված, ի՞նչ մեծ օրհնություն է գիտեցալ, թե չպիտի մտահոգվեմք որևէ բանի համար: Հիշեցրու մեզ, թե մենք կարող ենք Քեզ գալ ամեն բանի համար: Շնորհակալ ենք Քո արած բոլոր բաների համար: Ամեն:

Աստծո հոգատարությունը հանդարտեցնում է միտքս:

Կարդա՛ Փիլիպ. 4. 1-9

Ոչինչ հոգ մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: Փիլիպ. 4.6

Ես չեմ

Քսաներորդ դարի հռչակավոր նվազախմբի ղեկավարներից Արթուրո Տոսկանինին հատուկ կերպով հիշվում է՝ պատվելու իր ցանկություն համար նրանց, որոնք արժանի են պատիվ ստանալու: Դեյվիդ Էվինը «Մականի բռնակալները» գրքում նկարագրում է, թե ինչպես Նյու Յորքի Ֆիլհարմոնիկ նվազախումբը ոտքի ելավ ու ծափահարեց Տոսկանինին Բեթհովենի Գրդ սիմֆոնիայի փորձի ժամանակ: Երբ ծափահարությունը դադարեց, արցունքոտ աչքերով ու կոտրած ու ընկճված ձայնով Տոսկանինին ասաց. «Ես չեմ ... Բեթհովենն է... Տոսկանինին ոչի՛նչ է»:

Կարդա՛
Ա Կորնթ. 15.1-11

Այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է իմ մեջ կենդանի: Գաղ. 2.20

Պողոս առաքյալն էլ իր գրած նամակների մեջ մերժում է պատվի արժանանալը իր հոգևոր հմտության և իր ունեցած ազդեցության համար: Նա գիտեր, թե հոգևոր հոր ու մոր պես էր շատերի համար, որոնք Քրիստոսի վրա էին դրել իրենց հավատքը: Նա ընդունում է, որ ծանր էր աշխատել ու չարչարվել էր շատերի հավատքը, հույսը և սերը քաջալերելու համար (Ա Կորնթ. 15.10): Սակայն մաքուր խղճմտանքով չէր կարող ընդունել ծափահարությունը նրանց, ովքեր ներշնչված էին իր ունեցած հավատքով, սիրով ու հմտությամբ:

Հետևաբար, իր ընթերցողների ու մեր սիրո համար Պողոսն ասում է. «Ո՛չ, ես չեմ, եղբայրներ՛ր և քույրեր՛ր: Քրիստոսն է... Պողոսը ոչի՛նչ է»: Մենք լուկ պատգամաբերներն ենք Նրա, որ արժանի է մեր ծափահարությանը:

Աղոթք - Երկնքում եղող Հայր, առանց Քեզ մենք ոչինչ չունենք: Առանց Քո շնորհքի՝ մենք անհույս ենք: Առանց Քո Որդու՝ մենք անօգուտ ենք: Խնդրում եմ ցույց տուր մեզ, թե ինչպես կարող ենք պատվել Քեզ: Ամեն:

Իմաստուն է նա, որ պատիվ է տալիս, քան ստանում է:

Աստծո օգնությամբ

Որքան տարիքս մեծացավ, ավելի սկսեցի ցավ զգալ ոսկորներիս մեջ, հատկապես ձմռանը: Մի շարք օրեր ավելի քիչ հաղթողի պես եմ զգում, և շատ ավելի հաղթված՝ մեծ քաղաքացի լինելու մարտահրավերներով: Դրա համար իմ հերոսը ավելի մեծ մարդ է Քաղեբ անունով: Քաղեբը լրտեսներից մեկն էր, որին Մովսեսն ուղարկեց Խոտացված քանանացիների երկիրը (Թվեր 13-14): Մյուս տասը լրտեսների աննպաստ տեղեկությունն տալուց հետո Աստված տասներկուսից միայն Քաղեբի և Հեսուին չհորհարեց, որ մտնեն քանանացիների երկիրը: Ըստ Հեսուի 14-րդ գլխի՝ Հիմա Քաղեբի համար ժամանակն էր հողից իր բաժինը ստանալու: Սակայն տակավին թշնամիներ կային, որոնք դուրս պիտի նետվեին: Հրաժարվելու տրամադրված չլինելով ու պատերազմը թողնելու երիտասարդ սերնդին՝ Քաղեբը հռչակեց. «Դու ինքդ այս բանը լսեցիր այն օրը: Հիմա այնտեղ ենակիմներն են, և նրանց քաղաքներն ամրացված են և մեծ: Հիմա եթե Տերն ինձ հետ լինի, կբնաջնջեմ նրանց, ինչպես Տերն ինձ ասաց» (Հեսու 14.12): «Տերն ինձ հետ լինի»: Այսպիսի մտածելակերպ պահեց Քաղեբը՝ պատերազմելու պատրաստ լինելու հոգով: Նա կենտրոնացավ Աստծո զորություն վրա, ո՛չ իր, ո՛չ էլ իր առաջացած տարիքի: Աստված պիտի օգներ իրեն անելու այն, ինչ որ պետք էր:

Մեզնից շատերը չեն մտածում որևէ կոթողային բան անել, երբ հասնեն որոշ տարիքի: Սակայն կարող ենք տակավին անել մեծ գործեր Աստծո համար, հոգ չէ թե ինչքան ենք ծերանում: Երբ Քաղեբի նման մեզ առիթներ ներկայանան, մենք կարիք չունենք նրանցից փախուստ տալու: Աստծո օգնությամբ մենք կարող ենք հաղթել:

Աղոթք - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ, որ ինձ տալիս ես զորություն՝ ամեն օր գոյատևելու: Օգնիր, որ կարողանամ Քո կամքը կատարել: Ամեն:

Ամեն բանի ընդունակ եմ նրանով, ով զորացրեց ինձ:

Փիլ. 4.13

Կարդա՛ր Յեսու 14. 7-15

Այժմ ահա ես այսօր ութսունհինգ տարեկան եմ, և ուժեղ եմ այսօր, ինչպես այն ժամանակ... Այժմ նույնպես կարող եմ պատերազմի մեջ մտնել և դուրս գալ: Յեսու 14.10-11

Հերոսից ավելի

Մինչ Աստղային Պատերազմների Համակիրները անհամբեր սպասում են Ցրդ դրվագի «Վերջին Ձեղայր» հրապարակմանը, մարդիկ վերլուծում են այս շարժապատկերների բացառիկ հաջողությունը, որ ետ է գնում մինչև 1977 թվականը: Ֆրանկ Բալոտտան անունով լրատվական թղթակիցն ասաց, թե Աստղային Պատերազմները շատերի հետ են կապվում, ովքեր ցանկանում են նոր հույս ու բարու ուժ այս ժամանակի մեջ, երբ աշխարհը հետոսների կարիք ունի:

Հիսուսի ծննդյան ժամանակ Իսրայելի ժողովուրդը ճնշման տակ անհամբեր սպասում էր երկար ժամանակ ակնկալված Մեսիային: Շատերը ակնկալեցին հետոս, որ իրենց պիտի ազատեր հռոմեական բռնատիրությունից: Սակայն Հիսուսը չեկավ որպես քաղաքական կամ ռազմական հերոս: Ընդհակառակը, Նա եկավ որպես մանուկ Բեթղեհեմ քաղաքը: Սակայն շատերը չկարողացան տեսնել, թե ով էր Նա: Հովհաննես առաքյալը գրեց. «Յուրայինների մեջ եկավ, և յուրայինները նրան չընդունեցին» (Հովհ. 1.11):

Հերոսից ավելի Հիսուսը եկավ որպես մեր Փրկիչ: Նա մարդեղացավ՝ Աստծո լույսը բերելու խավարի մեջ և Իր կյանքը տալու, որպեսզի ամեն ոք, որ ընդունի Նրան, կարողանա ներում ստանալ ու ազատ լինել մեղքի զորությունից: Հովհաննեսը Նրան կոչեց «Հորից եղած Միածնի փառք՝ լի շնորհով ու ճշմարտությամբ» (Հմ. 14): «Բայց ովքեր նրան ընդունեցին, նրանց, որ հավատում են նրա անվանը, իշխանություն տվեց նրանց Աստծու զավակներ լինելու» (Հմ. 12): Արդարև, Հիսուսը աշխարհի ունեցած միակ ճշմարիտ հույսն է:

Աղոթք - Տեր Դիսուս, Դու ես մեր Փրկիչը, ու մենք Քեզ ենք փառավորում: Դու եկար մեռնելու, որպեսզի մենք ապրենք: Ամեն:

Աստված Բեթղեհեմի մեջ ցույց տվեց, թե սիրելի տալ է:

Կարդա՛
Յովհ. 1. 1-5, 9-14

Նրա փառքը տեսանք որպես Դորից եղած Միածնի փառք՝ լի շնորհով ու ճշմարտությամբ: Յովհ. 1.14

Մեծ աշխարհ, ավելի մեծ Աստված

Մինչ մեքենայով ճամփորդում էինք Հյուսիսային Միչիգանով, Մարլենը բացականչեց. «Աներևակայելի է աշխարհի մեծությունը»: Նա իր ակնարկը արեց, երբ մենք անցանք ցուցատախտակի կողքից, որի վրա արձանագրված 45-րդ զուգահեռը ցույց էր տալիս, թե այդ տեղը Այրեցյալ գոտու ու Հյուսիսային Բևեռի կես ճանապարհին էր: Ասացինք, թե մենք որքա՛ն փոքր ենք, ու մեր աշխարհը որքա՛ն վիթխարի է: Տակավին, բաղաատելով տիեզերքի տարածության հետ, մեր փոքր մոլորակը միայն փոշու հատիկ է:

Եթե մեր աշխարհը մեծ է, և տիեզերքը շատ ավելի, որքա՛ն ավելի մեծ է Նա, որ գործությունում այն ստեղծեց: Սուրբ Գիրքը մեզ ասում է. «Որովհետև նրանով ամեն բան ստեղծվեց՝ ինչ որ երկնքում է ու ինչ որ երկրի վրա, երևացողները և աներևույթները, թե՛ գահերը, թե՛ տերությունները, թե՛ պետությունները, թե՛ իշխանությունները, բոլոր բաները նրա միջոցով ու նրա համար ստեղծվեցին» (Կող. 1.16):

Սա բարի լուր է, որովհետև նույն Հիսուսը, որ տիեզերքը ստեղծեց, Նա է, որ եկել է մեզ մեր մեղքերից ազատելու: Իր մահվան նախորդող գիշերը Հիսուսը ասաց իր աշակերտներին. «Այս բաները խոսեցի ձեզ հետ, որպեսզի ինձանով խաղաղություն ունենաք: Աշխարհում նեղություն կունենաք, բայց քաջացե՛ք, ես հաղթել եմ աշխարհին» (Հովհ. 16.33):

Երբ դիմազրավում ենք կյանքի մեծ ու փոքր մարտահրավերները, դիմում ենք Նրան, որ ստեղծեց տիեզերքը, մեռավ ու հարություն առավ և հաղթեց այս աշխարհին: Մեր պայքարի պահերին Նա մեծ զորությունամբ իր խաղաղությունն է խոստանում մեզ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու ավելի մեծ ես, քան այն, ինչ որ իմ միտքը կարող է սահմանել: Օգնիր ինձ այսօր, որ Քեզ վստահեմ: Ամեն:

Աստծո շնորհքը անչափելի է, ողորմությունը անսահման ու խաղաղությունը անբացատրելի:

Կարդա՛ր
Կողոս. 1.12-17

Բոլոր բաները նրա միջոցով ստեղծվեցին: Կող. 1.16

Յեզուսյուն

Կյանքի հարցերը մեզ քմայքոտ ու անկարգ են դարձնում: Սակայն մենք բնավ կարիք չպիտի ունենանք այս տեղի սովորություններին, որովհետև դրանք կարող են սրտեր նսեմացնել ու դժվարություն են հարուցում մեր շուրջ: Մեր պարտականությունը կատարած չենք լինի ուրիշների հանդեպ, մինչև մենք չսովորենք զվարթ լինել: Նոր Կտակարանը ունի հեզություն բառը՝ այն արժանիքի համար, որ շտկում է մեր անհաճոյակատարությունը: Արտահայտություն, որ առաջարկում է ազնիվ ու շնորհալի հոգի: Եփեսացիս 4.2-ը մեզ հիշեցնում է «ամենայն խոնարհությամբ, հեզությամբ» վարվել: Հեզությունը կամեցողությունն է սահմանափակումները և տկարությունները ընդունելու՝ առանց մեր նեղությունները ուրիշների վրա դնելու, երախտագիտություն է ցույց տալիս մատուցված փոքր ծառայությունների համար ու հանդուրժողություն նրանց նկատմամբ, որոնք լավ չեն ծառայում մեզ: Մանուկների հանդեպ ցուցաբերված ազնվությունը բարի ու ազնիվ անձի հատկանիշն է: Նա մեղմ է խոսում զրգուլթյան դիմաց: Կարող է լուռ մնալ, քանզի անազնիվ խոսքերի դիմաց հեզությամբ է վարվում ու խոսում: Անխռով լուռությունը շատ հաճախ ամենից պերճախոս պատասխանն է անազնիվ խոսքերին:

Հիսուսը սրտով խոնարհ ու հեզ էր (Մատթ. 11.29): Եթե Իրեն հարցնենք, Նա ժամանակի ընթացքում մեզ Իր պատկերի նման պիտի վերատեղծի: Շոտլանդացի հեղինակ Ջորջ Մըք Դոնալդը ասում է. «Աստված մեզնից չպիտի լսի մի հնչյուն, որ կարող է ուրիշի սիրտը ճզմել, կամ էլ ցավեցնող խոսք... Հիսուսը ծնվեց մեզ ազատելու համար նման բաներից, ինչպես նաև բոլոր այլ մեղքերից»:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ուզում եմ ազնիվ անձ լինել: Խնդրում եմ օգնիր ինձ, որ այսօր ազնիվ ու շնորհալի լինեմ ուրիշների հանդեպ: Ամեն:

Աստօճ հանդեպ հեզ լինելը պիտի օգնի մեզ ազնիվ վարվել ուրիշների հանդեպ:

Կարդա՛ Եփես. 4. 1-6

Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով իրար համբերելով: Եփես. 4.2

Հավիտենական հույս

Մ. Ծնունդին նախորդող շաբաթը, մորս մահից երկու ամիս հետո, շուկայի գնումներն ու զարդարանքները իմ նախապատվութիւններին ցանկում վերջինն էին: Ինձ մխիթարելու ամուսնուս արած փորձերը մերժեցի, երբ սգում էի հավատքով լեցուն մեր տան մայր իշխանուհու կորուստը: Դեմքս խոժոռեցի, երբ մեր տղան՝ Խավիերը, Ս. Ծնունդի լույսեր դրեց մեր տան ներսի պատերի վրա: Առանց բառարտասանելու՝ միացրեց էլեկտրականութիւնը հոր աշխատանքի գնալուց առաջ: Երբ գունավոր լույսերը փայլեցին, Աստված մեղմորեն ինձ իմ խավարից դուրս բերեց: Որքան էլ ցավալի լինեն հանգամանքները, իմ հույսը մնաց ապահով Աստծո լույսի ճշմարտութեան մեջ, որ միշտ հայտնում է Իր անփոփոխ հատկանիշները:

Կարդա՛ր
Սաղմոս 145

Երանի՛ նրան, ում
օգնականը Հակոբի
Տեր Աստվածն
է, և ում հույսը Տեր
Աստծու վրա է:
Սաղմ. 145.5

145-րդ Սաղմոսը հաստատում է այն, ինչ որ Աստված ինձ հիշեցրեց այդ դժվար պահին: Իմ անվերջ հույսը Տիրոջ մեջ է, իմ օգնականը, իմ հզոր ու ողորմած Աստվածը (Հմ. 5): Որպես ամեն բանի արարիչը՝ Նա հավատարիմ է մնում հավիտյան (Հմ. 6): Նա հարստահարվածների իրավունքն է պաշտպանում ու մեր բոլոր կարիքները հոգում (145.7): Տերը կանգնեցնում է կբածներին (Հմ. 8): Նա հսկում է մեզ վրա, մեզ պահում ու միշտ պիտի լինի մեր թագավորը (Հմ. 9-10): Երբ Ս. Ծնունդի օրերը գան, մեր օրերը ուրախ պահեցող պիտի լցվեն: Երբեմն կորուստներ ու ցավեր պիտի ունենանք կամ միայնակ պիտի զգանք: Սակայն միշտ Աստծո խոստումները մեր լույսը պիտի լինեն՝ խավարի մեջ, տալով մեզ շոշափելի օգնութիւն և հավիտենական հույս:

Աղոթք - Հայր Աստված, շնորհակալ եմք, որ մեզ հրավիրում ես Քեզ ճանաչելու ու Քո անփոփոխ երթանը վստահելու՝ որպես մեր հույսի աղբյուր: Ամեն:

Աստված ապահովում է մեր հույսը՝ Իր անփոփոխ երթան մեջ:

Ծայրահեղ միջոցառումներ

Մի քանի տարի առաջ բարեկամներիցս մեկը իր փոքր տղային կորցրեց Ջիկագոյի երկաթուղային կայարանում: Սարսափելի ու ահավոր փորձառություն էր դա: Նա, շուտով շարժական աստիճաններից ետ վեր բարձրանալով, նրա անունը կանչեց՝ այն հույսով, որ իր փոքրիկին կգտնի: Բաժանումի այդ մի քանի ըոպկեները թվացին ժամեր, մինչև որ հանկարծ մանուկը դուրս եկավ ամբոխի միջից ու վազեց իր մոր ապահով բազուկների մեջ: Խորհելով բարեկամիս մասին, որ պատրաստ էր ամեն բան անելու իր որդուն գտնելու համար, լցվում էի շնորհակալության վերանորոգ զգացումով՝ մեզ փրկելու Աստծո արած հիանալի արարքի համար: Աստծո պատկերը կրող առաջին մարդկանց առիթով՝ Ադամ և Եվա, սկսելով այն ժամանակից, երբ նրանք մեղքով մոլորվեցին, Աստված Իր ժողովրդի հետ ունենալիք հարաբերության խզումի համար ողբաց: Նա շատ բան արեց՝ վերահաստատելու այդ հաղորդակցությունը, Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկելով, որ «կորածին փնտրի ու փրկի» (Ղուկ. 19.10): Առանց Տեր Հիսուսի ծննդյան և առանց Նրա մեռնելու ու մեր մեղքերի համար հատուցելուն և մեզ նորից Աստծուն մոտեցնելու կամեցողության՝ մենք պատճառ չպիտի ունենայինք տոնակատարություն անելու Ս. Ծնունդին:

Հետևաբար, այս Ս. Ծնունդին շնորհակալ լինենք, որ Աստված ծայրահեղ միջոցառում արեց՝ Հիսուսին աշխարհ ուղարկելով ու վերահաստատելով մեր հաղորդակցությունը Իր հետ: Թեև մենք մի ժամանակ կորած էինք, սակայն Հիսուսի շնորհիվ գտնվեցինք:

Աղոթք - Երկնավոր Յայր, Ս. Ծնունդի ուրախությունների մեջ մեզ հիշեցրու, թե ճշմարիտ իմաստը այս եղանակի Քո սիրո խորության մեջ է: Ծնորհակալ ենք Հիսուսին ուղարկելու ու ինձ մնացնող անարժան մարդկանց փրկելու համար: Ամեն:

Ս. Ծնունդը կորածներին փրկելու Աստծո ծայրահեղ միջոցառումների մասին է:

Կարդա՛

Ղուկաս 19. 1-10

Որովհետև Մարդու Որդին եկել է, որ կորածին փնտրի ու փրկի: Ղուկ. 19.10

Լռությունը ընդհատող

Հին Կտակարանի վերջում Աստված թվում է թաքնված: Չորս դար շարունակ հրեաները սպասեցին ու զարմացան: Աստված թվում էր կրավորական, անտարբեր ու խուլ նրանց բարձրացրած աղոթքների հանդեպ: Միայն մեկ հույս է մնում՝ Մեսիայի համար տրված հին խոստումը: Հրեաները այդ խոստումի համար դնում են իրենց ամբողջ հույսը: Ապա կարևոր մի բան է պատահում. Մանուկի ծնունդն է հայտարարվում:

**Կարդա՛ր
Ղուկաս 1. 11-17**

Ինքն էլ Եղիայի հոգով ու զորությամբ նրա առաջից կգա... որպեսզի Տիրոջ համար պատրաստ ժողովուրդ կազմի: Ղուկ. 1.17

Մենք կարող ենք տեսնել եղած խանդավառությունը՝ պարզապես Ղուկասի Ավետարանում կարդալով մարդկանց արածների մասին: Հիսուսի ծնունդի հետ պատահող դեպքերը նման են ուրախություն մեզ լեցուն երաժշտական կտորի: Տեսարանի մեջ տեսնում ենք գանազան դերակատարներ՝ ճերմակ մազերով մեծ հորեղբորը (Ղուկ. 1.5-25), զարմացած կույսին (1.26-38), ծեր մարզաբեռհի Աննային (2.36): Մարիամը գեղեցիկ երգ է երգում (1.46-55): Նույնիսկ դեռ չծնված՝ Հիսուսի զարմիրը ցնծությունից խայտում է մոր որովայնում (1.41):

Ղուկասը ուղիղ կապ է հաստատում Հին Կտակարանում տրված Մեսիայի համար եղած խոստումների հետ: Գաբրիել հրեշտակը նույնիսկ Հովհաննես Մկրտչին կոչում է «եղիա», ուղարկված Տիրոջ ճամփան պատրաստելու համար (1.17): Հստակ կերպով մի բան էր կատարվում երկրի վրա: Հոռմեական Կայսրության հեռավոր մի անկյունում, տրտում ու պարտված գյուղացիների մեջ բարի բան էր կատարվում:

Աղոթք - Տե՛ր, Դու դեպի մեզ եկար, ու մենք ուրախանում ենք: Տե՛ր Հիսուս, Դու մեր հույսն ու փրկության պարզևն ես: Ամեն:

Մի օր մեր երկրում գոմը մի բան ուներ իր մեջ, որ մեր ամբողջ աշխարհից շատ ավելի մեծ էր: **Ք. Ա. Լեվիս** («Վերջին թափերազմից»)

Տուև՝ Ս. ԾՆՈՆՂԿԱՆ տոնի համար

Մի տարի Ս. Ծնունդի օրը աշխատանքի էի կանչված տնից հե-
ռու մի տեղ, որը բարեկամներս նույնիսկ չպիտի կարողա-
նային գտնել քարտեզի վրա: Երբ աշխատանքի վայրից հոգնած
քայլերով սենյակս էի վերադառնում, զգացի դժգույն Սև ծովից
փչող ցուրտ քամին: Տանս կարոտն ունեի: Երբ սենյակս հասա ու
բացեցի դուռը, տեսա կախարդական գեղեցիկ տեսարան: Իմ արվես-
տագետ սենեկակիցը ամբողջացրել էր իր
վերջին ծրագիրը՝ շողացող գունավոր կե-
տերով կես մետր բարձրությոն ունեցող
խեցեգործ ու մեր սենյակը լուսավորող Կա-
ղանդի ծառ: Ու զմայլելի գեղեցկությամբ ի
տես՝ մի պահ ուզեցի մեր տանը լինել:

Երբ Հակոբը փախուստ տվեց իր եղ-
բորից՝ Նսավից, ինքն իրեն գտավ օտար
ու միայնակ մի վայրում: Չոր գետնի վրա
քնելով՝ երազում Աստծուն տեսավ: Աստված Հակոբին խոստա-
ցավ տուն տալ: «...Այն հողը, որի վրա քնել ես դու, քեզ եմ տա-
լու և քո սերունդներին: ...Քո շնորհիվ և քո սերունդների շնոր-
հիվ օրհնվելու են աշխարհի բոլոր ազգերը» (Ծնն. 28.13-14):

Ըստ տրված խոստումի՝ Հակոբից պիտի գար խոստացյալ
Մեսիան՝ Նա, որ իր տունը թողեց՝ մեզ Իրեն մոտիկ տանելու հա-
մար: Տեր Հիսուսը Իր աշակերտներին ասաց. «...նորից կգամ ու
ձեզ ինձ մոտ կվերցնեմ, որեպեսզի ուր որ ես եմ, դուք էլ լինեք»
(Հովհ. 14.3): Այդ դեկտեմբերի երեկոյան նստեցի իմ մուլթ սեն-
յակում ու դիտեցի այդ գեղեցիկ Ս. Ծնունդի ծառը: Թերևս ան-
խուսափելիորեն մտածեցի այն լույսի մասին, որ աշխարհ եկավ՝
դեպի տուն տանող ճամփան մեզ ցույց տալու համար:

Աղոթք - Տեր, հոգ չէ թե ո՛ր եմք այսօր, կարող եմք շնոր-
հակալ լինել, որ մեզ համար տեղ ես պատրաստում, որպես-
զի Քեզ հետ լինեմք: Ամեն:

**Տունը լոկ տեղ չէ քարտեզի վրա, այլ մի տեղ, որին պատ-
կանում ենք: Աստված Ինքն է մեզ տալիս այդ տեղը:**

Կարդա՛ ԾՆՈՆՂՈՑ 28. 10-17

Ես ահա քեզ հետ եմ,
որ պահպանեմ քեզ
քո բոլոր ճանա-
պարհներին, որոնցով
գնալու ես: Քեզ վերա-
դարձնելու եմ այս
երկիրը: ԾՆ. 28.15

Հոգու լուռ երեկոն

Ժողեֆ Մոհրի և Ֆրանց Գրուբերի՝ միասնաբար մեզ ծանոթ «Լուռ երեկո, Սուրբ երեկո» երգը հորինելուց շատ առաջ Անգելուս Միլեյուսը գրել է.

Լուռ երեկոյի մեջ Աստծուն մանուկ ծնվեց,
Ու ամեն կորսված կամ լքյալ բան ետ բերեց:

Ո՛վ մարդ, եթե քո հոգին լուռ երեկո
լինի,

Աստված քո մեջ պիտի ծնվի, ու
ամեն բան ուղիղ դառնա:

Միլեյուսը՝ լեհացի վանականը, հրատարակեց այս ոտանավորը 1657-ին, «Քերովբեական ուխտավորը» խորագրով իր գրքում: Մեր եկեղեցու տարեկան Ս. Ծննդյան երեկոյի պաշտամունքին երգչախումբը այս երգի մի տարբերակը երգեց:

Ս. Ծնունդի կրկնակի խորհուրդը այն է, թե Աստված մեզ նման եղավ, որպեսզի մենք կարողանանք իր հետ մեկ լինել: Հիսուսը տառապեց բոլոր գործված սխալների ու մեղքերի համար, որպեսզի մենք շիտակ լինենք: Դրա համար Պողոս առաքյալը կարողացավ գրել. «Ուրեմն եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. 5.17):

Մեր Ծնունդի տոնակատարությունը ընտանիքով ու բարեկամներով լեցուն լինի կամ ոչ, գիտենք, թե Հիսուսը եկավ մեր մեջ ծնվելու համար:

Օ՛, եթե քո սիրտը Ծնունդի համար մտուր լինի, Աստված գարձյալ մանուկ կլինի աշխարհի վրա:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք, որ ծնվեցիր այս խավար աշխարհում, որպեսզի մենք կարողանանք ծնվել Քո կյանքի ու լույսի մեջ: Ամեն:

Աստված մեզնից մեկը եղավ, որպեսզի մենք իր հետ մեկ լինենք:

Կարդա՛
Բ Կորնթ. 5. 14-21

Ուրեմն եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ: Բ Կորնթ. 5.17

Աստված մեզ հետ

«Քրիստոսը ինձ հետ, Քրիստոսը իմ առջև, Քրիստոսը իմ ետևում, Քրիստոսը իմ մեջ, Քրիստոսը ինձնից ներքև, Քրիստոսը ինձնից վեր, Քրիստոսը աջիս, Քրիստոսը ձախիս...»: 5-րդ դարի կելտ Քրիստոնյա Սբ. Պատրիկի գրած այս երգի բառերը արձագանքեցին մտքիս մեջ, երբ կարդացի Մատթեոսի գրածները Հիսուսի ծնունդի մասին: Նրանք թվում են ջերմ ողջագուրում՝ հիշեցնելով ինձ, թե ես երբեք միայնակ չեմ:

Մատթեոսի տված այս նկարագրությունը մեզ ասում է, թե Աստծո՛ւ Իր ժողովրդի հետ բնակությունը Ծնունդի պատմության մեջ կենտրոնական տեղ է գրավում: Մեջբերելով Եսայու մարգարեությունը մանկան մասին, որ պիտի կոչվի էմմանուել, որ նշանակում է «Աստված մեզ հետ» (Ես. 7.14), Մատթեոսը մատնանշում է մարգարեության գերագույն իրականացումը՝ Հիսուսը. Նա, որ Հոգու գորություն է ծնվում՝ Աստծու՛ մեզ հետ լինելու համար: Այս ճշմարտությունը այնքան կենտրոնական է, որ Մատթեոսը սկսում ու ավարտում է իր Ավետարանը նրա հետ ու փակում Հիսուսի այս խոսքերով՝ ուղղված աշակերտներին. «Եվ ահա ես ձեզ հետ եմ՝ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28.20): Սբ. Պատրիկի երգի բառերը ինձ հիշեցնում են, թե Քրիստոսը միշտ հավատացյալների հետ է՝ մեր մեջ բնակվող Իր Հոգու միջոցով: Երբ ջղագրգիռ վիճակ ունենամ կամ վախի մեջ լինեմ, կարող եմ Նրա տված խոստումներին վստահել, թե Նա բնավ ինձ չպիտի թողնի: Երբ չկարողանամ հանդարտ հոգի ունենալ ու քնել, կարող եմ Իրենից խնդրել խաղաղություն: Երբ տոնակատարություն կատարեմ և ուրախ լինեմ, կարող եմ շնորհակալություն հայտնել Իր տված շնորհքի համար:

Աղոթք - Դայր Աստված, շնորհակալ եմ Քո Որդուն ուղարկելու համար, որպեսզի Աստված մեզ հետ լինի: Թող որ Քո Երկայությունը զգանք այսօր: Ամեն:

Աստծո սերը մարդեղացավ Բեթղեհեմի մեջ:

Կարդա՛

Մատթ. 1.18-23

Ահա կույսը կիղիանա և որդի կ'ծնի, և նրա անունը էմմանուել կ'ընեն:

Մատթ. 1.23

Հուլյսի խայտանք

Ռեջինալդ Ֆեսսենդենը երկար տարիներ աշխատում էր՝ գտնելու անթեյ ձայնասփռումի միջոցը: Ուրիշ գիտնականներ նրա գաղափարը նկատեցին արմատական և անուղղելի ու կասկածեցին նրա հաջողության վրա: Սակայն 1906-ի դեկտեմբերի 24-ին նա հանդիսացավ առաջին անձը՝ երաժշտություն սփռող ձայնասփյուռի միջոցով: Ֆեսսենդենը համաձայնություն ուներ մրգերի վաճառքով զբաղվող ընկերության հետ, որ անլար հաղորդակցություն էր ստեղծել շուրջ 12 նավերի վրա՝ կապ ստեղծելու բանանի հունձքի ու վաճառքի մասին: Այդ Ծնունդի երեկոյան Ֆեսսենդենը ասաց, թե նա պատվիրել էր

Կարդա՛ր
Ղուկաս 2.11-20

Այսօր ձեզ Դավթի քաղաքում Փրկիչ ծնվեց, որ է՝ Օծյալ Տերը: Ղուկ. 2.11

բոլոր նավերի վրա անլար ծրագիր գործածողներին ուշադիր լինել: Նրանք ժամը 9-ին լսել էին նրա ձայնը: Նա օպերային մի երգի ձայնապնակն էր դրել ու ապա իր ջութակով նվագել «Ո՛վ սուրբ գիշեր» երգը ու երգել երգի վերջին համարի բառերը: Վերջապես նա տվել էր Ծնունդի մի ողջունյն ու կարդացել Ղուկասի 2-րդ գլխից հրեշտակների ավետումի պատգամը հովիտներին:

Թե՛ Բեթղեհհեմի հովիտները երկու հազար տարի առաջ և թե՛ 1906-ի նավաստիները Միացյալ Մրգերի Ընկերության նավերի վրա լսեցին անակնկալ, զարմանալի հույսի մի պատգամ խավար գիշերվա մեջ: Ու Աստված տակավին խոսում է այդ նույն հույսի պատգամը այսօր մեզ: Փրկիչը՝ Քրիստոս Տերը, ծնվել է մեզ համար (Ղուկ. 2.11): Մենք կարող ենք միանալ հրեշտակների երգչախմբին ու բոլոր հավատացյալներին, որոնք պատասխանում են՝ ասելով. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, երկրի վրա խաղաղություն ու մարդկանց մեջ՝ հաճություն» (Հմ. 14):

Աղոթք - Աստված, Քեզ փառք ենք տալիս ու շնորհակալություն հայտնում Քո Որդուն՝ Տեր Հիսուս Քրիստոսին ու ղարկելուդ համար՝ լինելու մեր Փրկիչը: Ամեն:

Առանց Քրիստոսի հույս չկա: Չարլզ Սպուրջըն

Սովորություններ և Ա. Ծնունդ

Մինչ ճաշակում ես շաքարեղեգ այս Ա. Ծնունդին, ասա գերմանացիների «գանձը շոնն», որովհետև այս քաղցրավենիքը ստեղծված էր Քյոլնի մեջ: Մինչ հիանում ես Ծնունդի գեղեցիկ կարմրագույն ծաղիկով, ասա Մեխիկոյի «գրացիաս»-ը, որտեղից եկել է այս բույսը: Ասա «մերսի բուքու» ֆրանսացուն «ծնունդ»-ի համար և տուր «կենացը» անգլիացուն՝ մզամուրճի համար:

Մինչ վայելում ենք աշխարհի ամեն կողմերից հավաքված Ծննդյան զանազան տեսակի սովորություններն ու տոնակատարությունները, եկեք պահենք ամենից անկեղծ ու սրտագին շնորհակալությունը մեր բարի, զթառատ ու սիրող Աստծուն: Նա եղավ պատճառը մեր Ծնունդի տոնակատարության ու Բեթղեհեմի այդ մսուրի մեջ մանուկի ծնվելուն ավելի քան 2000 տարի առաջ: Մի հրեշտակ հայտարարեց մարդկանց տրված այս պարգևի գալուստի մասին՝ ասելով. «...Ձեզ մեծ ուրախություն եմ ավետում: Այսօր ձեզ Դավթի քաղաքում Փրկիչ ծնվեց...» (Ղուկ. 2.11):

Ա. Ծնունդը, նույնիսկ Ծնունդի ծառը, շողշողուն լույսի մեջ ու շուրջը գտնվող բացված նվերների տուփերով, ճշմարիտ արձագանքն են տալիս, որ մեր ուշադրությունը սևեռենք Հիսուս մանուկին, որ եկավ «Իր ժողովրդին փրկելու իր մեղքերից» (Մատթ. 1.21): Նրա ծնունդը գերազանցում է բոլոր սովորություններին և մեր կենտրոնական կիզակետն է, մինչ մեր փառափանությունն ենք բարձրացնում Աստծուն՝ այս սքանչելի Ծնունդի պարգևի համար:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ եկար ու մեզ միացար այդ առաջին Ծնունդի գիշերը: Այս սովորություններով լեցուն եղանակի մեջ օգնիր, որ կարողանանք նախապատվությունը Քեզ տալ: Ամեն:

«...Հույսի Աստվածը լցնի ձեզ ամեն ուրախությամբ և խաղաղությամբ՝ հավատի մեջ» (Հռոմ. 15.13):

Կարդա՛ր
Ղուկաս 2.1-10

Ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում... ձեզ Փրկիչ ծնվեց:
Ղուկ. 2.10-11

Օ՛, ի՞նչ տարօրինակ է

Երբ էնդրյու Չիթլըր ծովեզրին կորցրեց իր բջջային հեռախոսը, մտածեց, թե այն ընդմիշտ անհետացել էր: Սակայն մի շաբաթ հետո ձկնորս Գլեն Քերլին զանգեց իրեն: Գլենը էնդրյուի հեռախոսը գտել էր տասը կգ կշռող ձողաձուկի մեջ: Այն չորանալուց հետո սկսեց աշխատել: Կյանքը լեցուն է արտառոց պատմություններով, ու մենք գտնում ենք նրանցից մի քանիսը Աստվածաշնչի մեջ: Մի օր հարկահավաքները եկան Պետրոսի մոտ և ասացին. «Ձեր վարդապետը երկզրամյանը չի՞ վճարում» (Մատթ. 17.24): Հիսուսը այդ պահը վերածեց ուսուցանելու պատեհություն: Նա ցանկացավ, որ Պետրոսը հասկանա իր դերը՝ որպես թագավոր: Տուրքերը չէին գանձվում թագավորի գավազներից, և Տերը հատակ ասաց, թե ո՛չ Ինքը ու ո՛չ էլ իր գավազները պարտավոր չէին տալու տաճարի տուրքը (Հմ. 25-26): Հիսուսը ուզեց ուշադիր լինել չնախատելու ու թշնամություն չսերմանելու համար. Նա Պետրոսին պատվիրեց, որ գնա ու ձկնորսություն անի: Այս է այս պատմության տարօրինակ մասը: Պետրոսը գտավ մի արձաթյա դրամ իր որսացած առաջին ձկան բերանում:

Օ՛, ի՞նչ արտառոց բան է անում Տեր Հիսուսն այստեղ: Ավելի լավ պիտի լինի հարցնել. «Մարդ Աստծո, ի՞նչ է անում Հիսուսը»: Նա իրավացի թագավորն է, նույնիսկ երբ շատերը չեն տեսնում Նրան որպես այդպիսին: Երբ ընդունենք իր դերը որպես Տեր մեր կյանքերի մեջ, մենք իր գավազները կդառնանք: Կյանքը տակավին իր զանազան պահանջները պիտի շարտի մեր երեսին, սակայն Հիսուսը մեր բոլոր կարիքները պիտի հոգա: Իբրև հովիվ՝ Դեյվիդ Փոմփոն ասել է. «Երբ ձկնորսություն ենք անում մեր Հոր համար, մեր բոլոր կարիքների համար կարող ենք իրեն վստահել»:

Աղոթք - Տեր, սովորեցրու մեզ վստահ լինել, թե Դու հայթայթում ես մեզ համար ամեն բան, ինչի կարիք ունենք: Ամեն:

Մենք Թագավորի որդիներն ենք:

Կարդա՛ր
Մատթ. 17.24-27

Եվ իմ Աստվածը թող իր հարստության չափով ձեր կարոտությունը լցնի՝ փառքով Քրիստոս Դիսուսի մեջ: Փիլիպ. 4.19

Շնորհակալության օրագիր

Երբ վերստին ծնունդի փորձառությունը ունեցա, իմ խորհրդատուն ինձ քաջալերեց, որ շնորհակալության օրագիր պահեմ: Օրագիրս փոքր տետր էր, որ ամեն տեղ հետս էի տանում: Երբեմն անմիջապես շնորհակալություն էի արձանագրում: Ուրիշ անգամներ շաբաթվա վերջին գրի էի առնում իմ մտածումները: Ներկայումս փորձում եմ վերսկսել այս բարի սովորությունը: Այսպես անելով՝ ես պիտի գիտակցեմ Աստծո ներկայությունը ու շնորհակալ լինեմ Իր հոգատարության և նախատեսության համար: 116-րդ Սաղմոսի մեջ, որ Աստվածաշնչի ամենակարճ Սաղմոսն է, հեղինակը քաջալերում է մեզ Տիրոջը պաշտել, որ «...ներա ողորմությունը հաստատվի մեզ վրա» (Հմ. 2):

Կարդա՛ր
Սաղմոս 116

Օրհնեցե՛ք Տիրոջը, բոլոր՝ ազգեր, գովեցե՛ք նրան, բոլոր՝ ժողովուրդներ: Սաղմ. 116.1

Մտածիր, թե ինչպե՞ս Տերը Իր սերը ցույց տվեց քեզ այսօր, այս շաբաթ, այս ամիս և այս տարի: Մի՛ նայիր միայն հոյակապ բաներին: Որովհետև Նրա սերը կարելի է տեսնել սովորական բաների մեջ: Նկատի առ, թե ինչպես է Նա ցույց տվել Իր սերը քո ընտանիքին, եկեղեցուն և ուրիշներին: Թույլ տուր, որ քո միտքը կլանի մեր հանդեպ Իր ունեցած սիրո ծավալը: Սաղմոսերգուն ավելացնում է. «Տիրոջ ճշմարտությունը հավիտյան թող մնա» (Հմ. 2): Այլ խոսքով, Նա պիտի շարունակի մեզ սիրել: Ուստի մենք պիտի շարունակենք ունենալ բազմաթիվ նյութեր, որոնց համար Աստծուն պիտի փառավորենք զալիք օրերում՝ իբրև Իր սիրելի զավակներ: Թող Աստծուն փառաբանելն ու շնորհակալություն հայտնելը մեր կյանքերը նկարագրի:

Աղոթք - Հայր, եթե արձանագրելու լինենք Քո տված բազում օրհնությունները, չպիտի կարողանանք այդ պարտականությունը ամբողջացնել մեր ամբողջ կյանքի ընթացքում: Սակայն այս պահին կարող եմ կանգ առնել՝ պարզապես ասելու. «Շնորհակալ եմ Քո բարության ու հավատարմության համար»: Ամեն:

Հիշիր Աստծուն շնորհակալություն հայտնելու մասին սովորական, նաև արտասովոր բաների համար:

Ամենօրյա պահեր

Շուկայի գնումներս անելուց հետո տեղավորեցի դրանք մեքենայիս մեջ և ուշադիր սկսեցի մեքենաս դուրս բերել կանգնեցրած տեղից: Հանկարծ մի մարդ վազեց մայթի վրա ճիշտ դիմացս՝ չնկատելով մեքենաս: Ուժգին սեղմեցի արգելակը ու հագիվ կարողացա մեքենան կանգնեցնել: Նա սարսափահար նայեց ինձ ու տեսավ իմ խոժոռ դեմքը: Այդ պահին գիտեի, թե երկու ընտրություն ունեի՝ բարկությունը ասքերս կտրացնելով պատասխանել կամ ներողամտությամբ ժպտալ: Ես ժպտացի: Հանդարտություն իջավ մարդու դեմքին, ու նա ժպիտով շնորհակալություն հայտնեց:

Առակներ 15.13-ը ասում է. «Սրտի բերկրանքից ծաղկում է դեմքը, իսկ տրտում հոգին շրջում է թախծոտ»: Արդյոք հեղինակը մեզ ուղղորդում է գվարթ արտահայտություն անել ամեն անգամ, երբ ընդմիջումներ, հուսախաբություններ և անպատեհություններ են պատահում մեր կյանքում: Անշուշտ ո՛չ: Կան իսկական վհատության, սգի և նույնիսկ բարկության պահեր: Սակայն մեր առօրյայում մի ժպիտը կարող է ամոքումի, հույսի և հարատևության համար հարկ եղած շնորհքը տալ:

Գուցե առակի նպատակն է ցույց տալ, թե մի ժպիտը բնականաբար արդյունքն է մեր ներքին մարդու հոգեվիճակի: «Ուրախ սիրտը» խաղաղություն և գոհացում ունի ու լսում է Աստծո լավագույն խորհուրդները: Անակնկալ պարագաներում ներսից դուրս եկող ուրախ սրտով, իսկական ժպիտով կարող ենք պատասխանել՝ հրավիրելով ուրիշներին, որ կարողանան Աստծո փորձառությունը ունենալ՝ ողջագուրելով հույսը և խաղաղությունը:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, այսօր, երբ ճամփիս վրա հանդիպեմ ուրիշների, իմ սիրտը ուրախությունով լցրու, որպեսզի կարողանամ կիսել նրանց հետ այն հույսը, որը միայն Դու կարող ես պարգևել: Ամեն:

Դրա համար քաջալերեցե՛ք և իրար շինությունն տվեք:

Ա Թես. 5.11

Կարդա՛ր Առակներ 15.13-15

Սրտի բերկրանքից ծաղկում է դեմքը, իսկ տրտում հոգին շրջում է թախծոտ: Առ. 15.13

Ինչ է մնում աչքի մեջ

Հօծահավը անգլերենում իր անունը ստացել է արագ թևաբախումից առաջ եկած «բզզյուն» բառից: Ուրիշ լեզուներով ծանոթ է որպես «ծաղիկ համբուրող» (պորտուգալերեն) կամ «թռչող գոհարներ» (իսպաներեն): Իմ նախասիրած անուններից մեկը այս թռչնատեսակի համար «բյուլուն» է՝ «ի՞նչ է մնում աչքի մեջ» (մեքսիկական սեպոտեկ): Այլ խոսքով, մի անգամ որ տեսնես հօծահավին, երբեք չես մոռանա:

Ք. Չեսթերթոնը գրում է. «Աշխարհը երբեք հրաշքների սով չպիտի ունենա, սակայն պիտի ունենա հրաշքներ ունենալու ցանկություն սովը»: Հօծահավը այդ սքանչելի հրաշքներից է: Մի բան, որ շատ հմայիչ է այս փոքր էակների մասին: Կարող է նրանց փոքր չափը միջին հաշվով լինել 5-10 սմ կամ նրանց թևերի հարվածի արագությունը՝ 50-200 անգամ մեկ վայրկյանում:

Մենք վստահ չենք՝ ո՛վ է գրել 103-րդ Սաղմոսը, սակայն վստահ ենք, որ Սաղմոսերգուն հափշտակված էր բնության գեղեցկությունում: Նկարագրելուց հետո բնության բազմաթիվ հրաշալիքները, ինչպես Լիբանանի մայրիները, վայրի գազանները, նա երգում է. «Թող... Տերն ուրախանա իր արարածներով» (Հմ. 31): Ապա աղոթում է. «Օրհնությունն իմ քաղցր կլինի նրան, և ես կուրախանամ Տիրոջմով» (Հմ. 34): Բնությունը շատ բաներ ունի, որոնք գրավում են մեր ուշադրությունը ու մնում աչքի մեջ իրենց ունեցած գեղեցկության ու կատարելության համար: Ինչպե՞ս կարող ենք նրանց մասին մտածել ու Աստծուն հաճո լինել: Կարող ենք դիտել, ուրախանալ և Աստծուն շնորհակալություն հայտնել, մինչ նկատում ենք, քննում ու դարձյալ տեսնում այդ հրաշքները:

Աղոթք - Դայր, օգնիր ինձ, որ կարողանամ խորհրդածել բնության հրաշքների մասին՝ շնորհակալ լինելով Քո բոլոր գործերի համար: Ամեն:

Դրաչքը շնորհակալության է առաջնորդում:

Կարդա՛

Սաղմոս 103.24-35

Որքա՞ն մեծ եմ
գործերը քո, Տե՛ր:
Սաղմ. 103.24

Ամբողջացումի ժամանակներ

Տարվա վերջին անավարտ գործերի բեռը ծանր է կշռում: Տան ու աշխատանքային պատասխանատվությունները թվում են անվերջ, ու այսօր անավարտ մնացած բաները վաղվան են մնում: Սակայն կան ժամանակներ մեր հավատքի ճամփորդության մեջ, երբ պետք է կանգ առնել ու ուրախանալ Աստծո հավատարմությունով ու մեր ամբողջացրած գործերի ու պարտականությունների համար:

Պողոսի ու Բառնաբասի միսիոներական առաջին ճամփորդությունից հետո «...նա-վով Անտիոք գնացին, որտեղից Աստծո շնորհին էին հանձնվել՝ այն գործի համար, որ կատարեցին» (Գործք Առ. 14:26): Տեր Հիսուսի պատգամը ուրիշների հետ բաժանելու գործում տակավին շատ բան կար անելու: Նրանք ժամանակ գտան շնորհակա-

լություն հայտնելու մինչ այդ եղած գործերի համար: «Եվ երբ եկան, հավաքեցին եկեղեցին, պատմեցին, ինչ որ Աստված արեց իրենց հետ, նաև, որ նա հեթանոսների համար հավատի դուռ բացեց» (Հմ. 27): Աստված ի՞նչ արեց քո միջոցով անցյալ տարվա ընթացքում: Ինչպե՞ս հավատքի դուռը բացեց մեկի առջև, որին ճանաչում ու սիրում ես: Նա աներևակայելի ձևերով մեզ համար անկատար ու անկարևոր թվացող գործերի վրա է: Երբ ցավ զգանք մեր Աստծուն ծառայելու անավարտ պարտականությունների համար, չմոռանանք շնորհակալություն հայտնել այն միջոցների համար, որոնցով Նա գործել է մեր միջոցով: Աստծո շնորհքով Իր արածների համար ուրախանալը հող է պատրաստում գալիք բաների համար:

Աղոթք - Տե՛ր, մինչ այս տարին իր վերջին է հասնում, շնորհակալություն եմք հայտնում քո բոլոր արածների համար մեր միջոցով: Քո շնորհքով մեր աչքերը վեր բարձրացրու՝ տեսնելու ինչ որ պիտի գա: Ամեն:

Աստված միշտ գործի վրա է մեր մեջ ու մեր միջոցով:

Կարդա՛ր Գործք Առ. 14. 21-28

Այնտեղից նավով Անտիոք գնացին. որտեղից Աստծու շնորհին էին հանձնվել՝ այն գործի համար, որ կատարեցին: Գործք Առ. 14:26

Յավատք կառուցող հիշատակներ

Երբ մտա երաժշտությանը լեցուն սրբարանը Նոր Տարվա առթիվ պատրաստված հավաքույթի համար, շուրջս եղող բազմությանը նայեցի: Ուրախությունը հույսով սիրտս թնդացրեց, ու հիշեցի անցյալ տարվա մեր բարձրացրած աղոթքները: Մեր եկեղեցու ժողովուրդը հավաքաբար էր աղոթել՝ կամակոր զավակների, սիրելիների կորստի, խզված հարաբերությունների, ցավերի ու անգործության համար: Սակայն մենք նաև վայելեցինք Աստծո շնորհքը՝ հիշելով փոխված սրտերը և նորոգված անձնական հարաբերությունները: Ուրախացանք մեր հաջողությունների, պսակադրությունների, մկրտությունների և շրջանավարտների համար: Հրճվանքով ընդունեցինք նորածին կամ որդեգրված և Աստծուն նվիրված մանուկների մեր մեջ, ինչպես նաև շատ ուրիշ բաներ: Անդրադառնալով մեր եկեղեցու դիմագրաված զանազան փորձություններին՝ Երեմիայի նման, որ հիշեց իր տառապանքներն ու թշվառությունները (Ողբ Եր. 3.19), ես հավատում եմ, թե «Անսպառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթությունները չեն նվազում» (Հմ. 22): Երբ մարգարեն ինքնիրեն վստահեցրեց Աստծուն ցուցաբերած անցյալի հավատարմությունը, իր խոսքերը մխիթարեցին իրեն. «Աստված բարերար է նրանց հանդեպ, ովքեր իրենց հույսը դնում են Նրա վրա» (Հմ. 25): Այդ Նոր տարվա երեկոյան յուրաքանչյուր անձ մեր եկեղեցու մեջ ներկայացրեց շոշափելի մի արտահայտություն Աստծո՝ կյանք փոխող սիրո մասին: Ինչ էլ դիմագրավենք եկող տարիներին, որպես Տեր Հիսուսի մարմնի անդամներ՝ մենք կարող ենք Իրեն վստահել: Ու մինչ շարունակում ենք Նրան փնտրել և իրար զորավիզ կանգնել, կարող ենք անել այնպես, ինչպես Երեմիան արեց. հույս գտնել Աստծո անփոփոխ ու վստահելի նկարագրով, հավատք կառուցող հիշատակներով հաստատվել:

Կարդա՛ր
Ողբ Երեմիա 3.19-26

Անսպառ են Տիրոջ
ողորմությունները:
Ողբ Եր. 3.22

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեր անցյալն ես գործածում՝ մեզ վստահեցնելու, թե մեր հավատքը ապահով է մնում քո հավիտենական հավատարմության մեջ: Ամեն:

Մինչ առաջ եմք նայում նոր տարվան, հիշենք, թե Աստված միշտ եղել է ու պիտի լինի հավատարիմ:

Նյութերի ցանկ

Աղոթք	Հոկ. 2, 11, նոյ. 6, դեկ. 12
Անարդարություն.....	Նոյ. 5
Աստվածաշունչ.....	Հոկ. 30, նոյ. 27
Աստծու զորությունը.....	Հոկ. 11
Աստծու հոգածությունը....	Հոկ. 5, 21, 27, նոյ. 7, դեկ. 14, 26
Աստծու շնորհքը.....	Հոկ. 18, 25, դեկ. 10
Աստծու սերը..	Հոկ. 12,13,14,23,26, նոյ. 10,14,30, դեկ. 5,16,31
Աստծու վարդապետությունը	Նոյ. 28
Աստծուն վստահել..	Հոկ. 7,8,16,27,28,29, նոյ. 20, դեկ. 2,3,6
Ավետարանչու թյուն.....	Դեկ. 7
Բարկություն.....	Նոյ. 8
Դրախտ.....	Հոկ. 20, նոյ. 5, 9
Եկեղեցական կյանք.....	Հոկ. 22
Երջանկություն.....	Նոյ. 4, դեկ. 28
Խաղաղություն.....	Նոյ. 20
Ծերանալ.....	Դեկ.14
Ծառայել.....	Հոկ. 4, 24, նոյ. 17, 21, 26, դեկ. 1, 13
Կարեկցություն.....	Հոկ. 24, նոյ. 10
Կյանքի պայմաններ.....	Հոկ. 3, 16, դեկ. 31
Հավատք.....	Նոյ. 24
Հարաբերություններ.....	Հոկ. 23
Հեզություն.....	Նոյ. 2, 17, 25, դեկ. 1, 13
Հիվանդություն հաղթահարել.....	Դեկ. 6
Հնազանդություն.....	Հոկ. 8, դեկ. 2
Հոգեկան այլափոխություն.....	Հոկ. 31, դեկ. 9
Հոգեկան կարգապահություն.....	Հոկ. 10
Հոգևոր աճում.....	Հոկ. 1, դեկ. 7
Հոգու պտուղը.....	Դեկ. 17
Հույս.....	Դեկ. 18

Հուսահատություն.....	Նոյ. 7
Մեղք.....	Հոկ. 6, 18, նոյ. 18, 27
Մտահոգություն.....	Դեկ. 12
Նախանձություն.....	Նոյ. 26
Ներում.....	Հոկ. 6, 13, նոյ. 27
Շնորհակալություն.....	Նոյ. 22, 23, դեկ. 27, 30
Պաշտամունք.....	Հոկ. 3, 20, Նոյ. 12, 16, 22, դեկ. 27, 29
Սեր ուրիշների հանդեպ.....	Հոկ. 22, նոյ. 29, դեկ. 8
Սուրբ Հոգի.....	Հոկ. 17, 19, նոյ. 15
Ստեղծագործությունը հոգ տանել.....	Հոկ. 15
Ստեղծագործություն.....	Նոյ. 11, 19, 28, դեկ. 16, 29
Վախ.....	Հոկ. 9
Վիշտ.....	Նոյ. 3, դեկ. 18
Տնտեսավարություն և տալ.....	Նոյ. 13
Տանջանք.....	Հոկ. 5, 7, 29, Նոյ. 10
Փորձարկություններ.....	Հոկ. 25
Փրկություն.....	Հոկ. 18, 26, 31, նոյ. 15, 18, 24, դեկ. 11, 19, 21, 22, 24, 25
Քաջակերություն.....	Դեկ. 28
Քրիստոս՝ Աստվածություն.....	Նոյ. 1, 29
Քրիստոս՝ Ծնունդ.....	Դեկ. 3, 15, 19 - 25
Քրիստոս՝ կյանք.....	Նոյ. 29
Քրիստոս՝ մահ.....	Դեկ. 3, 15, 20, 21, 25
Քրիստոս՝ Մեսիա.....	Դեկ. 3, 15, 20, 21
Քրիստոս՝ Փրկիչ.....	Նոյ. 21, 30
Քրիստոսի համար ապրել.....	Նոյ. 16
Քրիստոսի նման ապրել.....	Նոյ. 8

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության

Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78

Էլեկտրոնային փոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75; 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....
